ՌԵՎԱԶ ՄԻՇՎԵԼԱՁԵ



ԳՐԱՑԵՐԵՆԻ ԹԱՐԳՄԱՆԵՑ ԱՆՇԱՀՍ ԲՈՍՆԱՁՅԱՆ

ԵՐԲ ԱՐՑՈՒՆՔՆ ԷԼ ՑԱՄԱՔԵՑ

ეროვნული
ბიბლიოთეკა

2017

ეროვნული
ბიბლიოთეკა

გამოიცა ლიტერატურულ-კულტურულ
საზოგადოებრივი გაერთიანება „კამურჯის“ (ხიდი)
ინიციატივით, წარმოშობით გიუმრიდან, ამჟამად
გერმანიაში მცხოვრები
რუზანა პოღოსიანის მხარდაჭერით.

წიგნს ვუძღვნი ჩემს მეზობელ,
მოძმე სომეხ ერს.
ავტორი

Գիրքը նվիրում եմ իմ դրկից,
եղբայրական հայ ժողովրդին:

ՀԵՂԻՆԱԿ

ეროვნული
ბიბლიოთეკა

რევაზ მიშველაძე

ცრემლიც რომ გათავდა

(ათი ნოველა)

*

ქართულიდან თარგმნა
ანაიდა ბოსტანჯიანმა

ՀԱՅ ԳՐԱՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿԻ ՏԱՐԻ

„კამურჯ“
თბილისი
2012

ეროვნული
ბიბლიოთეკა

ՌԵՎԱԶ ՄԻՇՎԵԼԱՁԵ

ԵՐԲ ԱՐՑՈՒՆՔՆ ԷԼ ՑԱՄԱՔԵՑ
(ՏԱՍ ՆՈՎԵԼ)

*

ՎՐԱՑԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿԻ ՏԱՐԻ
«ԿԱՄՈՒՐՋ»
ԹԲԻԼԻՍԻ
2012

საქართველოს პარლამენტის
ეროვნული ბიბლიოთეკა

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է **«ԿԱՄՈՒՐՋ»** ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ,
ԾՆՈՒՆԴՈՎ ԳՅՈՒՄՐԵՑԻ, ԱՅԺՄ ԳԵՐՄԱՆԱԲՆԱԿ
ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Կազմող, նախագծի և առաջաբանի հեղինակ, հրատարակիչ
ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

Խմբագիր՝
ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

Տասը նորավեպ ընդգրկող ներկա ժողովածուն արդի վրաց գրականության դասական, նշանավոր արձակագիր, ազգային-հասարակական գործիչ, Ռուսթավելու և Պետական մրցանակների դափնեկիր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վրաստանի գրողների միության փոխնախագահ Ռեվազ Միշվելաձեի 65-րդ, իսկ հայերեն երկրորդ գիրքն է և նշանավորում է հեղինակի ծննդյան 72-ամյակը:

ISBN 978-9941-0-3712-2
© ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, 2012

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՋԸ՝ ՄԻՇՏ ԴԱՐԻ ՈՒ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԶԱՐԿԵՐԱԿԻՆ

(դիմանկարի ուրվագիր)

Այսպես է ահա ստեղծագործում, շուրջ կես դար այսպես է ապրում, գրական-դասախոսական, ազգային-հասարակական բեղուն ու արգասալի գործունեություն ծավալում արդի վրաց գրականության, ի մասնավորի՝ վրացական արձակի ու հատկապես նորավեպի խոշորագույն դեմքերից մեկը՝ Ռեվազ Միշվելաձեն, որին իրավամբ կարելի է համարել վրացական նորավեպի վարպետաց վարպետ, ավելին՝ վրաց գրականության դասական:

Գրում եմ այս տողերը, որոնց մեջ չկա դույզն-ինչ չափազանցություն և մտքիս անեզրական ազատությամբ տեղափոխվում անցյալ դար, թեև ոչ այնքան հեռու մի ժամանակ (1970-80-ականները)... Միշվելաձեն նոր- նոր է պաշտպանել իր դոկտորական թեզը և բավականին հաճախ է գալիս «Մերանի» հեղինակավոր հրատարակչություն: Գալիս է ու շրջապատը լցնում իր՝ զուտ միշվելաձեական անմիջականությամբ, գրողի՝ իր տեսակին բնորոշ խոր մտածողությամբ, գորշ ու խռովահույզ օրերով իր մտահոգությամբ, դրանք բուժելու իր դեղատոմսերի «առաջարկմամբ» և ընդհակառակը՝ լուսավոր ու անխռով օրերով իր խանդավառությամբ, իր մտահղացած կամ արդեն առկա տրագիկոմիկ կերպարների մասին խորաթափանց որևէ զրույցով, իրեն հատուկ համով- հոտով, շատ հաճախ սատիրայի հասնող հումորով, վարակում բոլորիս...

Այդ օրերին նա ընդամենը 30-35 տարեկան էր....բայց... ամենաերիտասարդ գիտության դոկտորն էր թբիլիսյան գրական աշխարհում, և խորապես ազգային, միաժամանակ խորապես համամարդկային իր գաղափարներով, առողջ ու հարուստ, լայնահուն աշխարհընկալումով, հասարակության ինչպես ամենատարբեր խավերի, այնպես էլ, այսպես ասած աչքից ընկած, հաճախ նաև մոռացության մատնված հասարակ մարդու ճակատագիրը գրականություն բերելու իր վարպետությամբ, իր սրաթափանց ու քննադատող, քաղաքացիական ըմբոստ կենսադիրքով արդեն լայնորեն ճանաչված անուն էր նաև արտերկրում՝ թարգմանված աշխարհի բազմաթիվ լեզուներով, արժանացած բոլորեքյան համակրանքին:

Բոլոր ճշմարիտ գրողների ու արվեստագետների նման Միշվելաձեն ևս իր շուրջն էր համախմբում բոլորին (այսօր էլ.....): Իրենից անկախ: Ինքնաբերաբար: Լոկ իր խոսքի, իր անսովոր հարուստ դիտողականության, տեղին ու համարձակ, առողջ քննադատության, հոգուց ճառագող ներքին լույսի, օրերի դեսպանը լինելու, նաև՝ իր սրամտության, շնորհիվ: Այդ զարմանալիորեն մոգական ուժը ինձ էլ ձգեց: Սերնդակիցներիս նման ես էլ դարձա նրա ստեղծագործության երկրպագուն... Ու ժամանակ անց ծնվեց առաջին թարգանությունս Ռեվազ Միշվելաձեից՝ «Արղանչին» (տպագրվեց «Կամուրջում»...): Հրապարակի վրա հայտնվեցին նաև տաղանդավոր գրականագետ, վրացագետ, անզուգական թարգմանիչ, մեր լավագույն բարեկամ Հրաչյա Բայրամյանի թարգմանությունները Միշվելաձեից, որոնք ավելի ուշ, շնորհիվ Հայաստանի մշակույթի նախարարության ու ՀԳՄ, պիտի առանձին գիրք դառնային ու նվաճեին հայ ընթերցողի սերն ու հարգանքը

ևս, նրան պարգևեին Հ, ՀՀ Գորիս քաղաքի Ա. Բակունցի թանգարանի «Ակսել Բակունց» մեդալը(2007) , շնորհեին ՀՀ Գորիսի Պետական համալսարանի Պատվավոր դոկտորի կոչում, Գյումրու քաղաքապետարանի Ավետիք Իսահակյանի անվան «Վարպետ» ոսկյա կրծքանշանը (2010), ՀՀ վարչապետի Շնորհակալագիրը (2010թ.) Ու այս ամենն իրար հետ ՝ պիտի մկրտեին նրան որևէ թղթի վրա չգրված, բայց ինչպես Գաբրիել Սունդուկյանը կասեր, ժողովրդի «սրտի դավթարում» գրված՝ Հայ ժողովրդի ճշմարիտ բարեկամ՝ տիտղոսով:

.....Վրաց մեծ բանաստեղծ Մորիս Փոցխիշվիլու գրքերից մեկի վերնագիրն է «Սիրտը սիրտ է փնտրում... Իսկ սրտի լեզուն սերն է հանապազօրյա, հավերժական ու հավիտենական սերը.... Ազատ ու անսահման են այդ սիրո ճամփաները ՝ ոչ սահմանագիծ ու սահմանապահ, ոչ մաքսակետ ու անցակետ, ոչ անձնագիր ու կնիք... Միայն սեր, միայն հարգանք, խնդակցություն միայն ու, եթե պետք է ՝ ցավակցություն նաև... Այն երբ էր, երբ մեծն Շոթան խրատում էր՝ երբ նեղն է մարդ, այնժամ են պետք նրան եղբայր ու բարեկամ.... ու նաև՝

Երբ որ Լուսաստղն ու Լուսնկան միասին են շողում երկնից,
Ծով է լույսի...և լույսը՝ քիչ, երբ անջատվում են իրարից...

Միշվելաձեն ինքը՝ Ռուսթավելու և պետական մրցանակների դափնեկիր, Ռուսթավելու և հետագա դարաշրջանների վրաց գրականության այս գաղափարախոսության մեծ ու նշանավոր հետնորդների արժանի ժառանգորդ ու հետնորդ, այսօր, որպես ճշմարիտ սիրո ջատագով, անում է ամեն հնարավորը, որ մեր՝ հայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

և վրացի ժողովուրդները երբեք չանջատվեն միմյանցից ու սիրեն, սիրեն միմյանց:

....Ահա Թբիլիսիի հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում Թումանյանի հիշատակի ոգեկոչման օրն է....Միշվելաձեն այնտեղ է ու ոգևորված բարձրաձայնում է, որ Թումանյանի դաստերն այսօր իրեն ու իր ժողովրդին էլ են պետք, որ ինքը հպարտ է Թումանյանով...Ահա Թբիլիսիի Մեյդան հրապարակում Սայաթնովյան ավանդական Վարդատոնն է.... Միշվելաձեն անպայման այնտեղ է ու իր խոնարհումն է բերում թբիլիսցի մեծ հայ բանաստեղծին... Ահա Հայաստանից հայ գրողներ են ժամանել Թբիլիսի.. Օ՜, ինչ հաճո հյուրեր են...պիտի ամեն ինչ անել, որ գոհանան նրանք՝ իր բարեկամները....Ու ՎԳՄ նախագահ Մաղվալա Գոնաշվիլու հետ միասին իրար է անցնում և ՎԳՄ փոխնախագահ Ռեվազ Միշվելաձեն... Ահա Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում, դեկտեմբերի 7-ին Հայոց մեծ երկրաշարժի զոհերի հիշատակի հոգեհանգիստն է.. Ռ. Միշվելաձեն այնտեղ է ու մեզ հետ միասին «ողբում է մեր մեռելոց» ու «կոչում մեր ապրողաց»...Երևանում է հանդիպում, Ծաղկաձորում, Գյումրիում, Գորիսում, Իջևանում, Մոսկվայում, Աթենքում,.... Միշվելաձեն նորանոր հայ բարեկամներ է որոնում ու գտնում հավատարիմ մեծն Շոթայի՝ ով բարեկամ չի որոնում, նա ինքն է հենց իր թշնամին, հանճարեղ պատգամին: Քանզի լավ գիտի նա, որ բարեկամից հեռու մարդը հազար ցավ ու հառաչ կարող է ունենալ....Նա գիտի նաև, որ «բարեկամին մենակ թողնողն անզոր է իր մեղքը քավել».(Շ. Ռ.)... Այս սերն ու գիտակցումն էին ահա, որ 1988-ի հայոց մեծ երկրաշարժի օրերին նրան էլ բազմաթիվ վրացիների պես, Հայաստան տարան՝ իր եղբոր կողքին լինելու, նրան ցավակցելու ու սատարելու

... Ու հենց այստեղ էլ ծնվեց մի հրաշալի նովել՝ նվիրված երկրաշարժի թե զոհերի հիշատակին, թե փրկվածներին... Միշվելաձեն սիրում է հային ու Հայաստանը և համոզված է՝ պիտի վերստին հառնի փլատակներից իր դրկից հարևան Հայաստանն ու իր դրացի հայը ու ցանկացած վիշապ (1988-ը Վիշապի տարի էր...) պիտի անձնատուր լինի հայի կամքի և ուժի, նրա լավատեսության առաջ....Եվ «Երբ արցունքն էլ ցամաքեց» ներկա ժողովածուն, սիրելի ընթերցող, հենց այդ նորավեպի անունով էլ վերնագրեցի ես՝ Միշվելաձեի հոգեբուխ համաձայնությամբ... Եվ ոչ միայն այս նովելը, այլև գիրքն է նվիրված ընդհանրապես հայ ժողովրդին:

Մարդը մարդուն հավասար չէ, մեծ է ճամփան մարդուց մինչ մարդ՝ պատգամում է Ռուսթավելին....Մարդ լինել.. հեշտ բան հո չէ մարդ լինելը.. Թումանյանի հանճարեղ խոսքերն են.... Մարդ էլ կա. մարդ էլ՝ խորհրդածում է Պարույր Սևակը: Հեյ, քեզի մարդ ասողին՝ ցավով ասում է Հակոբ Մնձուրին: Իր հերոսներից մեկի՝ Տիտեի բերանով («Մարդ մարդիկ») Միշվելաձեն էլ քարոզում է՝ մարդ ենք , չէ....պիտի իրար օգնենք, չէ.... «Սատարելը միասին լինելն է, այ մարդ, դու հասկանում ես միասին լինելու հմայքը....թող մենակ թշնամիդ ասի՝ ինձ ինչ ուրիշի ցավը»: Նույն Տիտեն, երբ բախվում է այն ամենի հետ, ինչը մարդուն շեղում է իր բնական էությունից, ցավով կիսվում է ընկերների հետ. « Դե, ասեք, հըլը մի ասեք, գելն ավելի լավ չէ, քան էսպիսի մարդը: Քանի՞ անգամ եմ տեսել ձմռան օրերին սոված գելերը միասին հավաքվում ու ոռնում են: Սոված են, ախր, այ մարդ, ստամոքսները տանջում է, ու իրար են օգնում, իրար տեսնել չեն ուզում, բայց միասին են ոռնում....»: Կամ էլ՝ Մելիտոնը՝ «Իսկ դու գիտես, թե ինչ է նշանակում, երբ դու ես մարդու միակ հույսը, երբ նա քեզնից էն կողմ ուրիշ

ԵՐԻՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ճար ու ճամփա չունի» («Արղանչին»): Ահա Միշվելաձեի մարդաճանաչողության անկյունաքարը՝ այնքան հար ու հարիր ազնվական ու մեծահոգի, մարդասեր ու մարդամոտ, անանձնական ուրախությամբ ու ցավով ապրող վրացու հոգեբանությանը, ավանդական սրբություններից երբեք չնահանջող այն վրացու, որը դարեր շարունակ ապրել է հավատարիմ իր նախնյաց բազմաթիվ իմաստություններին նաև ու այս պարագայում այս երկուսին հատկապես՝ մարդը մարդուն բալասան է, մարդը մարդ լինի, թե չէ գլխարկ սունկի գլխին էլ կա....

...Միշվելաձեի ստեղծագործության առանցքում ժամանակի (ինչի հանդեպ նա ունի բացառիկ սուր զգացողություն), իրադարձությունների, այդ իրադարձությունները «ղեկավարող», «շարժող» մարդու ու մարդասիրության հիմնախնդիրներն են, հոգևոր, տնտեսական, սոցիալական-քաղաքական ամենատարբեր մարտահրավերները: Հմուտ մարդաբանի ու քննախույզ հոգեբանի փորձառությամբ, նա թափանցում է մարդու հոգու խորքերը և միկրոսկոպային զննման ենթարկում նրա կառուցվածքը, նժարում չարն ու բարին ու դրանք հանում ջրի երես՝ ընթերցողին տանելով դեպի եզրահանգում՝ լավն ու վատը տարորոշող ախտորոշում:

Քննախույզ հայացք ունի Միշվելաձեն, ու այդ հայացքը առկա է նրա՝ առանց բացառության բոլոր գործերում, հետևաբար և նրա ստեղծագործության մի շատ փոքրիկ մասը կազմող այս գրքի բոլոր 10 նովելներում, որոնք տարբեր ժամանակներ են ներկայացնում, (իսկ նրա ստեղծագործությունն ընդհանրապես ընդգրկում է դեռևս անցյալ դարի 20-30-ական թվականներից մինչև ներկա օրերը և այդ օրերում ապրող մարդուն), և այդ

տարբեր ժամանակների մարդու հոգեբանության վրա օրերի ներգործությունը: Նա մարդու մեջ փնտրում է արիություն, բարություն, մեծահոգություն՝ անկախ նրանից, թե որ ժամանակաշրջանի ծնունդ է այդ մարդը: Մարդուն, խորհրդային կաղապարներից դեռևս լիովին չազատագրված, ռուսական կայսրության լուծը թեև թոթափած, բայց հին բարդույթներից դեռևս լիովին չազատագրված, հնի մնացուկների շորշոփները իր հոգեբանության մեջ պահպանած մարդուն նա դիտում է ժամանակի, արդի կեցության մեջ, դրա բազմակողմ իրադարձությունների խաչմերուկում՝ հայտնաբերելով նրա ներաշխարհի բազմաթիվ նրբերանգները:

Միշվելաձեն իրականությունը ասես պատճենում է. նա ասես նկարիչ լինի, այնքան տեսանելի ու զգայական են նրա նկարագրությունները: Այս իմաստով բավականին մեծ է և Միշվելաձեի միանգամայն ինքնատիպ գրելաոճի դերը՝ ժողովրդական խոսելաոճ, բարբառ, ժարգոն, դարձվածքներ (այս ամենի շռայլ օգտագործում): Թեմատիկ առումով ևս շահեկան է Միշվելաձեի գրական աշխարհը՝ դարաշրջանի սոցիալական իրականության բազմակողմ խնդիրների բացահայտում ու լուսաբանում, («Մարդ մարդիկ», «Ո՞վ է ինձ փնտրում»)ազգային հիմնախնդիրների առաջքաշում, սիրո ու հայրենասիրության քարոզաբանություն («Լուիզա», «Սիրո դատապարտվածները», պատմական դեպքերի ու դեմքերի վերհանում, մշակութային խնդիրների արծարծում: (սեփական ժողովրդի գրանիտի պես ամուր մշակույթ. ինչով անգամ օտարերկրացին է հիանում («Ամերիկացի փեսան»): Եվ, որ ամենաէականն է, նա այս ամենի սոսկ արձանագրողը չէ: Կենաց այս խճանկարի մեջ նա զտում, ընտրում է ամենահետաքրքիրը, ամենանշանակալիցը՝

երբեք չշեղվելով իր քաղաքացիական կենսադիրքից՝ եթե պետք է, համարձակ քննադատելով, բայց ոչ չարությամբ, այլ խաթարվածը շտկելու, անառողջը առողջ տեսնելու միտումով: Նրա հոգու պրիզմայով են անցնում իր ազգի, իր ժողովրդի, իր հայրենիք Վրաստանի իրադարձությունները՝ ընդհուպ արտագաղթ ու պատերազմ Ռուսաստանի հետ, Վրաստանի տարածքային ամբողջականության խախտում, ժամանակի այլևայլ մարտահրավերներ և ի վերջո երևան են բերում մաքուր, ազնվական, առաքինի, հայրենիքի սիրով առլեցուն, նրա ճակատագրով մտահոգ վրացի մարդու հոգին ու խառնվածքը ու ասում բոլորիս ահա, տեսեք, այսպիսին պիտի լինի իսկական վրացին՝ իր հայրենիքով հպարտ, իր հայրենիքով հիացած, նրա սքանչելի բնաշխարհին սիրահարված, որին ևս, ինչպես անգամ օտարերկրացիներին, իր երկիրը «դրախտ է հիշեցնում»(«Ամերիկացի փեսան»):

Միշվելաձեի ստեղծագործությունը՝ շոշափած իր բոլոր թեմաներով հանդերձ՝ սեր, բարեկամություն, ընտանիք, պատվախնդրություն, պատերազմ, մարդկային հարաբերություններ, նրա կենսակերպն է նաև, իսկ ստեղծագործության այս տեսակը, երբ նույնանում են գիրն ու գրողի դեմք-դիմագիծը, միշտ առանձնահատուկ է և լի կենսական ներուժով, հետևաբար՝ միշտ ցանկալի ընթերցողի համար: Այստեղ ահա անհնար է պարզապես չհիշել ու չխոնարհվել նրա անխարդախ, անդավաճան ու բոլորանվեր հայրենասիրության առաջ. այդ նա՝ Ռեվազ Միշվելաձեն էր, որ աբխազական պատերազմի օրերին հանուն հայրենիքի զոհաբերեց իր միակ որդուն՝ 22-ամյա Արչիլին(լույս իջնի նրա մատաղ շիրիմին), որին դաստիարակել էր հանուն հայրենյաց սեփական

կյանքն անգամ զոհաբերելու՝ եզակիներին միայն հասու գիտակցությամբ:

Եվ սակայն, ներկայացնել թեկուզ համառոտակի Ռեվազ Միշվելաձեին ու իր վրաց գրականության մեջ տարբերակվող նրա գիրը ու չավելացնել այն, որ նրա մասին անհաշիվ, շատ է գրվել ու բազմաթիվ թեզեր են պաշտպանվել նրա ստեղծագործության որոնումներում, թերևս սխալ կլինի: Իսկ նրա մասին գրել են այնպիսի գրական մեծություններ, ինչպիսիք են Իրակլի Աբաշիձեն, Շոթա Նիշնիանիձեն, Գիորգի Նատրոշվիլին, Ռեվազ Ջափարիձեն, Միխեիլ Քվլիվիձեն, Ճաբուա Ամիրեջիբին, Անա Կալանդաձեն, Օտիա Իոսելիանին, Ռեզո Չխեիձեն, Յուրի Բոգոմոլովը, Սոսո Սիգուան....Ավելացնենք, որ ի ուրախություն մեր, նրա մասին գրվել է նաև հայ գրականագիտության մեջ (Լ. Անանյան, Հ.Բայրամյան....):

...Եվ ահա թեկուզև այս ոչ շատ ծավալուն, ընդամենը մուտք-նախաբանի կարգավիճակ ունեցող խոսքից հետո, գուցե քեզ արդեն զարմանալի չթվա, սիրելի՛ ընթերցող, որ Երևանում, անվանի արձակագրի 65-ամյակին նվիրված, Հրաչյա Բայրամյանի թարգմանությամբ լույս տեսած ու լայն արձագանք գտած «Գյուղի Մադոննան» ժողովածուից (խմբ.Լևոն Անանյան,2006թ.ՀԳՄ) հետո, մենք որոշեցինք այս անգամ էլ գրողի 72- ամյակը շնորհավորել այստեղ՝ իր սիրելի հայրենիքում, իմ կողմից հիմնադրված «Թարգմանական գրականության մատենաշարի» շրջանակներում, հին ու անկաշառ բարեկամի՝ իմ մտահղացմամբ և իրավունքով՝ հրատարակելով այս ժողովածուն:

...Սրտանց շնորհավորում եմ վրացի նշանավոր գրչեղբորս, մաղթում նրան քաջառողջություն, նորանոր

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ

վերելքներ իր մեծ գրականության ճանապարհին՝ ի փառս վրաց գրականության ու մշակույթի, ի փառս մեր ժողովուրդների դարավոր բարեկամության խորացման ու զարգացման, և ավելորդ չեմ համարում ևս մեկ անգամ ասելու, որ մենք՝ հայն ու վրացին, այ՛ո, արնակից երկվորյակներ ենք, նույն արտի երկու խոփերը, և եղբայրության երկնքից մեզ է ժպտում մեկ Աստված... Մեզ՝ Հայոս- Քարթլոս եղբայրների շառավիղներիս...

Շնորհավոր հոբելյանդ, սիրելի՛ վրացի գրչեղբայրս.....Քեզ նվեր՝ մեսրոպատառ հայերենով վրացերեն գիրքդ: Առավել ևս, որ այս տարի Հայ գրատպագրության 500-ամյակն է:

Միշտ քո՝ Անահիտ հայ գրչաքույրդ:

ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

Բանաստեղծուհի,
թարգմանիչ,«Մերանիի» հայերեն
հրատարակությունների խմբագիր,
Վ.Փշավելայի մրցանակի դափնեկիր,
Պատվո շքանշանակիր,
Վրաց մշակույթի դեսպան,
Մովսես Խորենացի մեդալակիր

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ

Ամեն անգամ, հայ ընթերցողի հետ հանդիպելիս, ես հուզվում եմ: Եվ դա պայմանավորված է մի քանի պատճառներով: Նախ՝ այն սերն ու մղումը, որ ես տածում եմ հայ մեծ գրականության հանդեպ կամ այլ կերպ ասած՝ ակնածանքի ու խոնարհումի միանգամայն բնական զգացումը: Մյուսը, ինչն այնքան էլ հազվադեպ երևույթ չէ իմ կյանքում, իմ շատ սիրելի հայ հարևանների մասին գրելու առիթներն են, երբ ակամա հարց եմ տալիս ինքզինքս՝ կկարողանամ արդյոք քո համեստ գրչով այնպես գրել, որ դուր գա նրան ու սիրտը թափանցի:

Հայ ընթերցողի հետ առանձին գրքով արդեն երկրորդ անգամ եմ հանդիպում: Առաջին հանդիպումն ինձ արդարացրեց, քանզի այդ անգամ ուղեկիցս փայլուն թարգմանիչ Հրաչյա Բայրամյանն էր: Հայերեն առաջին գրքիս հաջողությունն ինձ համարձակություն ներշնչեց, և ահա այժմ ձեր առջև վրաց-հայկական բարեկամությանն ինքնամոռաց նվիրված մի հրաշալի տիկնոջ, իմ թանկագին բարեկամուհի Անահիդա (մենք Անահիտին ասում ենք Անահիդա...) Բոստանջյանի կողմից թարգմանված գիրքն է, որը կոչվում է «Երբ արցունքն էլ ցամաքեց»: Ըստ որում, 1988 թվականի Հայոց մեերկրաշարժի ծանր տպավորության

տակ, հայ ժողովրդի հանդեպ իմ անթաքույց սիրով գրված ու ողբերգության անհաշիվ զոհերին, նաև երկրաշարժի մահակուլ ճիրաններից փրկվածներին նվիրված այս նովելի վերնագրով ամբողջ գիրքը վերնագրելու մտահղացումն էլ, հուրախություն իմ, Անահիդայինն է:

Մնացածն ինքներդ կտեսնեք:

Անպայման ուզում եմ ավելացնել, որ խորապես շնորհակալ եմ տիկին Անահիտ Բոստանջյանին՝ այս գրքի թարգմանության և հրատարակության գործում նրա յուրաքանչյուր ջանքի ու ներդրումի համար: Շնորհակալ եմ և բոլոր նրանց, ովքեր կկարդան ու աչքի կանցկացնեն այս գիրքը:

Ռեվազ Միշվելաձե

Ռուսթավելու և Պետական մրցանակների դափնեկիր

28.10.2011թվական

საქართველოს ეროვნული ბიბლიოთეკა

ԵՐԲ ԱՐՅՈՒՆՔՆ ԷԼ ՅԱՄԱՔԵՑ...

Նվիրում եմ 1988-ի Հայոց մեծ երկրաշարժի
զոհերին ու երկրաշարժից փրկվածներին

Տասնյոթերորդ օր:
-Պարու՞յր....
-Հա՛ ջան...
-Ողջ ե՞ս:...
- Ոնց որ թե..
-Չերգե՞նք...
-Չէ՛...չեմ ուզում:
-Ես էլ չեմ ուզում: Զանձրացա՛...
-Երազ հո չե՞ս տեսել...
-Չէ՛, իսկ դու՞..
-Երազ էլ չկա՛... Երազներն էլ վերջացան...
-Տեսնես հիմա դրսում ցերե՞կ է, թե՞ գիշեր...
-Ի՞նչ նշանակություն...
- Մի՞թե ամեն ինչ վերջացավ արդեն...
-Ամե՛ն ինչ...
-Տեսնես թթու վարունգի հյութ մսացե՞լ է...
-Բա՛ցարձակապես...
-Ուրեմն մեռնում ենք , հա՞, Պարույր ջան...
-Էդպե՛ս է ստացվում ..
. Մեռնելուց առաջ չերգե՞նք...

საქართველოს პარლამენტის ეროვნული ბიბლიოთეკა

-Միտք չունի, շա՛տ ենք երգել...

-Պարո՛ւյր..

- Ի՞նչ ...

- Չէի ուզի մեռնել՝ առանց իմանալու, թե ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց ...

-Քանի՞ անգամ ասեմ, որ աշխարհը փուլ է եկել...

-Գուցե միայն մեր տու՞նն է փլվել...

-Ասի չէ՞, որ եթե մենակ մեր տունը լիներ փլված, մեզ անպայման կգտնեին...

- Բա հիմա ի՞նչ անենք...

-Զենդ արդեն ջղերիս է ազդում: Խելոք պառկի ու սուս կաց, վե՛րջ: Ինչքան շատ թպրտաս, մահն էնքան դժվար կլինի...

-Լավ, սուս կմնամ.... Պարու՛յր...

-Հը՞..

-Լացել եմ ուզում, արցունք էլ չունեմ....ցամաքե՛ց....,չկա՛...

- Լացի վախտ գտա՞ր: Կաշիս ու ոսկորս է մնացել..

- Դեռ չէի ուզենա մեռնել:

- Բա ե՞րբ կուզենայիր...

-Չգիտեմ...

- Պառկի՛, պառկի՛...հանգիստ պառկի, գուցե քնենք...մի կերպ..

- Էս անգամ որ քնենք, լա՛վ իմանաս, էլ չե՛նք զարթնի:

- Ու լավ էլ կլինի... Ներսս ուղղակի վառվում է, թուքս բերանիս մեջ չորանում: Ջղերին որ նայենք, դժվար

կմեռնենք, լավ իմանաս: Վերջին ժամերը չարչարանքի ժամեր կլինեն...

- Կարծում ես, քնի մեջ էլ կվերանա՞նք....

- Պիտի ձգտենք:

- Իսկ եթե կճուճը կոտրե՞նք: Երեկ էլ էի ասում, չէ՞:

-Չէ՛, չէ՛... Նախ՝ դրա ուժն էլ չունեմ, հետո էլ... ես երակ կտրողը չեմ, ի վիճակի չեմ....

-Ամեն ինչ միանգամից կվերջանա, Պարո՛ւյր ջան...

-Չէ՛, չէ., մի՛ հոգնեցրու, ձանձրացել եմ...

- Բա որ հանկարծ դու ավելի շուտ մեռնե՞ս...

-Ի՛նչ նշանակություն...

-Պարու՛յր, դու որ ինձնից շուտ մեռնես, ես շատ կվախենամ: Մենակ չթողնես ինձ, խնդրում եմ... մարդ չե՞ս....

- Մի՛ լաց, գիժ հո չե՞ս...Տո՛ւր ձեռքդ, ա՛յ, էսպես...էսպես ձեռք-ձեռքի էլ մեռնենք... միասին, իրար հետ...

-Դե, ուրեմ, գնացինք, Պարույր ջան: Գուցե իրոք ինչ-որ բան գոյություն ունի էն աշխարհում..

- Ոչ թե գուցե, այլ իրո՛ք գոյություն ունի...

Մեծ, սահմռկեցուցիչ լռություն իջավ: Ձնահյուսքի պես իջավ այս լռությունը: Վերջին լռությունը, ամենասարսափելին ու ամենադավադիրը: Եվ հավերժական խավարն ի վերջո իրեն ենթարկեց այս երկու տառապյալներին:

Իսկ ի՞նչ էր կատարվել: 1988 թվականի դեկտեմբերի 7-ին Պարույր Պողոսյանն իր դրկից հարևան Հրաչյա

Մկրտչյանին խնդրեց նկուղ իջնել՝ չուգունի վառարանը վերև բարձրացնելու համար: Լենինականում ձմռան ցրտերն արդեն ընկել էին: Թույլ ջերմություն արձակող ռադիատորի հույսին մնալ չի լինի, անցյալ տարվա պես փայտի վառարան կդնեմ ու յոլա կգնանք՝ ասաց Պարույրն, ու էսպես խոսելով հարևաններն իջան նկուղ, վառեցին լույսը: Պարույրը փոշու մեջ կորած վառարանը փալասով սրբեց, և, այն է՝ պիտի դեպի դուռը գնային, երբ....

Մի որոշ ժամանակ լույսը վառ մնաց ու հետո միայն հանգավ: Քանի դեռ լույս էր, փորձեցին հրել նկուղի երկաթե դուռը, բայց շարժել անգամ չկարողացան, դուռը դրսից երկաթբետոնի սալով էր պատնեշված:

Խավարի մեջ, գիշեր-ցերեկ մահվան դեմ էին պայքարում ողջ-ողջ թաղված հարևանները:Ապխտած խոզի մսի, սուջուխի, կոմպոտի, թթու վարունգի պաշարը առավելագույնս խնայեցին: Հետո բան չմնաց, ամեն ինչ վերջացավ: Սովը, ցուրտը և մարդկային աղտոտության հեղձուցիչ հոտը իրենցն արեցին: Սովից սպառիսպուռ հյուծված՝ նրանք բերաններն առան թթու վարունգի հյութի վերջին կաթիլները, ցրտից կուչ էին եկել, և անգամ մարմիններին յոթծալ փաթաթած բրեզենտի կտորներն ու ջեռուցման խողովակաշարի արհեստական բամբակը (նկուղով անցնող կենտրոնական խողովակից առանձնացրին) այլևս չէր տաքացնում նրանց... Իսկ այս զրույցը նրանց միջև տեղի էր ունենում երկրաշարժի

17-րդ օրը: Եվ այս մասին միայն մենք գիտեինք, դատապարտյալներն օրերի հաշիվը վաղուց էին կորցրել:

.. Ողբերգության 18-րդ օրը երկրաշարժից ավերված քաղաքում բուլդոզերը կանգ առավ նկուղի դռան մոտ: Ճիշտ է, հրաման կար հողին հավասարեցնել տան հիմքը, քանզի ողջ-ողջ թաղվածների քաղաքում կյանքի նշույլ իսկ չէր երևում, սակայն բուլդոզերի վարորդն, այնուամենայնիվ կանգնեցրեց մեքենան ու ներս նայեց դռան ճեղքից:

.. Նույն երեկոյան հեռուստատեսությունն ամբողջ աշխարհին ավետեց, որ 17 օր անց մահվան երախից ևս երկու մարդու կյանք հաջողվեց փրկել:

Սա երևի պարտված վիշապի վերջին ողորմածությունն էր:

Հզոր է ու համառ է այս կյանքը, բարեկա՛մս: Ասֆալտը պատռող խոտի կանաչ ծիլը տեսած կլինես երևի.... Կյանքի շունչը բետոնե գերեզմանն էլ երբեմն կարող է տեղաշարժել ու վեր բարձրանալ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐՂԸՆՁԻՆ

-Պելո մորքու՛ր.. Մելիտոն քեռին տա՞նն է...

-Ո՞վ է...

-Ես եմ՝ Օմարի՛ն, Սերգո Թադումաձեի տղեն...

Պելոն ոչ մի կերպ չկարողացավ հիշել Սերգոյին, առավել եւս՝ Օմարիին: Բայց, այնուամենայնիվ, վերարկուն ուսելով՝ իջավ բակ ու բացեց դարպասը: Նրա առջեւ կանգնած էր ցածրահասակ ու նիհարակազմ մի երիտասարդ:

-Խեր ըլնի, որդի՛, ի՞նչ կա-չկա էս կեսգիշերին:

- Մելիտոն քեռին տանն է՞,- տխուր-տխուր հարցրեց հյուրը:

-Տանն է, որդի՛, տանն է, բա որտե՞ղ պետք է լինի...

-Քնա՞ծ է:

-Երեւի... Դե, արդեն ժամը մեկը կլինի: Ես մի քիչ գործ ունեի, թե չէ էս ժամին ես էլ եմ երազի մեջ լինում:

- Ո՞նց է, Մելիտոն քեռին լա՞վ է...

-Դե... ո՞նց ասեմ... ընդհանրապես... իսկ էնպես... է՛հ, որդի, մեր ի՞նչ լավ լինելու ժամանակն է: Ապրում ենք, էլի՛... հենց էն է՝ մի կերպ քարշ ենք տալիս մեր օրերը... ո՞նց պիտի լինենք:

-Վռազ գործ կա, Պելո՛ մորքուր:

-Ի՞նչ է պատահել,- իբր թե զարմացած՝ հարցրեց Պելոն, մինչդեռ հիանալի գիտեր, թե ինչո՞ւ էր եկել գիշերային հյուրը: Մելիտոն Կուխիանիձեին հաճախ էին անհանգստացնում նման «վռազ» գործերով, եւ արղանչու կինն առաջին անգամը չէր, որ ստիպված էր լինում քաղաքավարի մերժմամբ ճապարհել նման հյուրերին:

Ութսունն արդեն բոլորել էր քաղաքի առաջնակարգ արղանչի Մելիտոնը: Եվ արդեն բավական ժամանակ էր, ինչ քեֆերի ու հարսանիքների ժամանակ չէր ծորում նրա արղանի ձայնը: Հինգ տարի կլիներ, որ Մելիտոնը չէր պտտեցնում արղանի կոթը: Լավ արղան էր: Հատուկ պատվերով շինել էին Օդեսայում, 20-րդ դարի տասական թվականներին: Հիմա նա վայելում էր իր վաստակած հանգիստը, եւ ինչպես օջախի թանկագին մասունք՝ փառահեղորեն բազմել էր հյուրասենյակի ամենապատվավոր տեղում՝ թախտի վրա՝ Պելոյի ասեղնագործած մետաքսե շղարշով ծածկած:

Ծերացել է Մելիտոնը: Նրա ծնկներն այլեւս չեն դիմանում արղանի ծանրությանը, իսկ հոդատապից վնասված ձեռքերը չեն կարող պտտել արղանի կոթը: Ծեր արղանչին շատ էր տխրում, երբ մերժում էր հրավիրողներին (նա երբեք նրանց հաճախորդ չէր անվանում, բայց ուրիշ ելք չուներ: «Կգայի, բայց ի՞նչ անեմ, է՛, ախր, վախում եմ՝ արղանը ձեռքիս մեռնեմ, ձեր հացն էլ հարամ անեմ: Ի՞նչ է, ուզում եք մարդ մեռնի՞: Թե ուզում

եք, խնդրե՛մ, գամ: Ես ու իմ Աստվածը, ուժս չի հերիքում, թե չէ դրանից լավ տեղ պիտի գնա՞մ, ուրախության, քեֆի սեղանի եք կանչում, սուգ ու շիվանի հո չե՞ք տանում,- իր դուռը եկածին ասում-բացատրում էր Մելիտոնը եւ ուղեկցում մինչեւ դարպաս՝ շարունակելով ներողություն խնդրել ու արդարանալ:

-Պսակվում եմ, Պելո՛ մորքուր,- վերջապես խոսեց գիշերային հյուրն ու հակեց գլուխը:

-Ե՞րբ,- հարցրեց Պելոն, բայց, եթե դիմացինը խորաթափանց զրուցակից լիներ, ապա իսկույն գլխի կընկներ, որ հարցնողին բնավ էլ չի հետաքրքրում հարսանիքի օրն ու ժամը:

-Հիմա... ա՛յ, հենց հիմա հարսանիքս է:

-Աստված օրհնի, որդի՛, բախտավոր լինեք,- հյուրին բարեմաղթեց Պելոն՝ շարունակելով քրքրել հիշողության մանվածը՝ որոշելու, թե ո՞վ է կամ որտե՞ղ է ապրում այդ Սերգո Թադումաձե կոչեցյալը:

Հյուրն ասես կռահեց պառավի միտքը.

-Սերգո Թադումաձեն ֆինտեսուչ էր, լսած կլինեք: Ա՛յ, ես հենց նրա տղան եմ՝ Օմարին: Մի շաբաթ առաջ եմ զորացրվել բանակից ու հիմա ամուսնանում եմ...

-Ո՞նց չէ, բալես, բա չե՞մ ճանաչում, խելքս հո քամուն չե՞մ տվել,-վրա տվեց Պելոն, ուրախացած, որ ի վերջո իմացավ հյուրի ով լինելը: -Հերդ էնքա՛ն է էկել մեր տո՛ն: Էլի աշխատում է, հա՞...

Օմարին, իհարկե, չափազանց շտապում էր, բայց

եւ այնպես, չէր զլանում բավարարել տիկին Պելոյի հետաքրքրասիրությունը:

-Ո՛չ, հայրս արդեն վաղուց թոշակի է անցել: Պելո մորքո՞ւր...մի բան հարցնեմ էլի... արղանը հո չե՞ք ծախել:

-Ասում ես, հիմա հարսանի՞քդ է, հա՞,- խոսքը կտուրը գցեց Պելոն,- լավ աղջի՞կ է հարսնացուդ, ձեր օջախին հարմար: Դե, լավը կլինի, բա լավը չի՞ լինի, թե՞ չէ...

-Վարդեն Գվանցելաձեի աղջիկն է, ջրմուղ կոյուղու Վարդենի, երեւի լսած կլինեք... Դպրոցում նույն դասարանումն էինք սովորում...

-Լավ է, որդի՛, շատ լավ ... Բա ո՞նց...ամեն ինչ իր ժամանակին պիտի լինի...Երկաթը տաք-տաք կծեծեն, բա ո՞նց,- հատ-հատ արտաբերելով բառերը, խոսում էր քալբատոնո Պելոն՝ այս անգամ արդեն ճգնելով հիշել, թե ո՞վ է Վարդեն Գվանցելաձեն:

-Պելո՛ մորքուր, ցավդ տանեմ, արի մի կերպ արթնացնենք էլի՛ Մելիտոն քեռուն...,

-Ընչի՞, Պելո մորքուրը չարդ տանի,- մի վերջին անգամ եւս խոսքը կտուրը գցել փորձեց Պելոն: Բայց ինքն էլ զգաց, որ չէ, այս անգամ արդեն տեղին չինչեց իր հարցը: Տվյալ դեպքում սպասվելիք զրույցն անխուսափելի էր...

-Ախր, հարսանի՛քս... թող գա հետս, գնանք էլի՛, հուրհավիտյան երախտապարտ կմնամ իրեն:

-Ո՞վ գա, ա՛յ բալա..

- Մելիտոն քեռին, էլի՛... Գիտեմ, ինձ ասացին, որ նա էլ ոչ մի տեղ չի գնում: Ես տաքսի կվարձեմ, իմ ձեռքով

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԱԿԱՆ

կտանեմ արդանը, միայն թե գա: Շատ չենք նեղի... մեկ-երկու պեսնյա... Ավել պետք չէ... Ախր, ո՞նց ասեմ, Պելո մորքուր, դե՛, շրջապատ կա, մարդիկ կան, ծանոթներ կան... Պատվի հարց է, անունի հարց է....կասեն՝ա՛յ, տեսե՛ք, Օմարիի հարսանիքին Մելիտոն Կուխիանիձեն էր նվագում: Մի անգամ, ընդամենը մի՛ անգամ, աղաչում եմ, Պելո մորքուր, շատ չեմ տանջի...

-Սաղ-սաղ մի՛ թաղիր ինձ, որդի՛, էդ ի՞նչ ասիր... Խեղճ հալիվորը հազիվ է կանգնում ոտքի վրա , բա նա ո՞նց կարող է էս կեսգիշերին դուրս գալ, հլա մի բան էլ լուսացնել: Չէ՛, չէ՛, բալես...Մելիտոնն էս ժամին թե հարսնիք գնաց, քահանան իսկի հաղորդություն տալ էլ չի հասցնի:

-Բա հիմա ես ի՞նչ անեմ,- թախծեց հյուրը:

-Եթե կարողանար գալ, ինչո՞ւ պիտի մերժեի, ախր... Բա ամոթ չի՞ հարեւանին մերժել (թեև Պելոն անմիջապես մտածեց, թե հարեւանս ո՞րն է, երկու կիլոմետր հեռու ապրող մարդն՝ ի՞նչ հարեւան, ու՞մ հետ ասես չի գնացել Մելիտոնը, պատահել է նաեւ, որ հինգ օր անընդհատ արդան է պտտեցրել : Հե՛յ գիդի, հե՛յ...Չէ՛, ուրի՛շ օրեր էին, ուրի՛շ... առողջությունը տեղը, հնարավորությունները շատ...

-Դե, լավ, էդ դեպքում հենց էնպես թող գա, միայն արդանը բերի, թող գա ու չնվագի. Պե՛լո մորքուր, -ջուրն ընկածի պես ձեռը փրփուրներին գցեց Օմարին:

-Չէ՛, որդի՛, բան դուրս չի գա, չի կարող գալ, էս

գործը գլուխ չի գա: Ախր, մի գիշերվա մեջ երեք անգամ վալերիանի կաթիլներ եմ տալիս, է՛... շունչը կտրվում է, ի՞նչ անեմ, էդպես է: Մեր կողմից ներողություն խնդրիր հորդ, ո՛րդի ջան...

-Չէ՛,ի՛նչ եք ասում, Պե՛լո մորքուր,- գլուխը հակեց Օմարին:

-Ախր, ոնց որ տեսնում եմ, չես հավատում: Ուրիշներն էլ են էսպես, չեն հավատում... Նրանք էլ քեզ նման: Ասում են՝ հենց էնպես թող գա, միայն թե գա: Բայց ախր ո՞նց... խեղճ հալիվորն արդեն 5-6 տարի կլինի, տանից դուրս չի եկել.... Լավ հիշում եմ՝ վերջին անգամ Լոնգինոզ Մեձվելիայի աղջկա հարսնիքին գնաց... Էն է՛լ...դու ասա՝ ո՞նց... Էրեսի՛ զոռով.... Ու վա՛յ էն գնալուն, դրանից հետո էրկու շաբաթ չէր կարողանում ոտքի վրա կանգնել: Իսկ Լոնգինոզի թոռը հրես ուր-որ է դպրոց պիտի գնա:

-Էհ, ի՞նչ արած, Պե՛լո մորքուր, ղսմաթ չունեմ, պրծավ- գնաց:

-Լավ, բալես... թե էդքան սրտանց ես ուզում, ձեն կտամ, համա լավ իմանաս, ինքն էլ նույն բանը պիտի ասի ...:

-Չէ՛, չէ՛, Պելո՛ մորքուր, կարիք չկա: Վերջիվերջո հարսանիքիս պատճառով մարդուն հո մահվան դուռը չե՞նք գցելու: Լավ, ի՞նչ արած, լավ կացեք,- ընկճված ձայնով ասաց Օմարին, մի որոշ ժամանակ կանգնած տեղում շուռումուռ եկավ, կարծես մտմտում էր էլի մի բան ասել, բայց հետո կտրուկ ու վճռական շրջվեց եւ մթության մեջ, գլխահակ ու դանդաղ, առաջ շարժվեց:

-Սիրտդ շուտ մի՛ բեր, որդի՛, հորդ ասա ներող լինի: Է՝հ, ի՞նչ արած, սրան ծերություն կասեն…,- կարկուտի պես տարափում էր Պելոն, չնայած նրա խոսքերն արդեն չէին հասնում փողոց դուրս եկած հյուրին:

Պելոն մի պահ կանգ առավ բաց դարպասի մոտ, ապա հանգցրեց դարպասի եւ սանդուղքի միջեւ ընկած փոքրիկ ծառուղու լամպարն ու բարձրացավ սանդուղքն ի վեր:

Ուշ ամռան զով գիշեր էր, տարվա այն եղանակը , երբ միայն սավանին ապավինած քնած մարդուն գիշերվա ցուրտն արթնացնում եւ ստիպում է քնաթաթախ ձեռքերով խարխափելով շուրջը՝ վերմակ փնտրել, բայց չգտնելով այն, նորից կուլուլվել Աստծո կամեցածի մեջ:

Մերթընդմերթ պատշգամբին էր ընկնում -տարածվում փողոցով սլացող մեքենաների լույսը, որ մի ակնթարթում ներխուժում եւ կայծակնային արագությամբ մթության քողից դուրս էր բերում սենյակները, պատի մեջ, հնաոճ գերմանական շղթայավոր ժամացույցի, կարի մեքենայի եւ ծաղիկներով լի ծաղկամանի ստվերապարը, իսկ պահ անց ամեն ինչ խաղաղվում էր: Գիշերային լռությունը երբեմն խախտում էր շների հաչոց-կաղկանձը, որին անմիջապես հաջորդում էր տուն շտապող անցորդների ոտքերի քստքստոցը: Հետաքրքիրն այն է, որ ցերեկը, մինչեւ ուշադրությունդ լավ չլարես, երբեք չես լսի փողոցային երթեւեկության ձայները: Բայց ահա տեսե՛ք, թե գիշերն ինչպես է իրար հյուսում մինչեւ անգամ ոտնաթաթերի ձայները:

Շների հաչոցը ուշացած անցորդներին դիմավորում էր յուրաքանչյուր դարպասի առաջ եւ ուղեկցում մինչեւ փողոցի ծայրը:

Պատշգամբում երևաց գիշերվա շորերով Մելիտոնը: Մթության մեջ խարխափելով՝ նա փնտրեց խրոցակն ու վառեց բակի լույսը:

«Քառասուն տարի եղավ, ասո՛ւմ եմ, քառասուն տարի սրա գլուխը չմտավ, որ գիշերը վառած թողնի լույսը: Ա՛յ մարդ, ախր, ո՞նց կարելի է տունը մթնացնել: Մութ տունը՝ ոնց որ անտեր-անտիրական...Մի լուս գոնե պիտի պսպղա, չէ՞: Ախր, ո՞նց կլինի: Գնացող կա, եկող կա: Թեկուզ հենց մենակ էն բանի համար, որ փողոցով անցնողների ճամփեն լուսավոր լինի..... Ինչքան ուզում ես՝ ասա: Նա էլի իրենն է զոռում՝ հաշվիչն իզուր ընչի՞ աշխատի: Ես էն չեմ կարող հասկանալ, թե մի լամպի եղածն ինչ է, որ հաշվիչն էլ ի՞նչ դուրս գրի... Չէ՛, էդքան խելք չունի, չունի՛ էս կնիկը, չէ՛... ո՞րտեղից...,- ինքն իրեն մոթմոթում էր Մելիտոնը եւ ոտքով բոթում սանդուղքի վրա մրափած շանը:

-Մելիտո՞ն,- պատուհանին մոտեցավ Պելոն:

-Հա, ես եմ, ե՛ս:

-Էդ ո՞ւմ հետ էիր խոսում:

-Ինքս ինձ հետ... Շանն էսօր ուտելու բան տվե՞լ ես..:

-Իհարկե՛... կաթի մեջ թրջած հաց. համա լայեղ կա-նի՞... զարգացածը միս է ուզում, մի՛ս...էն էլ փափու՛կ միս...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մելիտոնը հանեց կրկնակոշիկները, շպրտեց մի անկյուն եւ հագավ հողաթափերը: Հետո դուռը փակեց եւ սրթսրթալով մտավ Պելոյի սենյակը, նստեց կնոջ մահճակալին եւ նրան մեկնեց դեղի սրվակը:

-Պելո՛, հոգիդ սիրեմ, ավելի լավ է, էս դեղը քսի ջանիս:...

-Օգնո՞ւմ է, հա՞:

-Օգնում է, չէ՛ մի, պոզեր...- գլուխը թերահավատորեն շարժեց Մելիտոնը:

-Բա թե չի օգնում, իզուր ընչի՞ ես քսել տալի..., Ավելի լավ է, գնա Բերիձեի մոտ, գուցե նա՛ մի լավ դեղ նշանակի:

-Էնքա՛ն էլ բան է հասկանում քու էդ Բերիձեն, ո՛ր... Քսան տարի եղավ արդեն, էս կողքս ցավում ու ցավում է, բայց էդ հեր օրհնածը մինչև էսօր չկարողացավ որոշել, թե ինչ չոռուցավ կա մեջը: Ասում եմ ռևմատիզմ է, թե՝ չէ՛, բատոնո, ռեւմատիզմ չի: Ասում եմ՝ աղեր են հավաքվել, չէ՛, ասում է, աղեր էլ չկան... Մենակ թողնես՝ իրենք իրենց գուշակեն...դրանից ավել ի՞նչ գիտեն էդ տնաշենները որ... Ամեն բժիշկ իրենն է ասում, մեջտեղ էս ցավը չի անցնում՝ կա՛ ու կա՛... Աստված գիտի, ի՞նչ սա-տանա կա մեջը:

Պելոն դեղնավուն դեղը զգուշությամբ լցրեց ափի մեջ եւ նուրբ ու ջանադրորեն սկսեց տրորել ամուսնու հիվանդ կողը:

-Ա՛յ, ա՛յ, էդտեղ, էդտեղ, չէ՛, վերեւ, մի քիչ ներքեւ, հա՛... իջի՛ր, իջի՛ր, թիկունքիս մոտ, մի քիչ էլ, քսի՛, քսի՛, օխա՛յ...-տնքտնքալով ասում էր անվանի արդանչի,

քեֆերի ու խրախճանքների երբեմնի մշտայցելու Մելիտոն Կուխիանիձեն:

-Գիտե՞ս, ո՞վ էր էկել քիչ առաջ ...

-՞... ՞... ՞...

-Սերգո Թադումաձեի տղեն:

-Ֆինտեսուչի՞:

-Հա՛:

-Ի՞նչ էր ուզում...

-Ասում էր՝ հենց հիմա հարսանիքս է, ի՞նչ կլինի թող Մելիտոն քեռին գա, գնանք..... Ասացի՝ չէ, հիվանդ է, չի կարող վեր կենալ ու չարթնացրի քեզ: Լավ եմ արել, չէ՞:

Մելիտոնը տեղից վեր թռավ: Շապիկն էր կոճկում եւ սեռուն նայում կնոջը:

- Ճանաչո՞ւմ ես Սերգոյին:

-Ո՞նց չէ.... էն չէ՞ր, որ վերջերս էկել էր Շաքրոյի քելեխին,-պատասխանեց կինը:

-Հա՛, հա՛, հենց նա:

-Էդ էն չէ՞ր, որ մի անգամ ոստիկան էր ուղարկել մեր տուն:

-Մի անգա՞մ... Ի՞նչ մի անգամ, արունս ուղղակի քամել է էդ անաստվածը, Պելո՛: Հլը կպել էր, թե ձեւակերպել է պետք, որ պետությանը հարկ վճարես: Եկավ, գրեց, ջնջեց, չափն ասաց: Ես թե՝ էդքան չեմ կարող, ուժս չի պատի, հիմա էլ բռնեց գործկոմի նախագահին բողոք գրեց, թե էս տզրուկ արղանչին ուրիշի քրտինքով է հարստանում, պետությանը վնաս հասցնում, թե սրա նմաններին

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

քաղաքից վոնդել է պետք:

-Էդ ձեւով դրա ամբողջ ազգուտակը հարստանա, հա՛...

-Վերջերս ինչ-որ չեմ տեսնում, երեւի էլ տեսուչ չէ:

-Դուրս են շպրտել... Տղեն ասում էր՝ թոշակի է անցել:

-Չէ՛, լավ մարդ չի, չէ՛...

Ծեր ամուսինները մի որոշ ժամանակ մտքերի մեջ էին: Հետո Մելիտոնն ընդհատեց լռությունը:

-Տղա ունի, հա՞, ասում ես, ... Հա՛, հիմա հիշեցի, առաջին կնոջից է...

-Ի՞նչ....Մավրան նրա երկրորդ կի՞նն է:

-Հա՛, բա ի՞նչ....չե՞ս հիշում, որ ծղալտուբոցի Շալիկոյի աղջկան էր փախցրել: Բոլորն էդ մասին էին խոսում...

-Հիշեցի՛, հիշեցի՛:

-Բայց Սերգոյի տղան, եթե չեմ սխալվում, դեռ փոքր է, ո՞նց է ամուսնանում...

-Դե, նոր է վերադարձել բանակից, էլի՛... Մի տեսնեիր՝ ոն՛ց էր աղաչում-պաղատում... ի՞նչ կլինի, ասում էր, թող գա, էլի՛ , Մելիտոն քեռին .... հարսանիքս քաղցրացնի...

-Ինքը՝ տղեն էր եկե՞լ:

- Ասեցի՝ հա՛:

-Անունն ի՞նչ է:

-Օմարի:

Մելիտոնն ընդոստ վեր թռավ մահճակալից: Ապա մոտեցավ պատի հնամյա հայելուն, մի լավ ձգվեց-

ուղղվեց, հետո մեկ-երկու անգամ ետ ու առաջ գնացեկավ ու կանգ առավ Պելոյի մահճակալի մոտ.

-Գնում եմ,- ասաց առարկություն չվերցնող տոնով՝:

-Գժվե՞լ ես, ա՛յ մարդ,- կշտամբեց Պելոն, որովհետեւ լավ գիտեր ամուսնու համառ բնավորությունը: Մելիտոնը որ ասաց՝ վե՛րջ, Աստված վերից իջնի, բան դուրս չի գա:

-Պիտի գնա՛մ,- կրկնեց Մելիտոնը:

-Ո՞ւր, ա՛յ մարդ, հըլը մի սըհաթին նայի, երեքն է արդեն մոտենում... Խելքդ կորցրել ե՞ս..

-Էլ հերիք ճղճղաս...Պելո՛, առանց էդ էլ ժամանակ չկա... Շու՛տ արա, աղլուխս ու արդանի գոտին բեր: Մահճակալի տակ է, սնդուկի մեջ: Վե՛րջ: Էլ ծպտուն չլսեմ: Ես գնում եմ:

-Ո՞ւր, ա՛յ մարդ... Քի՞չ է քեզ մոկտացրել էդ Սերգոն, որ հիմա էլ նրա տանն ես ուզում հոգիդ փչել: Նոր չէի՞ր ասում, թե ոնց է Սերգոն արյունդ քամսել,- կարկտի պես վրա էր տալիս Պելոն, մինչդեռ բնազդաբար շարժվում էր դեպի սնդուկը: Իսկ Մելիտոնն արտասովոր ճարպկությամբ գալիֆեի անդրավարտիքի վրայից տաք գուլպաներն էր հագնում: Պելոն այդպես հուզված եւ փոթորկված երբեք չէր տեսել Մելիտոնին:

- Սերգոն էստեղ ի՞նչ կապ ունի, թքա՛ծ նրա վրա: Ինձ մոտ փեսացուն է եկել: Ի՛ր ոտքով: Ի՛նքը՝ փեսացուն: Էկել՝ խնդրում-աղաչում է՝ թե հարսանիքս է, քո կարիքն եմ զգում, Մելիտոն քեռի՛, օգնի՛ր ինձ: Դու հասկանո՞ւմ ես, ի՞նչ է նշանակում, երբ փեսան է իր ոտքով գալիս

հրավիրելու: Եթե նույնիսկ մեռնեմ, հոգիս դուրս գա, մեկ է, գնալու եմ, արդանն էլ տանելու եմ... Ախր էդպես էլ չի լինի, է՛...

-Վեր կընկնես, ա՛յ մարդ... , այ՛ մարդ... էդ էրկու փթանոց արդանը էս կեսգիշերին ո՞նց ես քարշ տալու: Չէ՛, ես չեմ թողնի դու մեռնես, հենց հիմա կիջնեմ, դարպասի դուռը բանալիով, կփակեմ:

-Լա՛վ, Պելո՛, հերի՛ք եղավ, թե հոգիդ կսիրես... Շատ խոսելու տեղակ ավելի լավ է, դու էս արխալուղս կոճկիր: Չաղացել եմ, երեւի... ինչո՞ւ, չգիտեմ... Ախր, դու խելացի կին ես, ու պիտի լավ հասկանաս: Ի՞նչ նշանակություն, թե ֆինտեսուչ Սերգոն ինձ դաղել է ժամանակին: Էսօր փեսեն ի՛նքն է իր ոտքով դուռս էկել, ի՛ր ոտով: Ա՛յ, է՛ս է կարևորը... Ամբողջ կյանքում չի մոռանա էս բանը, կհիշի՛... Հարսանի՛ք է, է՛, սովորական քեֆ կամ խնջույք որ լիներ, ուրիշ բան... ոտքս առաջ չէի դնի... Եթե ուրիշին ուղարկած լիներ, թեկուզ ցավս էլ տաներ, մեկ է, էլի՛ չէի գնա... Բայց արի տե՛ս, որ չէ՛, փեսեն, բատոնո փեսեն ինքն է եկել իր ոտքով... Ու խնդրում, աղաչում է... Էլ ինչի՞ս են պետք էս փտած ոսկորներս, որ հենց իր հարսանիքի գիշերը փեսի սիրտ պիտի կոտրեմ: Չէ՛, մենք էդ մարդը չենք...Չէ՛:

Մելիտոնն արդանն առաջ քաշեց եւ դրմփոցով դրեց հատակին:

-Հապա, քեզ տեսնեմ, Պելո ջան, մի փալաս տուր, հոգիդ սիրեմ, շու՛տ, շու՛տ... հիմա սրա վրա ալամ աշ-

խարիի թոզը կլինի նստած...

Քիչ անց ամեն ինչ պատրաստ էր: Մելիտոն Կուխիանիձեն, որի գոտուց կախված էր արդանը, զգույշ իջնում էր սանդուղքից: Նրան հետեւում էր շվարած Պելոն՝ իր անվերջանալի վշվշոցով.

-Նրանք էնտեղ, խաչմերուկի մոտ են ապրում, չե՞ս հիշում, շուկայի ետեւի կողմում, գժանոցի փողոցին չհասած:

-Գիտե՛մ, գիտե՛մ, լավ էլ հեռու է եղել, ա՛յ... Հիմա դու մտիր տուն, դուռը կողպիր ու պառկիր... Ես լավ եմ, քու արեւ՝ լավ եմ... Մեջքս արդեն չի ցավում: Էս գիշեր, էս արդանը ձեռքիս ինը սար էլ կանցնեմ: Էհ, ինչ-որ է, գնացի՛... Տուն մտիր, չե՞ս լսում...

Ու երբ արդեն ականջին հասավ դարպասի շղթայի զնգզնգոցը, եւ կինը կորավ տեսողությունից, Մելիտոնը հանեց արդանը եւ դրեց հենց այնտեղ՝ Պլատոն Գուլիայի դռան առջեւ դրված երկար նստարանին: Ապա, մի քիչ շունչ քաշեց եւ կրկին շարունակեց ճամփան:

«Իսկապես, ի՛նչ ծանր է եղել էս անտերը... Քիչ էլ գնամ ու Ռաժդեն Փանջուլիայի դարպասի մոտ կդինջանամ... Նրանք էլ լավ նստարան ունեն: Ոչինչ, կամաց-կամաց կտանեմ, մեկ է, ինչ գնով էլ լինի, տեղ պիտի հասնեմ... Մինչեւ շուկա երկու կեռման մնաց... Հետո կհասնեմ Վեքիլ Լորթքիփանիձեի տանը: Էդ կողմերում են կարծեմ ապրում: Ոչինչ, յոլա կտանեմ, թեկուզեւ դոշիս գյուլլա խփեն: Վե՛րջ: Ուրիշ ճար ու ճամփա չկա: Է՛ս է: Գնալո՛ւ

ԱՄԱՆՈՐԻ ՆՈՒՇԱՐՈՒՄՅՈՒՆ

եմ, հասնելու՛ եմ... Մենակ թե՝ սի՛րտս, սրտիս ծակոցից եմ վախում, թե չէ մեջքիս ցավը՝ հեչ... կդիմանամ... Սիրտս հանկարծ չդավաճանի... Ու՛հ... էս ինչ սառը քրտինք էր... ջանս էլի սկսեց դողալ... Պելոն լավ ասաց, չմտնե՞մ էդ Բերիձեի մոտ, ալամ աշխարհ դրան է գովում, ա՛յ մարդ, հենց մենակ իմ ցավին պիտի դեղ ու դարման չանի՞: Աշխարհի բժիշկների հիվանդը ես եմ, բայց ոչ մեկը իմ ցավը չի հասկանում... Չեղա՛վ, մի քիչ կամաց գնամ, իզուր եմ շտապում, մի քիչ էլ կանգնեմ... Տե՛ր Աստված, դու ինձ օգնական, հանկարծ էստեղ, էս կեսգիշերին, քուչի մեջտեղը հախիցս չգաս, որ մարդկանց խղճալիքը դառնամ... Ախր նպատակս վատը չէ, է... դու էլ մտիր դրությանս մեջ, դու էլ հասկացիր ինձ... Մարդն իմ կարիքն է զգում, ես պե՛տք եմ նրան, պե՛տք, իսկ դու գիտե՞ս, թե ի՞նչ է նշանակում, երբ դու ես մարդու միակ հույսը, երբ նա քեզնից էն կողմ ուրիշ ճար ու ճամփա չունի...

Չէ՛: Ավելի լավ է արդանը ուսիս դնեմ, բայց էդ ձևով մարդկանց առաջ դուրս գալ կլինի՞... Չէ՛... չեղավ... Պիտի դիմանամ... Քիչ մնաց... Տեսնես հարսնիքը որտե՞ղ է՝ վերեւի հարկում, թե՞ ներքեւի... Հայաթում չեն լինի, արդեն ցուրտ է... Օ՛ֆ, Աստվա՛ծ իմ, քիչ մնաց, հա՛... Հիմա էլ գլուխս... Ոտքերս ծանրացան... Ոնց որ թե... Էհ, աշխա՛րհ, աշխա՛րհ, մարդիկ հազարավոր կիլոմետրեր են կտրում, գալիս -հասնում Ծղալտուբո, ես երկու քայլի վրա չեմ կարող առաջ գնալ... Երանի էս անտեր ծնկներիս մի դեղ ու դարման լիներ: Չկա՛, չէ՛...Մեր քոքն էսպես է,

մինչեւ չընկնենք, խելքի չենք գա... Հետո էլ՝ վայնասո՛ւն, սո՛ւգ ու շիվա՛ն: Սպասի՛ր, քրտինքս էլ սրբեմ, նոր առաջ գնամ... Վա՛հ, հասե՞լ եմ... Հրե՛ն, հա՛... ոնց՛ են պեծին տալիս լույսերը...

Թամադան պատրաստվում էր խմել քավորի կենացը: Նա հյուրընկալին խնդրեց ներս բերել չորս միանման ղանձիներ[1]: Դրանցից երկուսն ինքը լցրեց, երկուսն էլ ուղարկեց տեղակալին: Ապա կանգնեց եւ աղաչանք-պաղատանքով մի կերպ կարգի հրավիրեց հարբած հյուրերին:

Հարսանքավորները ոտքի վրա ճոճվելով, սկսել էին հորանջել: Սեղանը կարգի բերելուց հետո, թամադան արդեն պատրաստվում էր սկսել սրամիտ խոսքով համեմված իր բաժակաճառը, երբ մոտիկից, շա՛տ մոտիկից, ընդամենը մի քանի քայլ հեռավորությունից, հենց սանդուղքի գլխից ծավալվեցին արղանի հոգեպարար հնչյունները...

1 ղանձի--այծեղջյուրից պատրաստած գավաթ, որով գինի են խմում

ՅԱՐՈՅՇԵՎԱՆ
ՑՈՒՇԱՀՈՒՄՈՅՍ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՓԵՍԸՆ

Ես սիղնաղցի եմ, ամուսինս՝ ամերիկացի:

Արդեն երեք տարի է՝ պսակված եմ, բայց մինչև էսօր չեմ հասկանում, թե էս ամերիկացին ընչի՞ հենց ի՛նձ ընտրեց՝ սեւուկ-մնուկ, բոյս՝մետրուկես, սովորական, սիղնաղցի աղջկաս:

Բայց դուք հըլը մի իրան նայեք՝մարդուս ... ա՛յ, էս դռնից ներս չի մտնի, էնքան որ խոշոր է՝ բոյ-բուսա՛թով, թիկնե՛ղ ...էնպիսի ուսեր ունի ո՛ր...

Ամբողջ հարսնիքս վախով եմ անցկացրել՝ անընդհատ վրեն էի նայում ու մտածում՝ ինչ-որ այիբ, պակասություն-մակասություն հո չունի՞... ախր շշմելու բան է, էդ ահագին հեռավորությունը կտրել-անցել, էստեղ է հասել հենց մենակ ինձ հետ պսակվելո՞ւ համար:

Դեսից- դենից ականջիս էր հասնում ու հիմա էլ է հասնում, թեև համեմատաբար քիչ, որ իբր Ամերիկայում մի դաստա կնիկ-էրեխա ունի: Աստվա՛ծ, երկի՛նք, գետի՛ն՝ ես ինքս էլ էի էդպես մտածում:

Բավական ժամանակ կարծում էի, թե մեր միասին լինելը էսօր-էգուցվա հաշիվ է, երկար չի տևի:

Ի վերջո կձանձրանա, մի օր էլ խելքի կգա, ոտները կքշտի ու վե՛րջ՝կգնա- կհեռանա ինձնից: Բայց արդեն վերջնականապես համոզվել եմ, որ չէ՛, ոչ ոք էլ չունի:

Որ տեսնեք՝ ո՞նց է դողում մեր սիրո պտղի՝ տարիուկեսկան Սաբայի վրա, արմանք-զարմանք կկտրեք.. էնպես է պաչպչում ու իր գողնքումը թավալ տալիս նրան՝ իր միս ու արյանը, էնպի՞սի գիժ հեր է, որ պարզ երևում է, որ չէ՛, ուրիշ ոչ ոք էլ չունի: Եթե մեկնումեկին ունենար, ես արդեն գլխի ընկած կլինեի. տղամարդու մոտ, վաղ թե ուշ էսպիսի բաները նկատվում են:

Նկարիչ է: Նախաձեռնող մի խմբի հետ էր եկել Կախեթ:

Միղնախում մնացին ընդամենը երկու ժամ, բայց մեր կողմերն էնպե՛ս էր հավանել, որ գնալու ժամանակ ոտքերն ասես հետ-հետ էին գնում:

Գնաց Ամերիկա, գործերը դզեց-դզմզեց ու ամիսուկես չանցած՝ նորից հետ էկավ:

Գյուղապետին էլ թուղթ էր բերել, թե մշտական բնակության եմ տեղափոխվում Միղնախ, աշխատեմ պիտի: Դե մենք էլ... խաթրաշահ, հյուրասեր մարդիկ.. ո՞ւմ ենք մերժել, որ հիմա էս ամերիկացուն մերժեինք: Ու էդպես էլ մնաց: Մեր փողոցի վերջում, փոստի մոտ, Փիրուզաշվիլիենց տանը մի սենյակ վարձեց ու սկսեց էնտեղ էլ ապրել:

Մի օր էլ նկարչական եռոտանին իր դռան առաջ

դրած՝ նկարում էր Սիղնախիի պարիսպը, երբ հենց էդ ժամանակ ես մեր փանդուռին էի տանում ճրելաենց Զեյնաբին... զահլես տարել էր, տուր հա՛ տուր՝ եղբորորդուս ծնունդին ենք ուզում նվագել:

Էս Մայքլս էլ հենց ինձ տեսավ (անունը Մայքլ է, մեր լեզվով նշանակում է Միխո), վրացերենի իր ուսուցչին՝ Սանդրո Գոշաձեին, ուղարկեց մոտս:

Սանդրոն նրա հետ եկել էր Թբիլիսիից: Ընդամենը չորս ամսում Մայքլը էնպես լավ էր սովորել քո հավանած վրացերենը, որ, հիմա, երբ մի օտարերկրացի է հայտնվում Սիղնախում, որպես թարգմանիչ ինքն է հանդես գալիս :

Էն ժամանակ ընդամենը երկու ամիս կլիներ, ինչ եկել էր:

Ներողություն եմ խնդրում, ասում է ինձ Սանդրոն, ամերիկացի նկարիչը հետաքրքրվում է, թե փանդուռին ձե՞րն է:

-Ասենք, թե իմն է, դա ի՞նչ նշանակություն ունի՝ պատասխանում եմ:

-Եթե կարելի է, մի րոպե էս կողմ եկեք, հա՞... Հետո նա ինչ-որ բան ասաց Մայքլին, Մայքլն էլ՝ իրեն:

- Եթե կարելի է, նվագեք, հա՞...խնդրում է ինձ Սանդրոն:

- Խելքներդ հո չե՞ք թոցրել...էդ ո՞ր մի փողոցային փանդուռչին էլ ես եմ... ի՞նչ է, փանդուռիով փողոցով անցնել չի կարելի՞: Մասխարի տեղ եք դրե՞լ ինձ, ձե՞ռ

ԳԵՂԱՐՎԵՍՏԻ
ՇՈՒՇԵՎՈՒՄՈՎՅԱ

եք առնում...-ասում եմ նրանց:

-Չէ՛, չէ՛... ի՛նչ եք ասում, եթե վիրավորեցինք ձեզ, ապա ներեցեք մեզ:

Ու նորից իրար մեջ քչփչացին:

Մայքլը վեր կացավ ու տխուր-տխուր մոտեցավ ինձ: Ես՝ փոքր-մոքր աղջիկ, ինքը՝ մի հսկա դև, իսկական աժդահա.. Կանգնել է գլխիս ու ինչ-որ բան է խնդրում-աղաչում:

-Աղջի՛, քաղաքավարություն ունեցիր, հյուր մարդ է, հանկարծ չնեղացնես,- Փիրուզաշվիլի Շաքրոն է հակվել պատշգամբի բազրիքին:

Լավ, ինչ ուզում է, թող լինի՝ մտածում եմ, ջանս էլ դուրս գա, կնվագեմ:

Նստեցի դարպասի մոտ ու սկսեցի զլել փանդուռին:

Մարդիկ էլ փողոցում հավաքվել, կանգնել,լսում էին ինձ: Հարեւանները վազեվազ աթոռներ էին դուրս բերում, իսկ Մայքլը կախարդված ինձ էր նայում:

Ավարտեցի «համերգս» ու հանդիսականին երեք անգամ գլուխ խոնարհեցի: «Ֆանտա՛ստիկո՛, ֆանտա՛ստիկո՛, վերի՛, վերի նա՛յս, վերի բյութի՛ֆըլ»,- բացականչում էր Մայքլը:

Հետո նա Սանդրոյին ինչ-որ բան էր ասում, որն ի նշան մերժման, գլխով էր անում:

Մայքլը բռնում է նրա ձեռքն ու սկսում լուրջ-լուրջ ինչ-որ բան խնդրել:

-Ի՞նչ է ուզում, -հարցնում եմ՝ արդեն՝ խղճալով

ՀԱՄԱՅՆԱՊԱՏ ՀՈՍՔՈՒՄՈՎՈՒՆ

նրան, -եթե ուզում է, մի երեք երգ էլ կնվագեմ, -ասում եմ: Ես արդեն ոգևորվել էի:

-Չէ՛,- պատասխանում է Սանդրոն, -հիմա արդեն էնպիսի բան է ասում, որ ինքս էլ չեմ հավատում:

« Չլինի՞ էս մարդը մի քիչ խախտված է»,-մտածում եմ ինձ ու ինձ:

-Հը՞, ի՞նչ է ուզում, ասա՛:

-Ուզում է քեզ առաջարկություն անի:

Ամոթից ականջներս կաս-կարմիր կտրեցին: Ձեռ է առնում, թող իրեն ձեռ առնի,- պատասխանեցի ես, ու փանդուռին ուսերիս դրած՝ փախա-գնացի:

Դե, էդ օրն արդեն ոչինչ լինել չէր կարող, իսկ ահա, երկրորդ օրը Սանդրոն, Շաքրուա Փիրուզաշվիլին ու էս Մայքլը այցելեցին հորս:

Ուրեմն, էսպես ու էսպես... սկսեցին նրանք,- էս մեր պատվական ամերիկացի նկարիչը աղջկադ ձեռքն է խնդրում, -խոսում է Շաքրուան, դե դու էլ....եթե խելքիդ մոտ բան ես համարում, համաձայնվիր ու աղջկադ տուր, իսկ եթե չէ, դու՝ քեզ համար, ինքը՝ իր:

-Բայց էս օխտը սար էն կողմից եկած մարդը աղջկաս որտե՞ղ տեսավ, ո՞նց տեսավ- զարմացավ հայրս:

-Երեկ, փանդուռին ձեռքին անցնում էր փողոցով ու մի քիչ երգեց... ա՛յ, դրանից հետո էս հյուրը մեզ հանգիստ չի տալիս: Ասում է՝ էդ աղջկանից բացի ոչ ոքի չեմ ուզի, Շաքրուան ոչինչ չթաքցրեց:

-Դու ի՞նչ կասես, հը՞, ա՛յ աղջի՛,- կեսբերան ինձ է

հարցնում է հայրս՝ համոզված, որ պիտի մերժեմ:

-Եսի՛մ,- սեթևեթանքով թափահարեցի ուսերս ,- շատ խոշոր չի՞ ինձ համար:

-Էդ հե՛չ, մուկը դեզի տակ չի սատկի,- Շաքրուան էր:

-Հըլը մի նայեք. էս ո՞ւմ եմ մեծացրել... Ա՛յ սատանի ճուտ, հո չե՞ս կարծում ինքը մաչխաանցի է, ամերիկացի է, է՛, ամերիկացի՛- ասում է հայրս:

-Հետո՞ ինչ, որ ամերիկացի է, կարևորն էն է՝լավ մարդ լինի, -խոսում եմ ես:

Հայրս դարձավ նրանց:

-Լա՛վ, հըլը մի դրան հարցրեք, իմանամ, իրենց մոտ ամուսնությունը հո ուրիշ բան չի՞ նշանակում:

Սանդրոն ու Մայքլը նորից հարց ու պատասխանի են անցնում:

Մայքլը ամոթից կարմրել է, աչքի պոչով էլ անընդհատ ինձ է նայում, ամեն վայրկյան:

Էսպիսի աչքեր ունեցող մարդը չի կարող խաբեբա լինել, մտածում եմ ես ինձուինձ... ու.... Հենց էդ օրն էլ ամեն ինչ որոշվեց:

Որոշվեց, և այսօր ես շատ երջանիկ եմ: Պապիս տանն ենք ապրում, հին տուն է, հայրս էլ էստեղ ծնվել-մեծացել:

Պապիս մահից հետո էս տունը համարյա անտեր-անտիրական էինք թողել:

Էդ էլ ասեմ ձեզ, որ Կախեթում փեսային անվանում

են մուրտառ բարեկամ: Փեսա-զոքանչ «ջան-ջիգյարով» քաղցր հարաբերություններ էլ են շատ կան, առավել եւս՝ տնփեսայի դեպքում:

Մայքլը տնփեսա է, բայց նա մերոնց աչքի լուսն է, նրանց օրուարևը.հիլը դեռ՝լուսնյակն էլ վրեն..:

Աստծո մարդն է, Աստված է նրան ուղարկել մեզ, մեկ-մեկ ասում է հայրս:

Ինքն էլ հորս է սիրում, կողքից հեչ չի հեռանում, լույսը չբացված՝ միասին գնում են խաղողի այգի.... իսկական բարի դեւ, չո՛րսը մարդու գործ է անում, է՛, չո՛րսը....

Տեսնես էնտեղ՝ էն Ամերիկայում ի՞նչ ձևի կյանք է, որ սա էսպես ամեն ինչ հավանում է մեզ մոտ, հա՛ մի գլուխ ժպտում է ու ծիծաղում, տրամադրությունն է՝լ հո...մի՛շտ բարձր:

Երբ առաջին անգամ մեր էշին տեսավ, վոազ-վոազ վազեց, ստվարաթուղթ բերեց ու սկսեց չորս կողմից նկարել նրան:

Բերանս ձեռքով փակում էր, որ հանկարծ իբր չվախեցնեմ էշին, որ մըթամ սա չնկատի, որ իրեն նկարում են:

Էշն ախր ո՞նց հասկանա՝ իրե՞ն ես նկարում, թե՞ հորդ ես նամակ գրում՝ ասում եմ իրեն:

-Դու չես կարող պատկերացնել, թե ի՛նչ հրաշալի է էշը, երբ իր համար հանգիստ արածում է՝ համոզված, որ ոչ ոք չի նայում իրեն,- ասում է ինձ

Մայքլը, առհասարակ ձեզ մոտ կենդանիները շատ հանգիստ են, իսկ մարդիկ մի քիչ ....ծալերը պակաս... թեթև են...Ա՛յ, եթե, հանգստությամբ էշերին նմանվեիք, ավելի լավ կլիներ:

Իսկ երբ հայրս էշին լծեց սայլակին, տեսնեիք պիտի, թե ի՛նչ պատմություն սարքեց գլխին՝ ի՞նչ վատություն է արել քեզ էս խեղճ անասունը, որ հետն էդպես դաժան ես վարվում: Հետո նկարեց սայլակով էշին ու շատ հավանեց՝ սազո՛ւմ է:

Չես պատկերացնի, թե ոնց է հոգում էշի մասին: Երբ հայրս երկու տոպրակ ալյուր է դնում սայլի վրա կամ փալանին, մեկն անպայման ինքն է վերցնում - շալակում. փո՛քր է, ասում է, մե՛ղք է...

Սրանից մի որոշ ժամանակ առաջ էլ խոտի խուրձն էր շալակել... նայում եմ՝ դարպասից եր-կու դեզ են մտնում, դեզի տակ ո՛չ էշն էր երեւում, ո՛չ էլ ինքը... Ծիծաղում էր՝ էշի հետ հո չխառնեցի՞ր ինձ....:

Երբ ոթվելիի[1] ժամանակ մեր հարեւան տղամարդիկ սկսեցին ոտքերվ տրորել խաղողը, զարմացած նայում էր՝ էս ընչի՞են գործերը թողել, ոտ լվանում...

Իսկ երբ երեքով թռան հնձանին, մարդս դառավ իսկական կապելու գիժ:

«Նոու ստերի՛լ, նոու ստերի՛լ»,- գոռում էր նա ու թևիցս քաշում՝ էս ովքե՞ր են, ի՞նչ են ուզում, էս ի՞նչ

1 ոթվելի-խաղողաքաղ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

արին, ընչի՞ արին, էսքան խաղողն ընչի՞ փչացըրին... Մի կերպ բացատրեցի, որ նո՛ր հանգստացավ:

Իսկ երբ մաճառը սկսեց փրփրալ, Մայքլը ահավոր հուզված, գնում-գալիս էր հնձանի ու կարասի արանքում, բաժակով հանում մաճառն ու ուշադիր տնտղում էր: Դեմքին ասես գրված լիներ՝ ոտքերով որ չճզմեին, էսքան պղտոր չէր լինի: Ուղղակի բարձրաձայն ասել չէր համարձակվում:

Երեք տարի էլ չկա, ինչ Կախեթում է, բայց արդեն իսկական խաղողագործ է դարձել:

Անգիր գիտի, թե խաղողի վազին ե՛րբ ու ի՛նչ է պետք՝ ՝էտել-փխրեցնել, դեղել-ցողել, խփել-ամրացնել: Իսկ գինեգործությունի՞ց.....հը՛մ..... «պյա՛տ» ունի...

Մեկ- մեկ հարց եմ տալիս, ասում եմ՝ լսի՛, հո չե՞ս փոշմանել, որ էս հեռու-հեռավոր, խուլ տեղում ես ապրում, սիրտդ հո նորից Ամերիկա չի՞ քաշում:

-Չհավատ՛աս, մտքովդ չանցնի էդպիսի բան, -ասում է, - ես աշխարհի ամենաերջանիկ մարդն եմ:

-Ամենաերջանիկը չգիտեմ, բայց տարօրինակ մարդ ես:

-Ինչո՞ւ, - ծիծաղում է:

-Առաջին անգամ տեսած աղջկան որ էդպես վրա պրծար...լավ, ի՞նչը էդպես կապեց աչքերդ:

- Ինչը՞... Ինչը ու..Էնպես ինքնավստահ էիր գնում, էնպիսի հավատարմությամբ էիր փանդուռին հետդ տանում, որ մտածեցի՝ եթե էս ջազ-կոնտրաբասի

ժամանակներում էս աղջիկը փանդուռ է առել ձեռքը, ուրեմն սա ուրիշների նման չի, ու հենց ինքն էլ պիտի լինի իմ կինը:

Ամեն առավոտ «մոլբերտը» (թե ի՞նչ են ասում դրան, է՛...) դնում է թեւի տակ ու վազում ցանկապատի կողմը: Միշտ նույն բանն է նկարում՝ Ալազանի հովիտը, Սիղնախի պարիսպը, մեկ էլ՝ մեր էշերին:

Տունը լցրել է նկարներով: Ասում է՝ սրանք կուղարկեմ Ամերիկա, էնտեղ կծախեն, ու շատ դոլարներ կուղարկեն մեզ:

-Չեմ ուզում քու դոլարները,- պատասխանում եմ,- Մա՛յքլ, առողջ լինենք, հերիք է:

Հա մի գլուխ նկարում ու նկարում է: Ինչքան է եղել՝ էկել, կանգնել եմ գլխին, նա նույնիսկ չի՝ էլ զգացել ներկայությունս:

Հմայված նայում է Ալազանիի հովտին:

-Նայի՛ր,- ասում է, -երեւի դրախտը էսպիսին է,-

Էսպիսի գեղեցկություն աշխարհի ն ո՛չ մի անկյունում չե՛ս գտնի դու...

Ես էլ եմ նայում... Նայում եմ, ու իմ դուրն էլ է գալիս, քա՛...

Ալազանիի հովի՛տը... Այսուայնտեղ վեր է ելնում մշուշի գոլորշին, աղոտ մառախուղն ասես վետվետում-խաղում է, իսկ ավելի հեռվում, այնտեղ, ուր իրար են ձուլվում երկինք ու երկիր, ճերմակալազուր վարագույրի պես բացվում են Կովկասյան լեռները:

Իրոք որ, գեղեցիկ է էս օրհնվածը, բայց երբեմն վախ է սողոսկում սիրտս, ուզում եմ, որ Մայքլի բարությունը միշտ լինի, որ ոչ մի չար աչք չլինի, ու չարակամ թշնամի-ոսոխ Ալազանիի հովիտն էլ հանկարծ չխլեն մեզնից....

Իսկ Մայքլը ծիծաղում է... էլի՛ ու դարձյա՛լ:

Երբ ձմեռներին կտրում են լույսը, և հայրս մի լավ, ջիգյարով հայհոյում է լույսը կտրողին, մարդս զարմացած նրան է նայում: «Նո՛ու պրոբլեմ», -ասում է ու ծիծաղում, հետո վազում ինձ մոտ, շալի սավանով փաթաթում ինձ, ծայրերը հանգուցում կոկորդիս մոտ, հետո տաք-տաք գուլպաներ է հագցնում ու ոտքերս խոթում ռեզինե սապոգների մեջ:

Իսկ հիմա վազենք՝ ցախ բերենք, ասում է ուրախ-ուրախ:

Էնքան վառելափայտ ունենք պահած, որ նույնիսկ երկու ձմեռ կհերիքի, բայց Մայքլը հենց էսպիսի ժամանակ, լուսնի ճերմակով լուսավորված ձյունառատ անտառում է սիրում զբոսնել ու ցախ հավաքել:

Իսկական երջանկությունը հենց սա է, որ կա, շեն մնա էն մարդու օջախը, ով լույսը կտրեց՝ ասում է նա:

Սրանից էլ մեծ երջանկությու՞ն՝ ես ու դու՝ անտառո՛ւմ, ձմռա՛նը, փափու՛կ. փափու՛կ ձյան վրայով զգու՛յշ ու անշտապ քայլում ու բուխարու համար ցախ ենք հավաքում:

-Շա՞տ ես հավանում, -հարցնում եմ ու արտաշնչում

սառած ձեռքերիս վրա:

-Շա՛տ, շա՛տ-շա՛տ, չէ՞ որ սա ֆանտաստիկ է,- ասում ու ինձ սեղմում է կրծքին, սառած ձեռքերս դնում իր վերարկուի գրպանների մեջ:

Իսկ ձյունը ճոթճոթում է, եւ անտառում քայլում է լռությունը՝ մե՛ծ, սա՛ռը, արծաթագու՛յն լռությունը...:

Ո՛վ իմանա, գուցեեւ այս ամենը իրոք ֆանտաստիկ է, քա՛:

ՄԸՐԴ ՄԸՐԴԻԿ

Առանց էն էլ Աստված դեռ մինչև վերջ կարգի չի գցել մեր գյուղը, դեռ ահագին բան կիսատ-պռատ է, անսարք-անկարգ, ու գյուղն ասես կտրված – մեկուսացված է աշխարհից, մանավանդ ձմռան ճքճքան ցրտերին: Ո՛չ գործ, ո՛չ էլ հետդ խոսող, զրուցակից...էղած – չեղածը մի ռադիո, բայց հո առավոտից իրիկուն ռադիո չե՞ս լսի:

Սիրտս էնպես է նեղվում, որ քիչ է մնում խելագարվեմ:

Դե, ես արդեն որսի չեմ գնում, ծնկներիս մեջ հալ չի մնացել, էլ բանի պետք չեն: Համա դուզը որ ասեմ, ջահել ժամանակս էլ որսորդության մի կարգին սիրահար չէի:

Չես ուզու՞մ էս սառույց կտրած տան մեջ Աստծու ամեն առավոտ կանուխ վեր կենաս՝ փայտ կոտրատես, ջուր հավաքես, անասունի առաջ խոտ լցնես, հետո էլ շուռ գաս դեպի բուխարին ու... Դոշդ տաքացավ, մեջքդ պաղի, շուռ եկար՝ էս անգամ էլ՝ մեջքդ տաքանա, քիթդ պաղի:

Ինքնաբերաբար մոտենում ես պատուհանին, կանգնում, դուրս նայում, ու սիրտդ մի տեսակ ճմլվում է՝ տեսնելով գյուղի ցեխակոլոլ ճամփաներին դաջված անասունի կճղակների հետքերը:

Եվ հանկարծ՝ պատկերը ցնդում է ասես ու... քթիդ է խփում... թրիքի հոտը:

Շունն էնպես անհոգ է փռվել-մրափել բուխարու առաջ,

որ կոպալով էլ խփես, դուրս չես անի: Ոչ դարդ ունի, ոչ ցավ, ոչ մի բանի հոգս չի քաշում: Թե մճաղու մի փոքրիկ կտոր դեմը գցես, անհավես, ալարկոտ-ալարկոտ առաջ կգա, չտվեցիր՝ առանձնապես գլուխ էլ չի ջարդի դրա համար:

Կինոներում ի՜նչ սիրուն, ի՜նչ հրաշալի են ցուցադրում էս անվերջանալի իմերելական ձմեռը՝ պռունկը կոտրած կուժը կողքներին, բուխարու շուրջը իրար գլխի հավաքված հարևաններ...Քարածուխի անթեղին դրված թավայի միջի մճաղին ու.. սիրտ բացող իմերլական կատակ-երգը՝ «Չարիրաման»[1]....Լավ, ախպերս որ դու ես, էսպես ասենք մի անգամ, երկու անգամ, երեկ չէ առաջին օրը, երկու շաբաթ առաջ... Բայց ամեն օ՞ր: Ամեն օր սառը մճաղի[2], ամեն օր մրմրացող, ծուխ արձակող բուխարի, ամեն օր երեք օրվա լոբի, ամեն օր հոգս ու ցավ, ամեն օր ձանձրույթ, սրտամաշ մտքերից ու խոհերից ամեն օր ծնվող տխրություն ու թախիծ...

Ո՞վ ունի քո ժամանակը, ո՞վ է քեզ հիշողը: Ամեն մեկը իր վառարանի կողքին է ննջում կուչ եկած, նույնիսկ դուրս գալ ալարում: Ո՜չ ղոնախ եկող, ո՜չ ղոնախ գնացող:

Ի՞նչ ղոնախ, ո՞վ պիտի գա, ո՞վ՝ գնա... Հա՜, ասենք թե մի կերպ քնեցիր, բա հետո՞, մինչև լուս քնել չե՞ս ուզում: Աշխարհի վրա գիշեր է իջնում:

Բուխարին կամաց–կամաց սկսում է մարմրել: Ալարում

1 վրացական ժողովրդական կատակ-երգ
2 եգիպտացորենի ալյուրից պատրաստած բլիթ(մեզրելական)

ԵՐԻՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ես դուրս գալ ու փայտ բերել: Քնում ես հենց բուխարու մոտ: Ոսկորներիդ մեջ մտած ցուրտն արթնացնում է քեզ: Աչքդ գցում ես անկողնու կողմը: Սրթսրթում ես, հուզմունքից շնչահեղձ լինում:

Էս հեր օրհնածն էլ... որ իսկական հալալ կաթնակեր լինի, քեզնից մի քիչ շուտ կպառկի ու անկողինը կտաքացնի: Լամպի լույսի տակ սառած նստած՝ կանաչեղեն է մաքրում: Դե, եկ ու էս սառույց անկողնում տաքացիր: Մութն էնպես վրա կհասնի, որ կողակցիդ մի բառ անգամ չես հասցնի ասել:

Համ էլ ի՞նչ ասելիք կա, որ, ինչի՞ մասին պիտի խոսենք... Ո՞ր մի թազա պսակվածն էլ մենք ե՛նք...40 տարի եղավ՝ իրար միս ենք կրծում: Հիմա ի՞նչ նոր բան պիտի ասի որ... Ամեն ինչ էլ շատ լավ գիտենք: Երկուսս էլ: Ամեն ինչ էլ պարզից պարզ է:

Հրե՛ս, էս մի օրն էլ հանձնեց Տերը: Ու ի՞նչ, մի բան փոխվե՞ց... Լուսումութին նորից վեր կացար, նորից փայտը կոտրտեցիր, նորից ջուրը հավաքեցիր, նորից անաստունի առաջ խոտ գցեցիր ու նորից նստեցիր բուխարու մոտ: Թութունի հոտից էլ հեղձուկն ու հազն են սպանում քեզ.... Ուրիշ էլ ի՞նչ ... Ոչի՛նչ:

Զարթնեցի գիշերվա կեսին, շան փսգստոցից: Երեկվանից մսացել է բուխարու մոտ ու հիմա խնդրում է դուրս թողնել:

Միրտս ճաքեց... Չե՞ս ուզում նորից քնել: Ոտքերս գցեցի կալոշների մեջ, ու քստքստացնելով, մոտեցա դռանը:

Շունն առանց ետ նայելու դուրս թռավ: Ու էն պահին, երբ դուռն ուզում էի սողնակով փակել, ինչ-որ բան ոնց որ թե հրեց ինձ: Ասես ինչ-որ բանից երերացի: Երևի ճնշումս բարձրացավ՝ մտածեցի: Նորից ինչ–որ բան ինձ շարժեց: Ասես հատակն օրորվեց, ու ես օդ թռա: Հազիվհազ վերադարձա մահճակալի մոտ: Էս Պելագեյաս էլ նստել է անկողնու վրա ու աչքերն ինձ հառել:

– Չզգացի՞ր ...ասում է:

– Ի՞նչ ես ուզում, ա՛յ կնիկ, – ոտքերով ուղղում եմ վերմակը:

– Ոչինչ չզգացի՞ր:

– Ընչի՞ ես հարցնում:

– Ա՛յ, հենց էս պահին... ոչինչ չզգացի՞ր...

– Ոչինչ, – ասում եմ ես ընդամենը, չեմ ուզում ճնշմանս մասին ասել, պիտի իզուր տեղն անհանգստանա ու մեկ է՝ ոչնչով չօգնի:

– Հաստատ երկրաշարժ էր: Մահճակալը ոնց որ թե գնաց ու էկավ...:

– Քնի՛, այ կնիկ, քնի՛: Կա – չկա՝ էրազ ես տեսել կամ էլ գլուխդ ես բարձին թարս դրել:

Էս ասելս ու ներքևից ասես մի բան խփելը, մեզ օդ թռցնելն ու մեր երկուսի հատակին թրմփալը մեկ եղավ:

Տան մեջ ղժվժոց է, ամեն ինչ դղրդում է, օրորվում, տեղահան լինում, թվում է՝ ամեն ինչ շուռ է եկել, շրջվում է գլխիվայր, կամ սելավն եկել՝ տունն է քշում-տանում, մեզ էլ հետը:

Վախը խոշոր աչքեր ունի: Փորձեցի ոտքի ելնել, բայց ծնկներս ծալվեցին: Հայելին շրխկալով փշրվեց: Թարեքներից թափվեց աման – չամանը, ապակեղենը: Պելագեյան, խավարի մեջ շոշափելով, գտավ ինձ ու դատապարտվածի նման փաթաթվեց, կպավ ինձ: Կարծես թե՝ ես կարող եմ իրեն ինչ-որ բանով օգնած լինել:

Էս ամենը ընդամենը մի ակնթարթ տևեց: Երբ արդեն պատերը խաղաղվեցին, ու ես շոշափելով գտա ճրագը, որ բուխարու գլխին էր, նոր միայն ականջիս հասան անասունի բառաչն ու հատուկենտ կրակոցներ գյուղից:

Անմիջապես տաք-տաք հագնվեցինք ու բակ դուրս թռանք:

Գյուղում այս ու այնտեղ, լույսեր երևացին:

– Է՛է՛է՛՛՛է՛էյ...

– Ո՞վ ես , ո՞վ ...:

– Մինագոն եմ, Մինագոն, լսու՞մ եք ինձ...

– Հա՛, հա՛...

– Լեղաճաք հո չե՞ղաք...:

– Չէ՛, ուղղակի Պելագեյան մի քիչ վախեցավ, զկոտում է:

– Ի՛նչ ուժ ունի էս անտերն, է՛...:

– Էլ մի ասա՛, դեռ լավ է օդ չթոցրեց մեզ:

– Նե՛րս անցեք, նե՛րս, գնացեք, հանգիստ քնեք, էլ չի կրկնվի:

– Ի՞նչ իմանաս, Մինա՛գո....

– Գնացե՛ք, գնացե՛ք... հանկարծ չմրսեք, էլ չի կրկնվի, չէ՛, ես լավ գիտեմ:

Մինագոյի օդայում լույսերը հանգան: Ես ու Պելագեյան մի քիչ հետ ու առաջ արեցինք բակում, բայց ոտներիս մատները սառեցին, ու վերադարձանք տուն: Քնել կլինե՞ր, ի՛նչ քնել: Մանավանդ որ, տեսանք՝ շունն էլ չկա:

Երկրաշարժն իսկապես այլևս չկրկնվեց, բայց էդ մի անգամով էլ քիչ վախ չկերանք:

Հրես արդեն 60 տարիս էլ անցավ, բայց մեր կողմերում երկրաշարժ չեմ հիշում: Էս ի՛նչ զուլում, ի՛նչ ահավոր բան է եղել, ա՛յ մարդ, ո՛նց թափ տվեց է՛, մի ամբողջ տու՛ն, մի ամբողջ գյու՛ղ իր ասուն – անասունով...

-Դեռ լավ է վերև – ներքև էր թափ տալիս, թե չէ, որ հանկարծ լենքով վրա տար, պատերը հաստատ չէին դիմանա:

Լույսը բացվելուն պես նախ տունը լավ տնտղեցի, պատերը հո ճաք չե՞ն տվել..: Չէ՛, փրկված ենք: Հետո անասունների մոտ գնացի: Էստեղ էլ էր խաղաղություն: Անասունին ի՞նչ, նրա համար աշխարհն էն ժամանակ փուլ կգա, երբ իրեն խոտից զրկեն: Գոմի գաղջ օդի մեջ, իրենց համար անվրդով կանգնել ու էնպես են նայում ձեռքերիս, կարծես իսկի ոչինչ էլ չի եղել: Կարծես թե հողի ընդերքում էն խելահեղ ուժը հենց մենակ մեզ՝ մարդկանց համար է խփել:

Չյունախառն անձրև է: Չյան ծանրաթանձր փաթիլները, զոլեզոլ իջնելով վերևից, միանում են անձրևին, և ընկնելով փուխր հողին, անհետանում: Էս ձյուն – անձրևից սիրտս ուղղակի խառնում է: Որ մենակ ձյուն

գա, ավելի լավ. շրջական ուրիշ տեսք կստանա:

– Լսու՞մ ես:

– Հը՛...:

Ջրափոսի մեջ կանգնել է Մինագոն՝ չըլը՛մփ, չըլը՛մփ, չըլը՛մփ....

– Հո բան չի՞ եղել... Բարի աջողո՛ւմ...:

– Չէ՛....լաաա՛վ պրծանք: Մենակ թե....էն Շաքրոյի, Խարաբաձեի տունն է փլվել:

– Հետոոոո՞-...վեր թռա տեղիցս... մա՛ռդ եմ....

– Դեռ լավ է՝ հասցրել են դուրս թռնել: Առաջին անգամ որ խփել է, Շաքրոն վռազ-վռազ երեխաներին է հասցրել դուրս բերել, ինքը հետո է դուրս եկել.. Կարծեմ մի քիչ նշանածն է վնասվել, թեթև, շա՛տ թեթև...

– Փա՛ռք Աստծու, էդպես են պրծել, փա՛ռք Աստծու...

– Դու էն ասա՝ հանարծ նորից չխփի...

– Բա գիշերով ի՞նչ էիր մեծ –մեծ բրդում՝ թե վե՛րջ, էլ չի՛ կրկնվի, ես հաստատ գիտեմ...

– Բա ի՞նչ անեի, ա՛յ մարդ, մեկ չի՞ դուրսը սառեսմեռնես, թե՞ երկրաշարժից տանդ մեջ սաղ-սաղ մեռնես.... թողնեի ձուն–ձմեռնոցին դրսում ցրտից սառչեի՞ք.... Բայց դե մի կողմից էլ տանն ավելի լավ չէր լինի՞.. քնի մեջ կմեռնեիք... Բայց մի կողմից էլ.... ի՞նչ վատ բան է էս երկրաշարժը որ... Քնից հանում է, որ փլատակների տակ չմեռնես.. Ի՞նչ է, լավ չի՞...

– Ի՛նչ ես ծիծաղում, ա՛յ խելառ..

– Բա ի՞նչ անեմ, – ասում ու նորից ծիծաղում, ծիծաղից

ուշքից գնում է:

Վռազ-վռազ ռեզինի սապոգներս հագա, պարկն առա ձեռքս, ծայրերը սկսեցի հանգուցել, քառածալ արի, գլխիս քաշեցի ու ...

– Արի: Էսպես իջնենք, կարճ ճամփով:

– Ցեխի մեջ կկորենք, ա՛յ մարդ...

– Գնացի՛նք, գնացին՛ք, էն նոր ճամփով՝ ավելի վատ... Էդ դարիվերը ո՛չ սելով, կլինի բարձրանալ, ո՛չ էլ մեքենայով...

Շաքրոիան բլրալանջի թեքատի վրա է ապրում, ջրի ափին: Բավականին մեծ բակ ունեն, բայց ի՞նչ օգուտ: Տեղը լավը չի, խորդուբորդ է, լրիվ անհարթ: Դե՛ արի ու էդ քանդուքարափը մշակի... Ո՞նց... Շշմելու՛ բան... Նախանցյալ տարի ախպոր հետ կռվեցին, դրա համար էլ ինքը էստեղ տեղափոխվեց: Մի կերպ մի քիչ շենքուշնորհքի բերին: Հին, ավերակ տունը կարգի գցելու համար լավ էլ ծախս է պետք, չէ՞... Ես ու իմ Աստվածը, էդ գնով թազա տուն կարող ես առնել ու ավելի հեշտ ու հանգիստ, առանց չարչարվելու մեջն ապրես:

Էստեղ գլխավոր գործերն արդեն պրծել են: Էն, ինչ երկրաշարժը չհասցրեց, արեցին հարևանները: Քանդել են Շաքրոյի ավեր տունն ու գերանները ու մեկ-մեկ դարսել բակում:

Կանայք հնոտիներն են քարշ տալիս խոհանոց՝... Խոհանոցը նոր է, հերձաքարի կտուրով: Ոչինչ, մարդը մի որոշ ժամանակ յոլա կգնա: Դե, մենք էլ մարդ ենք, չէ՞... Վրա

ԵՐԻՎԱՆՅԱՆ ՆՈՍՔՈՐՈՍՅԱՆ

հասանք, ինչով կարողացանք օգնեցինք, հիմա էլ հրես՝ ընկուզենու տակ խարտքար ենք դրել՝ խարտոցենք պիտի: Մի տասը հոգի ոտքի վրա պտույտ ենք տալիս: Էսօր ինչ հասցրինք՝ հասցրինք, վաղվանից լուրջ գործի կանցնենք: Բայց էս Շաքրոն կպել է մեզ ու ծիծաղեցնում է... Գժվե՞լ է էս տնաշենը, ա՛յ մարդ... Երանի էս անբախտին...տունն ավերվել է, ինքը ծիծաղում է

– Ի՞նչ ես ծիծաղում, ա՛յ տղա, – ասում եմ ջղայնացած:

– Տիտե բիձա՛...էս եքա գեղում գոնե մի մարդ հո կլինի՞, որ ուրախանա իմ հաշվով: Հա՛, հա՛...ուրախանա: Էդ մասին խոսք լինել էլ չի կարող: Գյուղը հենց նրանով է գյուղ, որ մարդուս վատով էլ ուրախացող լինի: Դե՛, ես էլ...ա՛յ, հենց է՛դ մարդու համար եմ ծիծաղում, նրա ջիգրու, դե թող հիմա սիրտը տրաքի: Բա ի՞նչ անեմ, նստեմ լամ՝ ինձ կոտորե՞մ: Դրանով ի՞նչ կարող եմ անել, դրանից ի՞նչ օգուտ: Թող ինքը լաց լինի, ես ինչո՞ւ լամ: Հա՛, ասենք, կնկանս մեջքին կղմինդր ընկավ ու մի քիչ վատ զգաց իրեն: Ուրիշ ի՞նչ է եղել որ..., Շա՛տ լավ ենք պրծել: Իսկ ինձ որ լսեր, իսկի էդ էլ չէր պատահի: Ասում եմ՝ ա՛յ կնիկ, շու՛տ արա, դուրս փախի: Հըլը երկու երեխեն էլ դոշիս կպած: Մինչև ամեն ինչ չդասավորեց, մինչև բոտերը չկապեց, հըլը կարծեմ հայելու մեջ էլ չնայեց, ոտքը դուրս չդրեց: Կանգնել եմ երեխեքի հետ դրսում ու գոռում եմ: Ի՞նչ է, երկրաշարժը քեզ պիտի՞ սպասի...Հազիվ հասցրեց... Ոտքը դուրս դնելն ու ահագին քարը մեջքին ընկնելը մեկ եղավ: Տնաշենը շա՛տ, շա՛տ ուշ բարեհաճեց դուրս փախչել:

Էնպես հավեսով ու համով – հոտով է պատմում Շաքրոիան, որ մեռելին էլ կծիծաղեցնի: Դե՛, մենք էլ, մարդ ենք, էլի՛, հարևաններով եկել ենք տունը փլված էս մարդու մոտ՝ մի քիչ մխիթարելու, ոգևորելու համար: Բայց հույս տալս ո՞րն է. Արաբաձեները ամենևին էլ հուսահատված չեն, ընդհակառակը հիանալի տրամադրություն ունեն: Աստված նրանց զորավիգ:

Մյուս օրը, լուսումութին Շաքրոիայի տանն եմ: Ես ու Մինագոն երկու տասմետրանոց, երեք տարվա հին գերան տարանք: Անտառում էինք պահում, փակ, ապահով տեղում: Նմանապես էլ ուրիշները՝ ով ինչով կարողացավ, օգնության ձեռք մեկնեց:

Էսպես ժամանակ գյուղը մենակ թշնամու դեմ մեջք կանի: Մեկը փայտ բերեց, մեկը՝ սյունի գերան: Իրար անցանք, ասեցինք, խոսեցինք, վերուղիր արինք, չափ ու կշիռ, ինչ-որ փոխելու էր՝ փոխեցինք, ինչ–որ ավելացնելու էր՝ ավելացրինք ու տունը ոտքի կանգնեցրինք:

Գործ էլ լավ է՝ եղավ: Հազիվ չէ՞ր ուշքի եկա: Թէ չէ, ի՞նչ շնորհք՝ առավոտից իրիկուն բուխարու առաջ վեր ընկած՝ իսկի տեղիցս էլ չեմ շարժվում:

Արդեն երրորդ օրն է, Շաքրոիայի մոտ բանվորություն ենք անում: Երկու օրվա գործ է մնացել: Մենակությունը հալումաշ է անում մարդուն: Մարդն ասես փտում է... Իսկ հիմա՞...Սրանից էլ լավ բա՞ն: Միասին ենք: Ուտելիքն էլ ախր ուրիշ համ ունի կարծես: Շաքրոիայի մառանում մի փոքրիկ, երեք գավաթանոց կավի աման գտանք ու դա

ԵՐԱՄՅԵՆՑԻ ՆՈՒՆԵՐՈՒՄՅՈՒՆ

էլ մինչև տակ պարպեցինք: Հիանալի է՝ ամեն իրիկուն քեֆներս տեղն ենք տուն վերադառնում: Նույնիսկ չենք էլ զգում՝ ո՞նց է մթնում, ո՞նց՝ լուսանում: Խոսելու թեմա՞: Ինչքա՜ն ուզես: Մեր տղերքին գովելու կամ փնովելու նյութ կպակսի՞: Էս տնաշենի երկրաշարժը գոնե մի անանց գանձ թողեց մեզ իրար վրա խոսել-բամբասելու: Ամեն մեկն իրենն է պատմում: Ասում եմ՝ ես ու Պելագեյան վախից հատակի վրա էինք իրար սիրում, մատի փաթաթան դարձրին էս պատմությունը: Մինագոյին լռեցնել կլինի՞: Հին կալոշի պես բերանը բացել ու ասում է՝ Տիտե՛բիձա, սիրտդ մի՛ կոտրի, որ էդպիսի ժամանակ է էդ երկրաշարժը վրա տվել... Ասում, ծիծաղում, ուշքից գնում ու ավելացնում է՝ բայց դու թե նամուսով մարդ ես, գիշերհանա հատակի վրա ի՞նչ գործ ունեիր... Ու էլի շարունակում է՝ տակը, ասում է, դո՞ւ էիր, թե՞ Պելագեյան: Էնպիսի ճոռթած, լաբարոշ բերան ունի, որ ջվալով էլ չես փակի: Շշկլվես՝ մի բան ասես, կկպնի դրանից ու վե՛րջ, պրծում չի լինի՝ իսկական սատանի ձագ: Էնպես վրա կտա ո՛ր... Տղերքը մի երկու անգամ բերնին եկան, բայց հե՛չ վեջն էլ չեղավ: Է՜հ, ի՞նչ անենք, մարդ են, էլի՛, կատակ են անում, ծիծաղում են՝ թող ծիծաղեն: Վերջում էլ կձանձրանան՝ կհոգնեն ու կլռեն:

...Արդեն երկու շաբաթ կլինի, որ Շաքրոիայի տունը սարքել – վերջացրել ենք, ու նորից առաջվա նման նույն փայտն ու խոտը, նույն բուխարին, բուխարու մոտ փռված շունը, նորից իր անվերջանալի գործի երեսից լեզվին կողպեք՝իմ պառավը...

...Եվ, ահա, ձյուն է եկել ու էն էլ՝ ո՛նց...

Մի երկու անգամ չորս կողմը մի լավ սառեցրեց: Հիմքը լավ ամրացրեց ու հետո սկսե՛ց... Ամբողջ օրը առատ-առատ եկավ ու եկավ, բրդեց ու բրդեց... Էրեխի նման կանգնել եմ պատուհանի մոտ և ինձ ու ինձ ասում եմ՝ երանի չկտրվի: Բայց չէ՝ ամբողջ գիշերն եկավ ու եկավ:

Առավոտյան ձյան բարձրությունը մի քիչ մտքերի մեջ գցեց ինձ: Սանդուղքը չի երևում, ձյունը դուռ ու երդիկ ծածկել է՝ մինչև պատշգամբ: Մանրամաղ, բայց պի՛նդ, ծանրաթա՛նձր ու խի՛տ, առա՛տ: Ջրհորի մենակ խուփն է երևում: Ձյան բարձրությունը մետրուկես կլինի: Առաջին հերթին ոտատեղի ճանապարհը պիտի մաքրել: Ոչխարենի յափնջին գցեցի ուսերիս, դուրս եկա ու սկսեցի փնտրել ձյուն մաքրելու բահը:

– Հըլը մինչև հարևանիդ դուռը պիտի ճամփա բացես, Տիտե՛ բիձա, – չափառի մոտ Մինագոն է կանգնած, – ճամփեն հո չե՞ս խառնել: Բա՛րև...:

– Ճիշտ ես, բայց առաջին գործը, մեկ է, ոտատեղն է, -ծիծաղեցի ես,-Ա՛ստծու բարին:

– Բայց լաա՛ավ նստեց, հա՛...

– Հա՛, շա՛տ լավ: Ծանր ձյուն է, հըլը ու՞ր ես, էլի պիտի բրդի:

– Ծանր է, բա ի՞նչ է, ձեռքերս արդեն թուլացան... Նոր Իպոլիտեի մանչն անցավ, ասում էր՝ Շալիկո Խաբուրզանիայի տանիքն է փլվել: Սուտ – օղորթ՝ չգիտեմ:

– Ե՞րբ:

– Երևի էս գիշեր...

– Դե հիմա արի մի բան գցիր ուսերիդ, գնանք՝ տեսնենք՝ ի՞նչ է պատահել: Հայ հո՛յ... Տիտե՞.. Ի՞նչ պատահեց, հը՞... Չլինի՞ հոգուդ խորքում ուրախանում ես, որ Խաբուրզանիայի տանիքը փուլ է եկել:

Էսի՞նչբան է:Ծերությու՞ն:Անգործության ցա՞վ:Կգնանք, հիմա էլ մի երեք օր Շալիկոյի մոտ կաշխատենք, միասին կլինենք, սրտներս մի քիչ կբացվի, կթեթևանանք,կասենք, կխոսենք, շուլուխ կանենք, կծիծաղենք, կուրախանանք՝ ասում եմ ինձ ու ինձ: Հետն էլ գցում – բռնում եմ՝բա եղա՞վ...էս երբվանի՞ց էսպես չար դառա: Ի՞նչ սատանա է վերջերս մտել մեջս,չեմ հասկանում: Չլինի՞ թե հիվանդ եմ: Առաջ չգիտեի էլ, թե դարդ ու ցավն ի՞նչ էր: Ի՛նչ նեղանալ, ի՛նչ անհանգստանալ, ո՞վ ուներ դրա ժամանակը: Պետք լիներ՝ անապատում էլ կաշխատեի: Բանից պարզվում է՝ տարիներն են բերում իրենց հետ էս ամենը... Թե՞ ինչ-որ ուրիշ բան է գլխիս մեջ տեղի ունենում:

– Էս ի՞նչ ես անում, ա՛յ մարդ, մեռա քեզ սպասելով, սառեցի արդեն..

– Ես չեմ գա, դու գնա, – մտքերի մեջ ընկած՝ ասաց Մինագոն ու նայեց երկնքին:

– Աա՛....ճիշտ է, բոլորովին մոռացել էի...դե՛, լավ, ես գնացի, - երկու ոտքս մի կոշիկի մեջ դրեցի ու վերջ՝ գնացի: Բոլորովին մտահան էի արել, որ Մինագոն ու Շալվան իրար հետ չունեն: Անցյալ տարի Շալիկոիան իր բակից մահակը շպրտեց, կպավ Մինագոյի ծոցվոր խոզին՝

գոճիներն էլ սատկեցին, խեղճ մերունն էլ չդիմացավ էդ ծանր, օրհասական երկունքի ցավին, նա էլ սատկեց... Շա՛տ մեղք էին: Ես ու Մինագոն վրա հասանք: Խեղճ մարդը բոլորին էլ դեն շպրտեց: Սարսափելի՛ բան էր... Չէ՛, չկռվեցին իրար հետ, մի թթու խոսքն ինչ է, իրար չասեցին, բայց դրանից հետո Մինագոն ...էլ չի բարևում Շալիկոին: Մինագոն իր բարևը կտրեց նրանից... Աստծո՛ւ տված բա՝րևը... Բա դա քի՞չ բան է...

Իպոլիտեի տղան ճիշտ էր: Շալիկոյի օդայի տանիքը լրիվ նստել էր: Երևի քիվերն էին փտել, որ ծանրությանը չդիմացան:

Շալիկոն վերև է բարձրացել ու հենց վերևից է ձյան մեջ նետում կղմինդրները: Բայց ախր էսպես իրար վրա ցրտից կսառչեն դրանք ու լրիվ կկոտրտվեն: Ո՞նց կարելի է էսպիսի բան: Կղմինդրը պիտի մեկի ձեռքից մյուսին փոխանցվի աստիճանների վրայով, գոնե մի երեք մարդու ձեռքով: Զարմանալի մարդ է էս Շալիկոն, ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է: Նախ զարմացա, որ նրա ընտանիքի անդամներից բացի, բակում գործ անող մարդ – մաղաթ չկար: Բայց երևի դեռ ոչ ոք չի իմացել, ու լուրը մարդկանց հասցնելու համար գնացի դեպի դարպաս: Նախ մի կերպ բացեցի, ձյունը մի կողմի վրա թափեցի և ամբողջ ուժով հասա դռանը: Կիսով չափ բացեցի, բայց ի՞նչ օգուտ, շինանյութը հո պիտի դո՞ւրս տարվի: Չէ՛, բատոնո[1], օխտը փիլիսոփա էլ որ գան, ինձ չեն համոզի, որ

1 պարոն

Շալիկոն ճիշտ է: Էս էի՞ր ուզում: Հասկանալի է, մարդ է, տրամադրություն չունի, բայց անտրամադիր լինել հո չի՞ նշանակում խելագար լինել: Եկել եմ, ասում եմ՝ Շալվա , ա՛յ մարդ, մի՛ վախեցի, հիմա ամբողջ գյուղն էստեղ կհավաքեմ: Մի՛ մտածի, մի բան կանենք: Դու մենակ տախտակներ բեր, գործիք հասցրու, մուրճ, բան-ման ու ես, ասում եմ, մի որպեսզի տղաներին էստեղ կբերեմ: Ի՞նչ է եղել քեզ որ, ասում եմ, պատերդ հո կա՞ն.. Էն խեղճ ու նաչար Շաքրոիա Խարաբաձեի տունը հողերին էր հավասարվել, ասում եմ, բա նա ի՞նչ ասի... Ասում եմ ու մտածում, թե էսքան բանից հետո ի՞նչ պիտի ասի: Կամ պիտի ասի՝ շա՛տ շնորհակալություն, Տիտե՛, Աստված քեզ պահապան, հարևաններին կանչիր, օգնեք ինձ՝ տանիքս ծածկեմ, Աստված էլ ձեզ հասնի: Բայց գիտե՞ք ի՛նչ է ասում էս մարդը: Ասում է՝ մի՛ անհանգստացի, Տիտե՛, պետք չէ թամաշի բերել ամբողջ աշխարհը: Ասում է՝ էստեղ որ տաս մարդ աշխատի, ավելի բեթար են փլելու առաստաղը: Ոչ թե կօգնեն, այլ ավելի կփչացնեն ամեն ինչ: Ժողովուրդը սիրում է թամաշա անել ու զվարճանալ, իսկ ես, ասում է, էս ձուն – ձմեռնոցին իմ տանիքով խաղքի չեմ պատրաստվում: Հետն էլ ավելացնում է, որ փափախը կամ ս գդակը ճո՛նը պիտի կարի: Նրանք ի՞նչ, իմ ճաշակով պիտի՞ ամեն ամեն ինչ ու մեխը ճի՞շտ խփեն: Կգնամ՝ ուստեք կբերեմ, մի քանի կոպեկ կվճարեմ ու սարքել կտամ՝ լա՛վ, պի՛նդ, հուսա՛լի: Տալ ու առնելիք չեմ ունենա, ոչ է՝ պարտք ու պարտմուրհակ: Դրանք մի բան կանեն, բայց էգուց մեկել օր երկուսը կուզեն քեզնից: Գնա՛, Տիտե՛, գործիդ կաց: Ա՛յ թե ինչ ասաց ... Բայց ի՞նչ արած... ի՞նչ կարող ես ասել: Ինչ էլ

լինի, Աստված չանի էսպիսի բան... Քեզ եմ հարցնում՝ բա սա մարդկությո՞ւն ա:

Դե ասեք՝ գելն ավելի լավ չի՞, քան թե էսպիսի մարդը: Քանի՞ անգամ եմ տեսել... ձմեռներին.. սոված գելերը միասին հավաքվում են ու ոռնում: Սոված են, ախր, ա՛յ մարդ, ստամոքսները տանջում է ու... իրար են օգնում: Իրար տեսնել չեն ուզում, բայց միասին են, միասին են ոռնում: Լսու՞մ ես ինձ:

– ...

Սիրտս տակնուվրա՝ անցնում եմ ձյան միջով: Ջհանդամը գնայի, պե՞տք էր: Ամեն մարդ թող իր գործին նայի: Մինչև իրենք իրենց ոտքով դուռդ չգան, չխնդրեն՝ թե օգնի, ո՞վ է քեզ խնդրում, որ գնաս քիթդ խոթես ուրիշի գործերի մեջ:

Չէ՛, սիրելի Իմանո, էսպես էլ չէ ախր: Թող մենակ թշնամիդ իր պատուհանից տեսնի հարևանի ավերակ կտուրը, թող մենակ թշնամիդ ասի, թե ինձ ի՞նչ ուրիշի ցավը կամ իմ ցավը, ուրիշի ծեղը...Սատարելը հո մենակ նեղության մեջ գտնվելու ժամանակ օգնելը չէ... Չէ՛, ջանս... Սատարելը միասին լինելն է, ա՛յ մարդ, դու հասկանու՞մ ես միասին լինելու ողջ գեղեցկությունը:

Բակ մտնելուն պես եգիպտացորենի մարագն ընկավ աչքիս ու մի միտք կայծակեց ուղեղիս մեջ: Աստվա՛ծ իմ, գթա՛ ինձ, իսկապես արդեն հին է իմ մարագը: Ձյունը թե չկտրվի, ո՞վ իմանա գուցեն չդիմանա ու փլվի:

Մեջքս շտկեցի: Երկու ժամում մաքրեցի մարագը:

Ամբողջ եգիպտացորենը խոհանոց քարշ տվեցի ու հետո էլ տանիքի վրա փռեցի:

Պելագեյան նայում է ինձ, բայց ձեն-ծպտուն չի հանում: Եթե էդպես եմ անում, ուրեմն, էդպես էլ պետք է: Պելագեյան շատ լավ գիտի այս բանը: Հետո մարագի հետևից տանիքի գլխավոր գոտիով կանեփի հաստ, լրիվ թարմ պարան կապեցի, գողի նման էս կողմ – էնկողմ նայեցի՝ հո ոչ ոք չի՞ տեսնում, մի անկյունում պահ մտա ու...քաշեցի...

Եգիպտացորենի մարագը խուլ ճռնչյունով փուլ եկավ:

Կայծակնային արագությամբ պարանը բաց թողեցի, փաթաթեցի ու տեղից կախեցի: Ձյունը վրայիցս թափ տվեցի, կարծես իսկի ոչինչ էլ չի եղել, տեղավորվեցի բուխարու առաջ ու, սանդերքին հակված՝ ասում եմ, Պելագեյային.

– Խմոր հունցիր ու դրոժ խառնի...Իսկ էն չալպտուրիկ հավին ու էն մյուս կարմրատոտիկին, էն, որ ձու չի ածում, վաղը հավաբնից դուրս չթողնես: Գործ ունեմ, օգնության կարիք ունեմ, տղերքին եմ կանչելու: Ախր ձյունը հիմա էլ իմ եգիպտացորենի մարագն է ավերել, է՜ ...

Պելագեյան լուռ է: Ամեն ինչ լավ է: Տեսնես մի քիչ գոնե գլխի ընկա՞վ Պելագեյան:

ՍԻՐՈ ԴԱՏԱՊԱՐՏԱՎԱՃՆԵՐԸ

Դրախտում իսկական դրախտային եղանակ էր: Իսկ դրախտում, ինչպես հայտնի է, արեւը ո՛չ ծագում, ոչ էլ մայր է մտնում:

Արեւ ընդհանրապես չկա:

Դրախտը լուսավորված է թատերաբեմի խորքերից աստիճանաբար դեպի առաջաբեմ սահող դալուկ, եթերային լույսերի հանգույն:

Առավոտյան ժամը ինն է:

Օրվա այդ պահին հանգուցյալները սովորաբար արդեն ավարտած են լինում իրենց անդրանիկ աղոթքը եւ պատրաստվում են նախաճաշի:

Ահա հենց այդ ժամանակ էր, որ հանգուցյալ Գիվի Ծուլաձեի առջեւ հայտնվեց հրեշտակը:

-Պարոն Գիվի՛, ներողություն՝ Ձեզ անհանգստացնելու համար:

-Լսո՛ւմ եմ:

-Մեր անցակետ մի երիտասարդ կին է եկել: Նա համառորեն Ձեր տեսակցությունն է խնդրում:

«Ո՞վ է տեսնես- մտածեց Գիվին,- կանանց հետ վաղուց եմ հաշիվներս մաքրել»:

Հրեշտակն, ինչ ասել կուզի, կռահեց նրա միտքը:

-Ամբողջ գիշերը, ոտքի վրա է անցկացրել, ըն-

դունարանում: Ասում է՝ մինչեւ պարոն Գիվիին չտեսնեմ, այստեղից մի քայլ չեմ հեռանա:

-Անունն ի՞նչ է:

-Եթե չեմ սխալվում՝ Շորենա:

«Ուրիշ ո՞վ պիտի լիներ»,- Գիվիի սիրտը կծկվեց:

-Հանձնաժողովն ի՞նչ որոշում է կայացրել. դրա՞խտ են անցկացնում:

-Մեղք ու բարիք, չար ու բարի արդեն չափել-կշռել են: Ընդհանրապես լավ տվյալներ ունի: Բայց մի պրոբլեմ կա՝ ինքնասպանություն է գործել: Իսկ ինքնասպաններին դրախտ չեն ընդունում: Հրեշտակապետը ձեռնպահ է: Ետ ուղարկել էլ չենք կարող, արդեն յոթ օրվա հանգուցյալ է: Առանց այն էլ ինքնասպանության երրորդ օրն են գտել:

-Հա՛, բայց չէ՞ որ ըստ դրախտի կանոնադրության բացառությունները թույլատրելի են,- Գիվին ամեն կերպ ջանաց, որ հուզմունքն իրեն չմատնի, թեեւ հոգու խորքից ակունքվող ափսոսանքի ու հուսահատության ողողանջները մի ուրիշ, մի անմեկնելի թնդյունով արձագանքվեցին ունկերում:

Ուսերին գցեց երկնագույն մանտոն եւ հետեւեց հրեշտակին:

Կոտեջի դուռը չփակեց:

Դրախտում դուռ ընդհանրապես չեն փակում:

Ջայլամի փետուրներով զարդարված վերելակով բարձրացավ երրորդ հարկ: Աջակողմյան երկրորդ դռան վրա ցուցանակ կար, որի վրա խոշոր տառերով գրված էր.

«Հրեշտակապետ Միքայել-Գաբրիել»:

Թակեց դուռը:

Տեսնելով, որ չեն բացում, կամացուկ բացեց: Գլխավոր հրեշտակը նիրհում էր: Փոքր-ինչ հապաղելուց հետո, Գիվին վարանումով հազաց:

Անդրաշխարհի տիրակալը սթափվեց եւ, նայելով եկվորին, տեղից վեր ելավ.

-Ներեցե՛ք, խնդրում եմ, պարոն Գիվի: Գիշերն աչք չեմ փակել: Այսպիսի ծանրաբեռնված գիշեր վաղուց չենք ունեցել: Միայն քսանյոթ հանգուցյալ Քութաիսիից ընդունեցինք: Վաղո՞ւց եք սպասում:

-Ո՛չ: Նոր մտա:

-Հրեշտակն արդեն Ձեզ ասած կլինի, թե ինչու եմ կանչել:

-Հա՛, մոտավորապես:

-Ես Ձեզ չէի անհանգստացնի, բայց սովորական, առօրյա դեպք չէ սա: Անդրաշխարհի բնակիչներին տեսնելու համար այսպես համառորեն ուրիշներն էլ են խնդրում-պահանջում, սակայն դուք էլ գիտեք, ես Ձեզ չեմ անհանգստացնում: Իսկ սա մի քիչ տարօրինակ կին է երեւում: Զրուցեցի: Հարցնում եմ՝ ինչո՞ւ որոշեցիք լքել այն աշխարհը. չէ՞ որ դուք պարոն Գիվիին տեսնելու աննշան շանսեր ունեիք: Չէ՛, ասում է, ես համոզված եմ, որ կհանդիպեմ նրան: Եվ ի՞նչ, ի՞նչ պիտի տա Ձեզ մի ինչ-որ տասը րոպեանոց հանդիպումը: Նախ՝ Դուք Ձեր ինքնասպանությամբ ծանրացրել եք Ձեր հոգին, եւ հետո՝ հանդերձյալ աշխարհում այլ օրենքներ են գործում, ասում

ՅԱՐՈՅՆԵՐԻ ՄՈՇԵՔՈՒՐՈՒՄՆԵՐ

եմ ես: Գիտեմ, պատասխանում է, իմ անելիքն ընդամենը մինչեւ այստեղ հասնելն էր, իսկ հիմա պարոն Գիվին ինքը կհոգա ամեն ինչի մասին, ինձ անտեր-անտիրական չի թողնի: Ծիծաղս եկավ, բայց, գիտե՞ս, հարցնում եմ, թե ո՞ւմ հետ ես խոսում: Գիտե՛մ, ասում է, Միքայել-Գաբրիելի: Այդ դեպքում, շարունակում եմ, այն էլ պիտի իմանաս, որ պարոն Գիվին ընդամենը շարքային բնակիչ է: Ուրիշ ոչինչ: Այստեղ գլխավորը ե՛ս եմ: Եվ Աստծո կամոք ես եմ լուծում բոլոր հարցերը: Իսկ նա էլի իրենը՝ մի անգամ, գեթ մի անգամ հանդիպեցրեք ինձ բատոնո Գիվիին, եւ հետո, եթե կամենում եք, թեկուզեւ դժոխք ուղարկեք ինձ, էլ չեմ փնտրի: Սիրուց ավելի ուրիշ ի՞նչ եմ տեսել, բայց այսպիսի համառ սե՞ր: Այսպիսի հաստատ ինքնավստահությո՞ւն: Ա՛յ, Ձեր ծանոթուհու հենց այս համառությունն ու ինքնավստահությունն էլ ինձ մղեցին խախտել Անդրաշխարհի օրենքները, եւ քալբատոնո[1] Շորենայի հետ Ձեր հանդիպումը հենց այստեղ էլ կազմակերպել:

Գիվի Ծուլաձեն բարձրացրեց գլուխը եւ հայացքը հառեց Գլխավոր հրեշտակի փափկաճերմակ մորուքին:

-Ո՛վ Տիրակալ, այն, ինչ Դուք բարեհաճեցիք ասել, բնավ նորություն չէր ինձ համար: Մի ամիս էլ չկա, ինչ այստեղ եմ, սակայն բոպե առ բոպե սպասում էի, որ ինձ կկանչեք:

-Սիրո մեջ բոլորս էլ մեղավոր ենք: Ոչ էլ բաժանումի սարսափն է խորթ սիրահարներին: Դժբախտաբար,

1 տիկին

հազարից մեկ է ստացվում այնպես, ինչպես սիրահար զույգերն են կամենում, սակայն...

-Ես արդեն ասացի, որ սպասում էի այս զրույցին:

-Այսի՞նքն... Դուք ի՞նչ է, գիտեի՞ք, որ նա պիտի ինքնասպանություն գործեր:

-Մոտավորապես:

-Եվ հետո՞, ա՛յ հեր օրհնած, եթե այդքան համոզված էիք, մի՞թե չկարողացաք Շորենային փրկելու միջոցներ ձեռնարկել: Չկարողացա՞ք նախապատրաստել, որ նման բան չանի:

-Ցավոք, չկարողացա... Ոչ մի կերպ: Կարելի է ասել, որ նա այդպիսին է ի ծնե:

-Բայց չէ՞ որ Դուք սիրում էիք նրան:

-Ես հիմա էլ եմ սիրում:

-Ախր սիրո մեջ մարդիկ անհամեմատ լավ են իրար ճանաչում: Ու եթե իրոք ճշմարիտ է այդ սերը, ապա նրանք իրար ղեկավարում են, վերափոխում են:

-Նա այնպիսի ամուր կին էր, որ Դուք անգամ չէիք կարողանա հակադրվել նրա կամքին:

Միքայել-Գաբրիելը քմծիծաղ տվեց, թեեւ անմիջապես զսպեց ծիծաղը եւ լրջացավ:

-Զարմանալի՜ է... Իհարկե, նրան համոզելը դժվար կլիներ... Եվ քանի որ դա այդպես է, առավել թեթեւ պատիժ պիտի տամ ձեզ:

-Հրամայե՛ք:

-Եթե այդ բանը պատահեր մինչեւ Ձեր մեղք ու բարիք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

կշռել-չափելը, հնարավոր է, ես ձեռնպահ մնայի Ձեզ դրախտ բերելու հարցում: Քանի որ Դուք գիտեիք, որ Շորենան այդքան ամուր (գուցեեւ այդքան թույլ կամքի տեր անձնավորություն է, ուրեմն պիտի իրավիճակից դուրս գալու ելք գտնեիք: Դուք բոլոր միջոցները պիտի գործի դնեիք, որ Ձեր մահից հետո նա ինքնասպանություն չգործեր: Խելոք մարդիկ դեռեւս կենդանության օրոք են այնպես դասավորում իրենց գործերը, որ իրենց մահից հետո ոչ ոք իրեն չի սպանում:

-Իսկ եթե իմ փոխարեն Դուք լինեիք, ի՞նչ միջոցներ կձեռնարկեիք, Միքայել-Գաբրիել:

-Կհամոզեի, որ կյանքը շարունակվում է, եւ կարելի է ապրել նաեւ իմ գնալուց հետո:

-Դուք Շորենային չեք ճանաչում, նրան համոզելու ջանքն ընդամենը ապարդյուն փորձ կլիներ:

-Իսկ եթե ինքը ավելի շուտ մեռնե՞ր, այդ դեպքում Դուք ի՞նչ կանեիք:

-Հավանաբար, ինքնասպանություն չէի գործի: Ես այդքան ուժեղ չեմ, ինչպես ինքը:

-Մի՛ զարմացեք ասածիս վրա: Բայց Դո՛ւք եք այդպես դաստիարակել Շորենային: Դուք ուզում էիք, որ նա Ձեր մահից հետո ինչ-որ տարօրինակ մեղք գործեր: Դուք չարեցիք հնարավորը, որ նա ինքնասպանություն չգործեր: Հապա ուղիղ նայեք աչքերիս մեջ: Ճիշտ չե՞մ ասում: Դուք մի քիչ եսասեր եք գտնվել: Դուք ամեն ինչ արել եք, որ այդ կինը Ձեզ սաստիկ կարոտի:

-Այսի՞նքն...

-Այսինքն՝ Դուք ինչ-որ չափով մեղավոր եք:

Գիվին գլուխը հակեց՝ հասկանալով, որ Գաբրիել հրեշտակի բերանով ճշմարտությունն է բարբառում, եւ վիճելն ավելորդ է:

-Հիմա, սակայն, ուշ է Ձեզ դատել: Դրախտում ոչ ոքի չեն դատում: Ճիշտն ասած, ես շատ երկար մտածեցի... Եվ այն, ինչ որոշեցի, ոչ թե՝ ի պատիվ Ձեզ, այլ հանուն այս երջանիկ կնոջ համառ կամքի եւ նրա հավատի հանդեպ՝ իմ խոնարհման: Ես որոշեցի Շորենային թողնել դրախտում: Չգիտեմ անգամ շնորհավորեմ Ձեզ, թե՞ ոչ: Ճիշտ է, ընդհանուր օրենքի համաձայն, նա պիտի մնա Ձեզնից հեռու, կանանց գոտում, սակայն Դուք կլինեք դրախտի այն միակ մարդը, որն այն աշխարհից Անդին է եկել՝ հողեղեն հոգածությամբ ծանրաբեռն: Դուք դրախտում կշարունակեք ապրել սիրահարված մարդու խռովքներով լի, փոթորկահույզ կյանքով, եւ հենց դա կլինի այն թեթեւ պատիժը, ինչին Ձեր ռոմանտիկ արկածների պատճառով Ձեզ դատապարտեց հրեշտակների մեծահոգի հանձնաժողովը:

-Շնորհակալ եմ, տիրակալ: Ի՞նչ պիտի ասեմ Ձեզ ես՝ մեղավորս, եթե Ձերդ Սրբազնության հանդեպ իմ ներքին ձայնը Դուք ինքներդ եք զգում:

-Բարին ընդ Ձեզ:

Գիվի Ծուլաձեն ջայլամի փետուրներով զարդարված բուրումնավետ վերելակով ցած իջավ:

ეროვნული ბიბლიოთეკა

* * *

Տեղավորվեցին եթերային լույսով լուսավորված ձիթենու տակ դրված նստարանին:

-Որ ինչ-որ հիմարություն պիտի անես, դույզն-ինչ չէի կասկածում, բայց ահա ի՞նչը քեզ դրդեց ինքնասպանություն գործել:

Շորենան ծիծաղեց, գլուխը թեքեց աջ, եւ սկսեց ոտքերը թափահարել այնպես, ինչպես սովորաբար չարաճճի աղջիկներն են անում:

-Բոլորովին էլ դժվար չէր:

-Իսկ ի՞նչ խմեցիր:

-Պղնձարջասպ, երկու բաժակ: Մի քիչ կոկորդս այրվեց, հետո մի կերպ ցավն անցավ ու քունս տարավ... Մահ ընդհանրապես չեմ զգացել: Պղնձարջասպն, իհարկե, հատուկ մահվան միջոց չէ, բայց քանի որ ուրիշ բան չգտա, ապա երակներս կտրելուց ավելի դա գերադասեցի: Դու գիտես, ես վերքից շատ եմ վախենում:

-Բայց որտեղի՞ց ճարեցիր էդ թերմաշը:

-Ի՞նչը:

-Պղնձարջասպը:

-Երկաթեղենի խանութում դրանից շատ ի՞նչ կա... Ի՞նչ լավ է այստեղ...

Հանգուցյալները խոսում էին՝ ձեռքերով խաղալով հովիարաձեւ լոտոսների հետ, եւ երանություն ապրում եղեմական այգում զբոսնելուց:

Մերթընդմերթ ձիթենու տակ նստած զույգերին

էին նայում անցորդները. երեւի ուզում էին դրախտի նոր բնակիչների ով լինելն իմանալ: Փառք Աստծո, Անդրաշխարհում բամբասանք գոյություն չունի:

-Այնուամենայնիվ, ի՞նչն այսպես խելքից հանեց քեզ՝ հասուն կնոջդ... Ասում էի, չէ՞...

-Հա'... ասում էիր, բայց երբ սկսեցիր ինձ խելք սովորեցնել, արդեն ուշ էր:

-Ի՞նչն էր ուշ, ա'յ աղջի, չգիտեի՞ր, որ պիտի մեռնեմ, վաթսունյոթ տարեկան մարդ էի: Իսկ դո՞ւ, դու ընդամենը երեսուներեք տարեկան ես: Քո ի՞նչ մեռնելու ժամանակն էր:

-Քո խելքով ի՞նչ պիտի անեի:

-Ինչպե՞ս թե՝ ի՞նչ... Պիտի ապրեի'ր:

-Ո՞ւմ հետ պիտի ապրեի:

-Առհասարակ... Կան, չէ՞, միայնակ կանայք, այրիներ...

-Իսկ դու ի՞նչ, նեղացա՞ր , որ եկա:

-Չեմ նեղանում, բայց...

-Դե ուրեմն գլուխս մի' տար քո փիլիսոփայությամբ:

-Դու չգիտես, թե ինչքան եմ տանջվել՝ քեզ դրախտում թողնելու համար:

-Ա՛յդ էր պակաս:

-Այսի՞նքն...

-Ինձ որ չբերեին, ո՞ւմ պիտի բերեին, ցույց տուր տեսնեմ՝ կա՞ այստեղ ինձնից ավելի անմեղը:

-Դու չգիտե՞ս, որ ինքնասպանությունը քրիստոնյայի համար մեծ մեղք է համարվում:

-Հապա ուրիշ ի՞նչ կերպ տեսնեի քեզ, ի՞նչ է, սպասեի մինչեւ խոր ծերությո՞ւն: Գաբրիել հրեշտակը հենց սկզբից լավ աչքով նայեց: Երբ ամեն ինչ պատմեցի, նա խոր հոգոց հանեց եւ պատուհանից դուրս նայեց: Երբ շրջվեց, աչքերն արցունքից շողում էին: Չէի կարծում, որ Գաբրիել հրեշտակը այդքան փխրուն սիրտ ունի:

Գիվին շոյեց Շորենայի գլուխը.

-Իմ խե՛նթ աղջիկ...

-Այս մեկի համար ներիր ինձ, ու այլեւս հիմարություններ չեմ անի:

-Ոչ էլ կարող ես: Դա՝ էր քո վերջին հիմարությունը: Դրախտում հիմարություն էլ չեն անում:

-Ի՞նչ վատ է:

-Ձերոնք հո կգժվեի՞ն... Ամբողջ Քութաիսի համար խոսելու նյութ կդառնայիր: Եվ ամեն ինչի մեջ ինձ կմեղադրեին:

-Մորս եմ խղճում, ուրիշ ոչ մեկի: Բայց ոչինչ, կհաշտվի: Հիմա յուրաքանչյուր հինգերորդ կին որդեկորույս մայր է...

-Միեւնույն է, չպետք է անեիր:

-Սկզբից... Մի վայրկյան անգամ մտքովս չի անցել... Երբ ինձ ասացին, որ քաղցկեղ ունի, ամեն օր լալիս էի: Քեզ սգում էի, բայց արցունքներս թաքցնում էի քեզնից՝ հանկարծ գլխի չընկնես: Դողում էի. չէ՞ որ ախտորոշումը քեզնից թաքցրել էին, դու ոչինչ չգիտեիր:

-Ինչպե՞ս թե չգիտեի, Շորենա՛: Երբ անալիզի լաբորատորիայից բժիշկը դուրս եկավ, այնպիսի

հայացքով նայեց ինձ եւ իմ կնոջը, որ ես ամեն ինչ հասկացա, նրա դեմքի՛ն կարդացի: Ինձ խաբե՞լ կլինի: Երբ բժիշկն ասաց, որ վտանգավոր ոչինչ չկա, ես արդեն կռահում էի նրա միտքը՝ դատապարտվա՛ծ է այս դժբախտը: Իսկ հետո, երբ կնոջս տարավ կողքի սենյակ, իբր թե հիվանդության պատմությունը լրացնելու, եւ կինս այնտեղից դուրս եկավ քաթանի պես սփրթնած դեմքով, խոսքերն ավելորդ էին: Ես ամեն ինչ գիտեի, այո՛, եւ մինչեւ վերջ ո՛չ քեզ, ո՛չ ուրիշներին զգացնել չտվեցի, որ օրերս հաշվված են: Մահից ամենեւին չէի վախենում, միակ բանը՝ քո՛ ճակատագիրն էր ինձ անհանգստացնում: Առանց ինձ կդժվարանա, բայց վերջում, ինչպես լինում է սովորաբար, կընտելանա-կհաշտվի, մտածում էի ես:

-Կհաշտվի՛... Ինչպիսի՛ կեղծ բառ... Ոչ ոք ոչնչին եւ, մանավանդ մահին, չի հավատում, Գիվի՛: Եթե «հաշտվելը» այն բառն է, ինչ ես էի զգում, ապա կարծում եմ, հաշտվել էի քո մահվան հետ: Ավելին... Ուզում էի որքան հնարավոր է շուտ ավարտվեր այդ մղձավանջային երազը... եւ որքան հնարավոր է... շուտ մեռնեիր: Վերջին օրերին, նրանցից, ովքեր քեզ տեսակցելու էին գալիս, տեղեկանում էի, թե դու ինչպես ես, ինչպիսի տեսք ունես, շա՞տ ես արդյոք տնքում ցավերից: Ոմանք ինձ խղճում եւ ասում էին՝ ոչինչ, լավ է, թմրեցուցիչներ են սրսկում, տեսքն առույգ է: Դե՛, ոմանք էլ, գիտես, չէ՞, անգութ մարդիկ շատ կան աշխարհում, ճշմարտությունն էին ասում, եւ ես, ցանկապատին հենված, ցավից ոռնում էի՝ չքաշվելով ոչ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

մեկից: Հաճախ վեր էի բարձրանում ձեր սանդուղքներով, բայց դռան մոտ կանգնած աներձագդ ներս չէր թողնում. երեւում է՝ լավ էին դաս տվել, թե երբ կգա, դուրս վոնդիր: Իսկ վերջում, երբ ականջիս հասան լացուկոծի ձայներ, ճիչ-աղաղակ, թեթեւացա, ուրեմն ամեն ինչ վերջացավ: Դու հանգստացար... Ինձ համար դա՛ էր գլխավորը... Դու այլեւս ոչ մի ցավ չէիր զգում: Չես հավատա, բայց ես, որ գրեթե երկու շաբաթ չէի քնել, վերջապես հանգիստ քնեցի... քնեցի քո... մահվան առաջին գիշերը: Ինձ թվում էր, թե ինչ-որ ուրիշ չափումների, ուրիշ կշռույթի մեջ եմ, ուրիշ մի կյանք է սկսվում ինձ համար, ուրիշ ժամանակ... Ես ասես ես չէի: Ասես ինձ չէի պատկանում:

Չթողեցին անգամ, որ քեզ սգայի, լայի քեզ համար, Գիվի՛: Մեռած ճակատդ ձեռքով շոյեի: Ի՞նչ իմանամ: Եվ գիտե՞ս, առաջին հերթին՝ քեզ համար չհամարձակվեցի, թե չէ ո՞վ ինձ ետ կպահեր... Գոնե հուղարկավորության պահերին ներս կընկնեի, քեզ կփաթաթվեի, բայց թույլ չտվեցին: Գուցեեւ քո ընտանիքին խղճացի, կին-երեխաներիդ: Ո՛չ, ո՛չ, ես ոչ ոքի չեմ խղճացել: Գիտեի, որ դու դերասանություն չես սիրում, եւ այս հիստերիկ քայլին հավանություն չէիր տա: Ինչեւէ:

Քեզ հուղարկավորեցին:

Արդեն իմն ես:

Հողում ես, եւ այսուհետ քեզ ինձնից ոչ ոք չի խլի, ասում էի ինքս ինձ եւ արցունքաքամ՝ հող շաղ տալիս շիրմիդ: Ծաղիկների մի մեծ բլուր գոյացավ շիրմիդ վրա: Ցրվեցին,

գնացին բոլորը, ու երբ իրիկնացավ, վրա ընկա շիրմիդ:

Եվ այդ ժամանակ միայն մի կուշտ լաց եղա: Ամբողջ գիշեր ոռնում էի, մինչեւ լույս քեզանից բոպե իսկ չհեռացա:

Ա՛յ, հենց այդ ժամանակ համոզվեցի, որ առանց քեզ չեմ կարող: Ոչ ոք եւ ոչինչ չէր կարող լցնել այն դատարկությունը, որ գոյացել էր քո գնալուց հետո: Պարզվում էր, որ դարձյալ այնպես գողունի, այնպես անլեգալ պիտի հանդիպեմ քեզ: Իսկ մի շաբաթ անց կինդ, քո շիրմի վրա ինձ հակված տեսնելով, այն օրը գցեց ինձ, որ... այս անտերն ո՞վ է, ի՞նչ ունի այստեղ: Կարծես թե ինձ չէր ճանաչում: Վեր կացա եւ մեղավոր-մեղավոր փախա՛, խույս տվեցի նրանից:

Ու բռնկվեցի ինչ-որ եսասիրական ցանկությամբ. բոլորից շուտ գայի, հասնեի քեզ:

Եվ... հասցրի՞:

Ո՛չ... ո՛չ... դեպրեսիայի մեջ, միանգամից չեմ հանգել այս որոշման՝ քեզ մոտ գալ: Քեզնով եմ երդվում, մի քիչ էլ փորձեցի, ինչպես դու ես ասում, ապրել... Քայլում էի, ինչպես ուրվական, ինչպես գնացքից ուշացած ուղեւորը օտար քաղաքում, օտար էր ինձ համար ամեն ինչ: Ամեն ինչ իմաստազրկվել էր: Հետո մայրս եկավ քաղաք, երեք օրով: Համարյա չէինք խոսում իրար հետ: Առաջ պահարանից հավաքում էի քո լուսանկարները, որ հանկարծ մայրս չտեսնի, հիմա չհավաքեցի: Հիմա ամեն ինչ միեւնույն էր: Ինքն էլ բան չհարցրեց: Ուշադիր աչքի անցկացրեց քո լուսանկարները եւ մրմնջաց. խե՜ղճ, բոլոր նկարներից

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ժպտում է: Իսկապես նրան ժպիտ սազում էր, ասացի ես: Հա՛, բայց ո՞վ է ասում, որ չի սազում, ավելացրեց մայրս: Դեռ լավ է, ուրիշ ոչինչ չասաց, այլապես արցունքներով լիք-լցված էին սի՛րտս, կոկո՛րդս, աչքե՛րս... Մի բառ, եւ կսկսեի ոռնալ: Լացը հանճարեղ հայտնագործություն է: Երբեմն ինչպես է օգնում, չէ՞: Սարսափելի է զսպած, ուրիշներից թաքցրած, խեղդված լացը:

Գնաց մայրս, եւ բոլորովին մենակ մնացի: Ի՞նչ պիտի անեմ առանց քեզ, հո կգժվեմ, եթե վերջնականապես հավատամ, որ երբեք չես գա: Աշխատանքի տեղում դեռ ոչինչ, ինչ-որ բան հարցնում են, ինչ-որ պատասխանում են. «Ինչպե՞ս, ախր, ի՞նչ կերպ. մի՞թե հնարավոր չէր փրկել», «Երեւի ախտորոշումն ուշացրին», «Երեւի ճակատագիր էր»: Սգվորի հետ բոլորն էլ միանման են խոսում: Ես էլ՝ «Չգիտեմ, ոչինչ չգիտեմ»... «Այդքան ջղայնությունից հետո, դեռ լավ է այսքան էլ ապրեց», «Նախանձից մաղձոտած, փոքրոգի թշնամիներն այնպես էին վարվում, կարծես միակ զավակին կորցրած չլիներ»... «Մենք բոլորս սպանեցինք նրան»... «Այսպես է, մահից հետո ենք հասկանում ամեն ինչ»... այս բառերն էլ մաշված, տրորված էին թվում ինձ: Ինձ աստիճանաբար կեղծիքն էր իշխում: Անտաղանդ դերասանի էի նմանվում, որ ոչ մի կերպ չի կարողանում ուրիշի խոսքերը հարմարեցնել իր էությանը: Շուտով վրա կհասներ եւ մի այնպիսի ժամանակ, երբ իմ ընկերուհիներն էլ սկսեին ականջիս կաթեցնել. «Դե լավ, դու էլ հո նրա ետեւից չե՞ս գնալու»... Հետո կամաց-

կամաց ծննդյան տոներին էլ սկսեցին հրավիրել...Բոլորն աշխատում էին զվարճացնել-ուրախացնել, եւ, ո՞վ իմանա, գուցեեւ հասնեին իրենց նպատակին: Եվ գիտե՞ս ինչ, ամենասարսափելին էլ այն կլիներ, որ կամաց-կամաց դու կսկսեիր խամրել իմ հիշողության մեջ: Դրա մասին մտածելն անգամ նողկալի էր: Քութահիսի ամեն անկյուն, ամեն սրճարան, Ակակիի այգում ամեն նստարան, նույնիսկ այն ցամաք ցայտաղբյուրն էլ քեզ էր հիշեցնում, եւ քո բառերն էի լսում ամեն վայրկյան: Չէ՞ որ ես այլ կյանք չունեմ, չէ՞ որ ես ամբողջ կյանքս սպասումով անցկացրի: Երջանկություն է ուրեմն եղել սպասումը, որ այն ժամանակ դժվար բան էր թվում ինձ: Սպասո՛ւմ եմ... սպասո՛ւմ եմ... եւ ահա դու գալիս ես: Հետո՞ ինչ, որ ուշ... հազվադեպ... սակայն, այնուամենայնիվ, գալիս ես, չէ՞... Եվ հիմա այս դառն իրականությամբ պիտի հավատայի, որ դու երբեք այլեւս չես գա... Իսկ դու գիտե՞ս, թե ինչ է նշանակում՝ երբե՛ք չես գա: Սրանից զզվելի բառ Աստված երեւի չի ստեղծել... Եվ... «ո՛չ» ասացի առանց քեզ կյանքին: Ամեն ինչ կորցրեց իր իմաստը, գրելը, կարդալը, հանրային գրադարանը, հեռուստացույցը, հեռախոսը: Բայց չէ՛, հեռախոսից ձեռք չքաշեցի... Պիտի խոստովանեմ, էլի առաջվա պես գժի նման վրա էի պրծնում, ասես թե քեզ պիտի զանգեի... Մեկ-երկու անգամ կարծես քո ձայնն էլ լսեցի ընկալուչի մեջ, եւ քիչ մնաց ցնորվեի:

...Մի բան եւս, բայց չզարմանաս: Չէ՛, չէր թվում, դու իսկապես կանչում էիր ինձ: Ու ես սպասում էի... Սպասում

էի քնի մեջ (եթե իհարկե դա կարելի էր քուն համարել): Քո ձայնն ինձ անմիջապես արթնացնում էր, ու ես վեր էի թռչում անկողնուց՝ ո՞ւր ես մինչեւ հիմա: Սպասում էիր, չէ՞: Կանչում էիր ինձ, չէ՞... Ուզում էիր, չէ՞, որ ես գայի... Ասա՛... Թե չէ կգժվեմ: Լավ է, չէ՞, որ վերջիվերջո, այնուամենայնիվ, մենք միասին ենք... Միասի՛ն ենք... Միասի՛ն... Միասի՛ն...

* * *

Ղողանջեցին հացկերույթի զանգերը:

Հանգուցյալներն արագ-արագ շտապեցին դեպի բարձրասյուն շենք-դահլիճ, որի առջեւ՝ կանաչ դաշտում, վարդե մի շատրվան կար, որի ջրացայտերն ինչ-որ տեղ երկնի կապույտում էին չքվո՛ւմ, անէանո՛ւմ...

Չիթենու ստվերի տակ նստած էին երկու հոգի:

Անշա՛րժ: Անընդհա՛տ զրուցելիս:

Եվ հացկերույթի զանգերն ասես այս երկուսին չէին վերաբերում: Այս երկուսի համար չէին ղողանջում:

ՁԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊ

Զենքի հանդեպ սեր երբեք չեմ ունեցել, բայց երբ հարեւանս՝ ոստիկանության նախկին պետ Շոթա Սանդուխաձեն ծննդյանս օրվա առթիվ գերմանական հնաոճ Պարաբելում նվիրեց, ինչ թաքցնեմ, շատ ուրախացա:

Եվ այդ զիշեր կարծես թե հանգիստ քնեցի:

Ճիշտ է, պատկերացում անգամ չունեմ, թե քանի փամփուշտ է տեղավորվում դրա մեջ կամ ինչպես է բացվում «աբռիմա»-ն... «աբռիմա»-է՞, ինչ է՞.... չգիտեմ անգամ, թե ոնց են լիցքավորում...Բայց էս էլ հե՛չ: Ամենակարևորն այստեղ, դու մի ասա, էն է, որ, երբ զինված ես, ոնց որ թե փոխվում ես, բոլոր դեպքերում էս խառը ժամանակներում կարծես պաշտպանված ես զգում քեզ: Չկրակեմ էլ, թշնամիներիս ու չար մարդկանց հո կվախեցնե՞մ:

Շոթան պատկից հարեւանս է: Գինարբուքի հաջորդ օրը սկսեցի նրան հարցուփորձ անել, թե ինչն ինչոց է՝ ո՞նց, ե՞րբ, ինչպե՞ս...

Նախ ասեմ, որ քո անունով ձևակերպել չես կարողանա, ոչ ոք չի անի...- պատասխանեց նա,- սա

որսորդական զենք չի համարվում, գործի բերումով էլ, լավ գիտես, պետք չի քեզ: Երեսուն տարի առաջ մի գողից խլեցինք, էդպես էլ մնաց ու մնաց մոտս: «Աբոիմա»-ն դատարկ է. չվախենա՛ս, բերանին մի փամփուշտ էր մնացել, էն էլ կրակեցի կատաղած շան վրա, բայց վրիպեցի: Հիտլերի ժամանակների Պարաբելում է: Հիմա դրա փամփուշտները չեն էլ ճարվում: Եթե որեւէ տեղ հանդիպի, կբերեմ, իսկ եթե ոչ, ամեն դեպքում պահիր տանը, համենայն դեպս, զենք է, էլի՛:

Զենքը տեղավորեցի մարզաճամպրուկում, դա էլ, իր հերթին տեղավորեցի հին Ժիգուլիիս բեռնախցիկում:

Սպորտին վաղուց եմ թարգ տվել ու իմ Պարաբելումը հիշում էի միայն այն ժամանակ, երբ մաքրում էի մեքենայի բեռնախցիկը, մի գործ, որ իմ կարգի զբաղված ու ծույլ մարդիկ տարվա մեջ ընդամենը երկու անգամ են անում, ո՛չ ավելի:

Երբ ինձ ընդգրկեցին Չինաստանի պատվիրակության կազմում, ընդամենը երեք օր էր մնացել մինչև մեկնումը:

Այդ երեք օրվա ընթացքում ես պետք է հասցնեի անձնագիր ստանալ, գործուղումը հաստատել, գործուղման գումարի անդորրագիրը վերցնել, հետո բանկ վազել եւ ընդամենը 100 դոլար դուրս բերել:

Միաժամանակ, պետք է ծանոթանայի երթուղուն:

Եթե մինչև անգամ ելույթ էլ չունենայի, միեւնույն է, հարցեր գոնե պիտի պատրաստեի:

Հանրագիտարաններն եմ թերթում:

Կատակ բան հո չի՞... Չինաստա՛ն եմ մեկնում, էդ հսկայական երկրի հյուրն եմ լինելու, նրա մա-սին մի բան պիտի իմանա՞մ, թե չէ՞:

Մի խոսքով, կարգին պատրաստություն եմ տեսնում:

Այս իրարանցման մեջ էլ սկսեցի ճամպրուկս դասավորել: Վրացական ահագին հուշանվերներ գնեցի՝ այծեղջյուրներ՝ղանձի, հաստոցային գեղանկարչության նմուշներ՝ Մղինվարծվերիի՝[1] պատկերով...

Երբ տեսա, որ ուղեբեռս ճամպրուկում չի տեղավորվում, բեռնախցիկից հանեցի նաև մարզաճամպրուկը ու սրա մեջ էլ տեղավորեցի ամենօրյա գործածության իրերս (հողաթափեր, հունգարական բոթասներ, շորտեր, գիշերվա հագուստեղեն, վերնաշապիկներ, երկու նոր շապիկ...): Թբիլիսիում եւ Ստամբուլում ո՞վ պիտի մեզ ստուգեր. պատվիրակության անդամներ ենք: Չինաստանի ինքնաթիռ բարձրանալիս մարզաճամպրուկը թողեցի մոտս. ճարմանդը թույլ էր, եւ որպես ուղեբեռ չհանձնեցի:

Թռանք Պեկին:

Ինչպիսի՜ հանդիպում, ինչպիսի՜ ջերմություն, լրագրողնե՛ր, հարցազրույցնե՛ր...

Իսկ հետո ճա՛շ... Էդ մասին հո ավելի լավ է չշարունակեմ:

Ծրագիրն այնպես է հագեցված, որ գլուխ քորելու

1 Մղինվարծվերի -Կազգեզ լեռը, բառացի՝ Սառցեզագաթ

ժամանակ էլ չի մնում:

Առանց իմ ասելու էլ կկռահեք՝ ինչ՞ն էր ամենից շատ մեզ հետաքրքրում. ինչպե՞ս է Չինաստանին հաջողվում իր միլիարդուկես բնակչությանը կերակրել, այնինչ մենք մեր չորս միլիոնի համար մի պատառ էլ չենք կարողանում ապահովել:

Մի խոսքով, ոգևորված աշխատում էինք, երբ մեր այցի երրորդ օրը Ամերիկայում կատարվեց սեպտեմբերի տասնմեկի ահաբեկչությունը:

Աշխարհը ցնցված է: Չինաստանն առավոտից իրիկուն ցուցադրում է, թե ինչպես է ինքնաթիռը պանրի պես մեջտեղից կտրում, երկու կես անում Համաշխարհային առեւտրական կենտրոնի հարյուր տաս հարկանի երկու վիթխարի երկնաքերները, եւ ինչպես են փլվում, գետնին իջնում այս երկու հսկաները... օրը ցերեկով, արեւի լույսի ներքո, արար աշխարհի աչքի առաջ: Չարի առաջ որքա՜ն ողորմելի է մինչև անգամ ինքը՝ Ամերիկան... Էլ ո՞ւր կմնա Վրաստանը:

Թեկուզ նվաստացնեն, ոտքերի տակ գցեն, տանկերով տրորեն, միեւնույն է, քեզ համար ոչ ոք գլուխ չի ցավեցնի, քո մասին ոչ ոք չի հոգա:

Մենք էլ, ինչպես հյուրընկալները, անհանգիստ ներսուդուրս ենք անում, այսուայնկողմ գնում-գալիս, նեղսրտում, քթներիս տակ քրթմնջում: Սակայն անձամբ ինձ անհանգստացնում էր մի ուրիշ բան: Բանն այն է, որ հյուրանոցում, երբ մարզաճամպրուկիցս հանում էի

գիշերվա շորերս, հանկարծ նկատեցի, որ հետս բերել եմ նաև Շոթա Սանդուխաձեի նվիրած Պարաբելումը: Ցավոք սրտի, մինչ այդ պայուսակս կարգին չէի էլ նայել, մաքսայիններն էլ ստուգումների ժամանակ առանձնապես գլուխ չէին դրել: Ո՞վ կմտածեր, որ ես՝ Զրմուղկոյուղու ցանցի գլխավոր պետս, վաստակավոր ինժեներս, նման լուրջ պատվիրակության անդամս, պայուսակում կարող եմ հրազեն ունենալ, էն էլ՝ սարսափելի Բրաունինգից երկու անգամ ավելի մեծ, ֆաշիստական Պարաբելում...

Ի՞նչ է լինելու, ուրեմն, սրա վերջը, ի՞նչ անեմ:

Դանակ խփես, սրտիցս արյուն չի կաթա, լեզուս կալել-կապվել է:

Հայտարարեմ էս մասին...Վա՛յ թե ավելի վատ լինի:

Գուցեն այս փաստը մեր պատվիրակության հեղինակության վրա վատ ազդի: Դե՛, արի ու Գաղտնի ծառայություններին ապացուցի, որ սա զուտ պատահականություն է: Իսկ դա, եթե մինչև անգամ իրավաբանական ելքով չավարտվի, միևնույն է, մեծ աղմուկ կառաջացնի, և բոլորը կիմանան:

Եվ ո՞վ իմանա՝ լեզվանի լրագրողները ինչ պոզուպոչեր կկպցնեն էս միջադեպին:

Բացի դրանից, խղճում եմ նաև մաքսատան որոշ աշխատակիցների: Ախր էդ անմեղ մարդկանց դրանից հետո իսկի մաքսատան դռներին մոտենալ էլ չեն թողնի:

Ու ինչի՞ համար:

Իմ ակամա սխալի՞, թե՞ մեղավոր անփութության

պատճառով (ասենք հիմարություն էլ որ դուրս թռցնեի բերանից, հախը չէ՞ր լինի ինձ):

Հենց էս ժամանակ էր, որ դամոկլյան սրի պես գլխիս կախվեց սեպտեմբերի տասնմեկը:

Դե, հիմա արի՛ ու տուն վերադարձիր... Ո՞նց եմ մեկնելու: Հիմա աշխարհի բոլոր օդանավակայաններում երեւի խստագույնս են ստուգում ուղեւորներին: Ռենտգենա-լազերային հարմարանքներին էլ արդեն չեն վստահում՝ ստուգում են մեծ ու փոքրի ամենափոքրիկ գրպանիկն անգամ:

Այս իրավիճակում էս անիծված Պարաբելումը հետ տանելու մասին խոսելն անգամ ավելորդ էր:

Հանկարծ «չվառվեմ»...

Ինչ-որ բան է պետք ձեռնարկել:

Միտքս աշխատում էր կայծակնային արագությամբ:

Խորհրդակցեցի պատվիրակության մի երկու անդամի հետ, բայց ոչ մի խելամիտ խորհուրդ չստացա:

Ամեն մեկը իր հոգսով է տարված:

Հյուրանոցում էլ թողնեմ, դալմաղալ կբացվի:

Հավաքարարների ու դռնապանների հատուկ հագուստներով քողարկված Գաղտնի ծառայության գործակալները տնտղում-քրքրում են աշխարհի բոլոր հյուրանոցների բոլոր համարները: Ի՞նչ է Չինաստանը բացառությո՞ն պիտի կազմի:

Դուրս գալիս մարգաճամպրուկս գցում եմ ուսիս,

իսկ պայուսակում Պարաբելումս է՝ «Ախալի թառբա»[1] օրաթերթի մի հին համարով փաթաթած: Չգիտես ինչու, բոլորը կարծում են, թե դա երկար, ուսպնյակավոր լուսանկարչական ապարատ է:

Մարզաճամպրուկը մոտս է, բայց արտաքուստ շատ խաղաղ եմ:

Ոստիկանի կամ դռնապանի կողքով անցնելիս սուլում եմ, ինձ ավելի վստահելի մարդ ցույց տալու համար:

Եթե որեւէ տեղ ասում են «Նո՛ւ քամերա», ուրեմս արգելված է նկարահանել: Ինձ ու ինձ ասում եմ՝ աղա մարդ ես ու.. պայուսակն, առանց համար վերցնելու, կախում հանդերձարանում: Հույս ունեմ, որ ինչ-որ մեկն այն կգողանա, ու ես կհանգստանամ: Բայց....

Էս հսկայական երկրում հո բոլոր գողերը միանգամից չվերացա՞ն, իմ մարզաճամպրուկի համար մի գող գոնե հո կլինի՞ մխիթարում եմ ինքս ինձ ու ինքս էլ տալիս պատասխանը՝ իհարկե կլինի:

Մինչդեռ Չինաստանում մսալուս օրերն արդեն անցնում են...

Թե էս կրակուպատիժ Պարաբելումից չազատվեմ, ո՞վ իմանա ի՞նչ փորձանք պիտի գա գլխիս:

Որոշում եմ պայուսակը մի որևէ տեղ թողնել, որովհետև գող չի հայտնվում, ոչ ոք չի գողանում:

Երբ իմ խելքով, էս հանճարեղ որոշումս ընդունեցի,

1 Թբիլիսում լույս տեսնող օրաթերթ, թարգմ. «Նոր սերունդ»

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆՈՒՆԵՏՈՒԹՅՈՒՆ

նույն օրն նեթ մի լավ առիթ մեջ ընկավ՝ ի օգուտ ինձ:

Ճաշից հետո հրավիրված էինք չինացի վարպետների ոսկերչական աշխատանքների ցուցահանդես-վաճառքին: Տաղավարում ամենքս ցրվեցինք մի կողմի վրա:

Ոսկու առք-վաճառքը, ինչպես հայտնի է, ուլտրաանհատական գործ է եւ կախված է նաև մարդու ճաշակից:

Պատվիրակության անդամներից ոմանց հետաքրքրում է ճենապակյա սպասքը, ոմանց՝ չինական փոքրիկ բաժակ-սափորները, որոնք նախատեսված են թեյի համար, բայց դրանցով շատ լավ կարելի է նաեւ գինի խմել: Իսկ ինձ ոչինչ չի հետաքրքրում...

Հարյուր տարի էլ թեյ չեմ խմի, միայն թե էս Պարաբելումը մի տեղ կոծկել կարողանամ:

Դու մի ասա, մտքիդ դնես, ինչ ասես՝ կարող ես անել:

Լաո-Ցզիի պատկերով չինական մանրանկարչությամբ ափսեիկ գնեցի: Բայց էդ պահին ինձ իսկի չէր էլ հետաքրքրում, թե ափսեի վրա ո՞վ կլինի՝ Լաո-Ցզին, թե... թեկուզ հենց Մա՛ո-Ցզե Դունը.... միեւնույն է, ես պիտի գնե՛ի: Ինձ ուղղակի գործունյա մարդու, իսկական գնորդի իմիջ էր պետք նվաճել վաճառողի մոտ:

Ափսեն դրեցի գրպանս, հեռացա վաճառասեղանից, բազրիքից, Պարաբելումը պայուսակիցս հանեցի, հետո թողեցի պատուհանի մոտ եւ հապճեպ քայլերով, արագարագ խոսելով միացա տաղավարում հանգիստ ճեմող

մեր պատվիրակության երկու անդամների:

Բավականին ժամանակ, բեռն ուսիցս կախ՝ հետ ու առաջ արեցի նրանց հետ՝ վայելելով չին վարպետների անկրկնելի արվեստի հմայքը, իսկ երբ պայմանավորված ժամին հավաքվեցինք ավտոբուսի մոտ, արդեն թեթևացած շունչ քաշեցի:

«Բախտս բերե՛ց»:

Ավտոբուսն արդեն շարժվելու վրա էր, երբ ճուտիկագույն կիմանո հագած երկու կանայք վազե-վազ մոտեցան մեզ: Հուզված էին երևում:

Նրանցից մեկը բռնել էր «Ախալի թառբա»-յով փաթաթած իմ Պարաբելումը: Աչքերս մթնեցին, բայց անհանգստությունս կարողացա մի կերպ քողարկել:

-Չան քու գվան նքո ձին բա թիրբահ՞,- հարցրեց ինչոր մեկն, ու չսպասելով պատասխանիս, ուրախ-ուրախ ու ժպտադեմ մոտեցավ ինձ:

-Դուք պատահմամբ որեւէ բան չե՞ք մոռացել խանութում, -վրացերեն հարցրեց չինացի էքսկուրսավարը:

-Այո, մոռացել եմ, բայց... ախր ինչո՞ւ նեղություն քաշեցին...շնորհակալություն հայտնեք նրանց, բայց կարիք չկար էսքան անհանգստանալ:

Երբ էքսկուրսավարը թարգմանեց իմ ասածը, կանայք աչքերի բաց մնացած մասը մինչեւ վերջ փակեցին եւ իրենց խոշոր, առողջ ատամներով ծիծաղեցին:

Իսկ ես՝ իմ «մոռացկոտության» շնորհիվ կորստից փրկված լուսանկարչական ապարատ-պարաբելումիս

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԱՆ

հայտնվելուց «երջանիկ», մարզաճամպրուկս գցեցի ոտքերիս մոտ ու հայացքս պատուհանից հառեցի չինական փողոցին:

Հաջորդ օրը մեզ հրավիրեցին Պեկինի օպերայի հինավուրց թատրոն:

Պեկինի օպերան հազար տարեկան է:

Ինը հարյուր տարի շարունակ, այս օպերայում, բեմի չին վարպետների ներկայացումներն ընթանում էին առանց նվազակցության: Սա դրամատիկական թատրոնի եւ օպերայի ինչ-որ յուրահատուկ սինթեզ էր:

Ըստ չինական ավանդույթի, կանանց դերերն էլ էին տղամարդիկ կատարում: Այսօր Պեկինի օպերային թատրոնը նման է աշխարհի մյուս բոլոր օպերային թատրոններին: Սակայն բարեկիրթ հյուրընկալները մեզ հատուկ հին ներկայացման հրավիրեցին, որպեսզի մենք ավելի լավ զգայինք հին արվեստի համ ու հոտը:

«Սեր բրնձի արտում» ներկայացումը մասնակի (երկու-երեք ամսվա) ընդմիջումներով արդեն վեց հարյուր տարի է, ինչ ներկայացվում է այս թատրոնում:

Երբ առաջին գործողությունն ավարտվեց, զուգարան մտա եւ «Ախալի թառբայով» փաթաթած Պարաբելումը դրեցի միզողներին իրարից բաժանող երկնագույն, սալիկապատ պատի գլխին:

Իսկ երբ սկսվեց երկրորդ գործողության վերջին արարը, համարյա սորալով ինձ մոտեցավ թավշյա թիկնոցով, կոկորդին ու կրծքին մոտավորապես ութսուն

ոսկեգույն կոճակ ամրացրած մի չինացի եւ գոգիս ինչ-որ ծանրություն դրեց:

Մթության մեջ չկարողացա որոշել, թե ինչ էր, բայց, միեւնույն է, շնորհակալ եղա:

Ձեռքով շոշափելու կարիք անգամ չկար, ամենաանուշադիր ընթերցողն անգամ կկռահի, որ ինձ վերադարձրին իմ Պարաբելումը:

Թբիլիսի մեկնելու նախորդ օրը մեզ տարան Խոան-Ձիան գետի նոր, յոթ կիլոմետրանոց կամուրջը տեսնելու:

Կամուրջը կառուցված է բամբուկից ու երկաթբետոնից: Նրա լայնությունը երկու հարյուր մետր է, եւ կիրճում այն սկսվում է Չինական Մեծ Պարսպից ընդամենը վաթսուն կիլոմետր հեռավորություն վրա:

Կամուրջը շատ բարձր չէ, գետի մակերևույթից՝ հազիվ չորս-հինգ հարյուր մետր:

Երբ լուսանկարվելիս հետույքներով հպվեցինք կամուրջի բազրիքին, ես շատ զգույշ ուսիցս սահեցրի մարզաճամպրուկը, եւ իբրև թե պատահականորեն ,բաց թողեցի դեպի գետը:

Եվ միայն այն ժամանակ շրջվեցի ու ներքև նայեցի, երբ Գաղտնի ծառայության չինացի հինգ գործակալ վազեցին բազրիքի կողմը:

Իմ պայուսակը (Պարաբելումի հետ) հանգիստ, բայց շատ սիրուն, թռչում էր ներքեւ:

Խառնաշփոթ իրավիճակ ստեղծվեց՝ վազվզուք, ժխոր, բջջայիններում եւ հաղորդիչներում լսվում էին գոռում-

,գոչյուններ, սիրենաներ...մաքո՛ւր չիներենով...

Ոստիկանության երկու մեքենա արագորեն պոկվեցին տեղներից եւ անմիջապես հետ եկան: Էքսկուրսիան ոչ միայն չընդհատվեց, այլ նույնիսկ չխանգարվեց:

Որպես հիշատակ՝ կամուրջը պատկերող բացիկներ նվիրեցին ու կամուրջի վերջում, Խուան-Չիանի ափին, ճաշարան-քարայրում հյուրասիրեցին նրբահամ ճաշատեսակով՝ խխունջների ու գորտերի աջաբանդա՛լ:

Երբ թակեցին համարիս դուռը, մոտենում էր գիշերվա ժամը տասնմեկը (Պեկինի ժամանակով, իսկ մեր ժամանակով՝ ցերեկվա ժամը տասնմեկը):

Չզարմացա:

Ակնկալում էի, որ Պարաբելումով պայուսակս կգտնեին ու կվերադարձնեին ինձ: Ի տարբերություն սովորական չինացիների՝ այս բավականին ամրակազմ ոստիկանին եւ օգնության ծառայության քյոսա ղեկավարին շնորհակալություն հայտնեցի եւ յուրաքանչյուրին նվիրեցի... վե՛ց-վե՛ց ղանձի:

Մոտ քսա՛ն րոպե, ձեռնափերս կրծքներիս դրած, երկրպագեցինք իրար՝ ի նշան երախտագիտության ու հրաժեշտի:

Նայեցի ժամացույցին:

Ժամանակը սովորականից ավելի արագ էր թռչում:

Պարաբելումը պետք է մաս-մաս անեմ ու բաժանեմ պատվիրակության անդամներին: Երկաթի փոքրիկ կտորը ռենտգենի ժամանակ գուցե կասկածելի չթվա: Եթե

նույնիսկ ստուգիչ սարքը զնզզնգա, ո՞վ կհասկանա՝ թե ի՞նչ է դա: Այնպես որ ես ինքս ինձնից՝ թե՛մտահղացումիցս, թե՛դատողությունիցս շատ գոհ մնացի: Սակայն դու մի՛ ասա, Պարաբելում մասնատելն ավելի դժվար գործ էր, քան ես էի կարծում: Երբ արդեն չինացի աքլորները իրենց վե՛ցերորդ որոշիչ կանչը հնչեցրին, ես գործս պրծա ու Պարաբելումի մասերը բաժանեցի մեր պատվիրակության տասնհինգ անդամների միջև: Այնպես որ Թբիլիսի վերադարձանք հեշտ ու հանգիստ: Եվ միայն այն ժամանակ, երբ շարժասանդուղքը տեղափոխեց մեր ճամպրուկները, ես սկսեցի հավաքել Պարաբելումի անջատ մասերը:

Մեն-մենակ, իհարկե, չկարողացա գլուխ հանել և հաջորդ օրը, ճարահատյալ կանչեցի Սանդուխաձեին, պատմեցի՝ ինչն ինչոց էր: Եվ նրա մի կուշտ ծիծաղ-քրքջոցից հետո միայն խնդրեցի, որ օգնի՝ հավաքենք Պարաբելումը:

Եվ ի՞նչ... Չկար մի շատ կարևոր մաս՝ (իբր Պարաբելումի ո՞ր մասն է երկրորդական որ...) «աբոիմա»-ից փամփուշտը «բերան» հասցնող երկաթե զսպանակը:

Գրո՛ղը տանի...որքան հիշում եմ, բոլորն էլ վերադարձրին, տեսնես ո՞ր գրողի ծոցը թողեցի: Տեղ չթողի, ամբողջ Թբիլիսին շրջեցի, բայց ոչ մի կերպ չճարեցի նման զսպանակ:

Թբիլիսիում էս Պարաբելումից հինգ հոգի ունի, բայց պահեստամասային զսպանակ՝ ոչ ոք: Խառատի մոտ

ՅԱՐՈՅՅԵՅՈ
ՅՈՅԵՎՈՅՅՅ

էլ գնացի, բայց նա էլ չկարողացավ էդպիսի զսպանակ ձուլել:

-Հին, գերմանական երկաթ է պետք, եթե հիմիկվա երկաթից ձուլեմ-հալեցնեմ՝ կջարդվի,- բացատրեց նա:

Ու երբ արդեն լրիվ հույսս կտրվեց, այնպես ջղայնացա, որ մեքենան կանգնեցրի Չելյուսկինների կամրջի մոտ ու Սանդուխաձեի նվիրած ատրճանակը, ցուցադրաբար՝ անցորդների ներկայությամբ, շպրտեցի Քուռը:

Մտածում էի, որ երևի ինչ-որ մեկը կվերադարձնի ինձ Պարաբելումը, սակայն ո՛չ այդ երեկո, ո՛չ էլ հաջորդ օրերին այդպիսի բան չեղավ:

...Անցավ համարյա երեք ամիս:

Ու մի օր էլ Չինաստանից ծանրոց ստացա: Բացեցի և... «Պեկին» հյուրանոցի տնօրինության ողջույնի բացիկից բացի, ծանրոցում «հայտնաբերեցի» նաև....Պարաբելումի երկաթե զսպանակը:

...Երբ ատրճանակի մասերը շտապ-շտապ բաժանել էի պատվիրակության անդամներին, շփոթվել էի ու իմ բաժինը՝ զսպանակը, թողել հյուրանոցի իմ համարում:

ՈՎ Է ԻՆՁ ՓՆՏՐՈՒՄ...

Դիդմիծցիներն անմիջապես նկատեցին անծանոթին, եւ քիչ անց նրա շուրջը հետաքրքրասերների բավականին մեծ բազմություն գոյացավ: Կարճահասակ մարդ էր, հագին՝ կաշվե բաճկոն, գլխին՝ անհարմար ծալքով, գունաթափված, լայնեզր գլխարկ: Դիդմիծա գյուղի բնակիչները հյուրերի սովոր մարդիկ էին, բայց այս մարդու տարօրինակ պահվածքը նրանց մի տեսակ անհանգստացնում էր.. Այլապես լայնեզր գլխարկով այս մարդու նկատմամբ հետաքրքրություն բոլորովին էլ չէին ցուցաբերի: Մինչդեռ հյուրը շրջապատի մարդկանց վրա ուշադրություն չէր դարձնում: Նա զբաղված էր էլեկտրասյուների համարակալմամբ: Ավտոբուսից ցատկելուն պես հանեց ծոցատետրն ու կավճի կտոր: Հետո մոտեցավ առաջին պատահած սյունին եւ վրան գրեց՝ «35»: Այնուհետեւ ծոցատետրում գրչով ինչ-որ գրառում արեց: Աշխատանքային պարագաները (կավիճը, ծոցատետրը, գրիչը) աջ ձեռքով էր բռնել: Էլեկտրասյունը նախ հեռվից էր տնտղում, գրչով նշան բռնում, աչքի մեկը կկոցում, ապա վճռական մոտենում սյանն եւ համարակալում: Դիդմիծցիները հյուրի վարմունքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

խորհրդավորության մեջ վերջնականապես համոզվեցին այն ժամանակ, երբ նա էլեկտրասյան վրա «39»-ից հետո գրեց... «221», հետո էլ էդ «221»-ին չգիտես ինչու հաջորդեց «7»-ը, իսկ գյուղամիջում, ակումբի կողքին վեր խոյացող սյանը բաժին ընկավ «511» համարը: Այստեղ էր ահա, որ Վիկտոր Մահուրաձեն՝ եգիպտացորեն մշակող մի գեղջուկ, այլևս չհամբերեց, ճեղքեց շրջան կազմած մարդկանց օղակն ու կանգնեց ուղիղ հյուրի առաջ:

Դուք վաղու՞ց եք ընկած էս սյուների հետևից, բատոնո՛[1]:

Անծանոթը կավճոտ մատներով հետ տարավ լայնեզր գլխարկն ու Վիկտորի վրա հառեց իր խոշոր, երկնագույն աչքերը: Ամենայն հավանականությամբ բոլորովին չէր սպասում հարցերի, առավել ևս՝ նման պարզունակ հարցի, ուստի լուրջ պատասխանի փոխարեն կատակի անցավ.

-Եթե ասեմ, որ էս սյուների միջոցով հաշվել եմ տվորում, կհավատա՞ս:

Հետևից գյուղացու անզուսպ քրքջոց լսվեց:

Մահուրաձեն գլխարկը հանեց, խոշոր ձեռնափը տարավ դեպի ցանցառ մազերով գլուխն ու սիրտ առած՝ շարունակեց.

- Լավ էլ հեշտ փեշակ եք ընտրել, հարգարժա՛ն պարոն....

-Առայժմ բողոք չունեմ,- կարճ կտրեց կաշվե բաճկոնով մարդն ու անցավ հաջորդ սյանը՝ կոլտնտեսության

1 պարոն

գրասենյակի դռան մոտ: Մարդիկ հետևեցին նրան: Անծանոթի կատակախառն պատասխանը դիդմիծցիներին ոգեւորեց: Հիմա ավելի մոտիկից էին զննում նրան: Իսկ Վիկտոր Մաիսուրաձեն՝ ձեռքերն իրար ծալած, գնում էր նրանց կողքով:

Երբ հյուրը վերջին սյան վրա գրեց «725», միանգամից քար լռություն տիրեց: Բոլորը համոզվեցին, որ հյուրն ամենևին էլ չի կատակում, իսկ ընկճված Մաիսուրաձեն վախեցած տոնով ասաց.

-Ներող եղեք մեր անտարբերության համար, բա՛տոնո, բայց...

-Բայց ի՞նչ,- անծանոթը լրագրի թուղթ հանեց, փաթաթեց կավիճն ու դրեց անդրավարտիքի գրպանը, իսկ ծոցատետրն ու գրիչը ապահով տեղավորեց կաշվե պայուսակում ու, ձեռքերը տարածած, քայլեց դեպի ամբոխը:

-Այս սյուները ժամանակավոր են, առհասարակ էլեկտրականության համար խորհուրդ չեն տրվում փայտե սյուներ,- իշխող լռությանն ականջալուր շարունակեց նա,- որովհետև դրանք փտում են, ուստի հարկավոր է փոխել... Մոտ օրերս դուք կստանաք երկաթե սյուներ, էս հները կփոխարինենք դրանցով, որ ինչքան կուզեք, ճսան ու ճսան,- ասաց հյուրը, ժպտալով իրար շփեց ձեռնափերը և, դեմքի ինքնաբավ արտահայտությամբ, ավելացրեց,- էդպես ավելի լա՞վ չի լինի՞, հը՞..

-Աստված շեն պահի ձեզ, հա՛- լսվեց ինչ-որ մեկի բարձր ձայնը:

Հյուրը ժպիտով պատասխանեց այս անկեղծ երախտագիտությանը:

Իսկապես գրավիչ ժպիտ ուներ՝ զարմանալիորեն կատարելագործված, առինքնող: Եվ դրանից ոչ թե նրա դեմքի արտահայտությունն էր փոխվում կամ թեկուզև աչքերն էր ժպտում, այլ...որ շատ ուշագրավ էր՝ նրա գեղեցիկ շրթունքներն ու նույնքան գեղեցիկ ատամնաշարը: Իսկ ձախ այտին ավելի պարզորոշ էր երևում հին վերքի սպին՝ ասես երկու մասի բաժանված:

-Իսկ էս հին սյունե՞րը... դրանց վերջը՞...

Վիկտոր Մահսուրաձեն գործի մարդ էր: Ամբոխը նորից լռեց: Ակնհայտ էր՝ սյուների հետագա ճակատագիրը հետաքրքրում էր նաեւ մյուսներին:

-Ասացի, չէ՞, կփոխարինենք երկաթե սյուներով,- պատասխանեց անծանոթը՝ անուշադիր աշակերտների վրա բարկացող ուսուցչի տոնով:

-Էդ արդեն հասկացանք, բայց ես ուզում եմ իմանալ, թե դրանից հետո էս սյուները ո՞ւր պիտի տանեք,- ծոծրակը քորելով հարցրեց եգիպտացորեն մշակող գեղջուկը:

- Մի տեղ կճարենք էլի՛,- ժպտաց էլեկտրասյուների վարպետը:

Կոլտնտեսականները հայացքները միաժամանակ հառեցին գրասենյակի դեմ վեր խոյացած սյան վրա: Նրանք երևի պատկերացրեցին, որ այս պինդ, մազութի մեջ կորած փայտե սյունը կարելի է օգտագործել որպես հիանալի շինանյութ՝ տանիքի համար:

Անծանոթն ավարտած համարեց հարցազրույցի երեկոն, և արդեն պատրաստվում էր բարձրանալ գրասենյակի աստիճաններով, երբ ինչ-որ մեկը մոտեցավ նրան.

-Գուցե էս սյուները մե՞զ վաճառեք, բատոնո:

Անծանոթը կանգ առավ, նայեց քարացած ամբոխին և հնչեղ ձայնով, ասես ասմունքեր, հայտարարեց.

-Էս փտած սյուների դիմաց փող վերցնել կլինի՞.... անհարմա՞ր չի՞, ի՞նչպես կարելի է... եթե էս սյուները ձեզ էդքան պետք են, թող ձեզ լինեն, բաժանեք իրար մեջ, բայց,- նա ձեռքի շարժումով հանգստացրեց աղմկող ամբոխին ,- երկու խնդրանք ունեմ, առաջինը՝ բաժանելիս իրար հետ չկռվեք, յուրաքանչյուր ընտանիքի հասնելու է մեկական սյուն, և երկրորդը՝ մինչեւ երկաթե սյուների տեղադրումը՝ սրանց ձեռք չեք տալու: Երբ կավարտենք լարերի անցկացումը նոր գծի վրա, հետո միայն կհանեք սյուներն ու կտանեք:

Անսպասելի ուրախությունից մարդիկ շնորհակալություն էլ մոռացան հայտնել, միանգամից պոկվեցին տեղներից ու սկսեցին մեկ-մեկ հեռանալ: Անծանոթը մի որոշ ժամանակ ֆելդմարշալի պես զգաստ կանգնած՝ նայում էր դեպի իրենց թաղամասերը ցրվող գյուղացիների հետևից:

Բարձրահասակ ու խոշորամարմին, գալիֆե շալվարով մի կոլտնտեսական վրա ընկավ ու փաթաթվեց առաջին իսկ սյանը: Իսկ դա նշանակում էր, որ սյունն արդեն պատկանում է իրեն: Մնացածներն էլ... ի՞նչ անեին...

նրանք էլ վազեցին առաջ՝ մյուս սյուներին տիրանալու: Էլեկտրասյուների բաժանումը տեղի էր ունենում, կարելի է ասել, ջունգլիների մեթոդով: Էլեկտրասյանը տիրանալու համար այս դեպքում խելք ու կրթություն կարևոր չէր. օգուտ չուներ: Ո՛չ ավել, ոչ պակաս.... գելի թաթ էր պետք:

Անծանոթն ուղղեց լայնեզր գլխարկը ու ժպտադեմ, որսորդի խուզարկու հայացքով եւս մեկ անգամ նայեց էլեկտրասյանը, ապա շրջվեց եւ բարձրացավ աստիճաններով: Նա մոտեցավ կոլտնտեսության նախագահի դռանը, բայց նորից շրջվեց ու գնաց դեպի պատշգամբի ձախ կողմը, կանգնեցրեց կուժը ձեռքին մի կնոջ ու մեկնեց աջը: Կինը մի պահ վախեցավ, հետո զոգնոցով մի թեթև սրբեց, վրան քսմսեց աջ ձեռքը ու մեկնած ձեռքն այնպես թափով սեղմեց, որ կարծես այդ տարի էլ ոչ ոքի չէր ողջունելու:

-Մեր նախագահը էլի Պարմե՞նն է, հա՞:

-Հա՛, բատոնո, Պարմենն է, Կակաբաձեն,- հավաքարարուհու դեմքը ուրախությունից շողաց, քանի որ դիմացինը սահմանափակվել էր այդքան հեշտ հարցով:

-Դրա նախագահությունը...

-Երկու ամիս կլինի, ինչ էստեղ է տեղափոխվել, բա՛տոնո, առաջ ֆերմայում չէ՞ր աշխատում, էստեղից մի քիչ վերև:

-Գրողը տանի, մարդն էլ մճաղիի անունը մոռանա՞, ծերանում եմ, ծերանում:

-Ի՛նչ եք ասում, բատո՛նո...

Կինը հայացքով ուղեկցեց ուսերն անփույթ օրորելով հեռացող անծանոթին ու հանգեց այն եզրակացության, որ տղամարդը հազիվ հիսուն տարեկան լինի, իսկ այդ տարիքում այդպես լավ պահպանված մարդը երևի դեռ երկար տարիներ չզգա ծերության երկյուղը:

Նախագահը, որ ժամանակին ծաղիկ հիվանդություն էր տարել, գնդակի պես կլորիկ դեմք ուներ: Կեռ հոնքերը անկնճիռ ճակատի մոտ եռանկյուն էին կազմում, իսկ բուդյոնիական բեղերը համարյա այտոսկրերին հասնում: Մեղրագույն, գորովալից աչքեր ուներ եւ ձայնը խզվելու աստիճանի գոռգոռում էր իր դիմաց կանգնած լոշտակ ականջներով մարդու վրա, որը, ղեկավարի սպառնալիքից շշված-շլմորած, աստիճանաբար, է՛լ ավելի խորանալով, սուզվում էր ասես բամբակով պտռած իր բաճկոնի օձիքի մեջ:

-Ինձ համար բոլորդ նույնն եք: Ինձ ոչ ոք ոչինչ չի ների: Եթե ցանկանում եք գործ անել, աշխատել, ուրեմն վարվելու եք ահա այսպես, իսկ եթե՝ ոչ, ավելի լավ կլինի գլխարկներս դնենք ու տուն գնանք:

-Իսկ ի՞նչ պիտի անենք, - վախվորած հարցնում էր նրա զոհը:

- Ի՞նչ պիտի անե՞ք ... համաձայնության պիտի գանք, պայմանագիր կապենք, այլապես մենք յոլա չենք գնա...

-Ի՞նչ հարցում պիտի գանք համաձայնության.

- Ուրեմն, էսպես...Երբ ինձ կկանչեն ու կհարցնեն՝ ի՞նչ արեցիր, ես քե՛զ կհարցնեմ՝ ի՞նչ արեցիր: Երբ ինձ

ԵՐԱՅՇԵՅԱՆ ՆՈՒՆԱՐՈՒՄՅՈՒՆ

կկանչեն ու կասեն՝ արագացրո՛ւ, ես քե՛զ կհորդորեմ՝ արագացրո՛ւ: Երբ ինձ նկատողություն կտան, ես քե՛զ նկատողություն կտամ, երբ ինձ կհայհոյեն, ես քե՛զ կհայհոյեմ,- նախագահն այս ամենն ասում էր ոգևորված, պաթոսով: Նրա ձայնն աստիճանաբար բարձրանում էր եւ վերջին՝ «քեզ կհայհոյեմ» բառերը նա արտաբերեց արդեն ոտքի կանգնած:

Հյուրն անմիջապես գլխի ընկավ, որ այս երկու ընկերոջ ինտելեկտուալ զրույցը այնքան էլ նախանձելի ազդեցություն չի ունենալու նախագահի տրամադրության վրա, ուստի սովորության համաձայն քողարկվեց իր վաղուց փորձած ժպիտով ու, ձեռքերը լայն տարածած, մոտեցավ իր ղեկավարին:

- Ո՛ղջ լինես, Պարմեն.. Հրես ես նորից քո հյուրն եմ, բայց էս անգամ լավ գործի համար եմ եկել: Էն էլ էնպիսի գործ, որ հաստատ կուրախանաս: Իմացել եմ, որ լավ ես: Գիտե՞ս, ոնց եմ ուրախանում, երբ քո մասին հաճելի լուրեր են գալիս քաղաք, էրեխե՝քիս արեւ, շատ եմ ուրախանում,-գնդացրի պես վրա տվեց հյուրը՝ հյուրընկալին ուշքի գալու հնարավորություն անգամ չտալով: Այս խոսքերն ասելիս, նա նույնիսկ համբուրեց Պարմենին, գլխարկը կախ արեց մեխից ու մատներով սանրեց խիտ, շագանակագույն մազերը: Այնուհետև սևին տվող կաշվե պայուսակը տեղավորեց դիմացի սեղանին ու, գործարար մարդու տպավորություն գործելու նպատակով՝ զնգզնգացրեց կողպեքը:

-Ի՞նչ եմ անելու սրանց ձեռը, չգիտեմ.... գլխներին չկանգնես, բան դուրս չի գա, ոչ ոք չի աշխատի, իսկ վերևներում ինձնից են պատասխան պահանջելու:

-Իհարկե՛, իհարկե՛, պարզապես դու էլի առաջվա խստապահանջն ես մնացել, չեմո[1] Պարմեն, թեև աշխատասեր մարդիկ գլխիցդ միշտ անպական են լինում: Դու ուրիշ տեղերում էլ պիտի հետաքրքրվես, իմանաս՝ էնտեղարանք ոնց է գործը առաջ գնում... էնտեղ, որտեղ մենք հաճախ ենք լինում, ով ասես ու ինչ ասես, որ մեզ չի հանդիպում...Իսկ այս ընկե՞րը..

-Բանջարագործականում բրիգադիր է, ամեն օր ինձ էսպես հաչել է տալիս: Սպանում է, ինձ ուղղակի, իսկ ինքը, տեսնում ես, չէ՞ ոնց որ կայծքար,- նախագահը անծանոթից չէր հեռացնում՝ ձգտելով հիշել, թե որտեղ էր հանդիպել այս մարդուն: Այդպես էլ ոչ մի կերպ չհիշեց ու ինքն իր վրա ջղայնացավ: Նույնիսկ, եթե փայլուն հիշողություն էլ ունենար, միևնույն է, չէր հիշելու, քանի որ նախագահն ու հյուրը այդ օրն իրենց կյանքում առաջին անգամ էին հանդիպում միմյանց: Անծանոթը թերահավատություն նշմարեց հյուրընկալի ձայնի ու հայացքի մեջ, ուստի բացեց պայուսակը, թղթերը հանեց ու միանգամայն անվրդով ասաց.

-Ես Կակո Ռատիանին եմ, չեմո Պարմեն...վա՛յ, մոռացե՞լ ես ինձ...է՜հ...վաղուց չենք տեսել իրար, երևի մոռացել ես:

1 վրաց. թարգմ.՝ իմ

Բայց լավ իմանաս՝ էնպիսի պայծառ հանդիպում, որ մենք ենք ունեցել, հազվադեպ է պատահում կյանքում ու հուր-հավիտյան հիշվում է: Դա սովորական ընթրիք չէր, է՛... եղբայրության եւ բարեկամության սրբազան մի ուխտ էր դա: Հիմա ինձ Երկրաբանական կուսակցության ղեկավար են նշանակել: Իմ շտաբը ձեր գյուղում է լինելու, ու ես կայծում եմ, որ մենք միայն ու միայն օգնության ձեռք պիտի մեկնենք իրար ու ոչ մի դեպքում չխանգարենք մեկս մյուսիս:

Թեև Պարմենը լավ չէր կարողանում պատկերացնել, թե Դիդմիծա գյուղում ինչ էր անելու Երկրաբանական կուսակցությունը, բայց քանի որ հայտնվել էր փաստի առաջ, շարունակում էր պահպանել հյուրընկալ մարդու դեմքի արտահայտություն:

-Խնդրեմ, բատոնո, ձեր թուրը, իմ վիզը, ինչ-որ շահո՞ւյթ եք փնտրում էստեղ:

-Նավթ ենք փնտրում, չեմո Պարմեն,նա՛վթ..:

- Բայց մեր կողմերում նավթ կա՞ որ.....

-Պիտի որ լինի, էդպես ենք կարծում: Որոնողական աշխատանքներ կանցկացնենք, եթե հայտնաբերենք, լավ, եթե՝ ոչ, հրաժեշտ կտանք ձեզ ու կգնանք մեր ճամփով:

-Շատ բարի, բատոնո, իսկ վերևներում ամեն բան համաձայնեցրե՞լ եք...

- Իմ գլուխը չմեռնի՛, հա՛ ...բա ո՛նց... ուրիշ կերպ հնարավո՞ր է: Առանց համաձայնեցնելու եւ ճշտելու ո՞վ թույլ կտար մեր էս խոշոր կուսակցությանը երեւալ այստեղ: Էս գործի համար հազարներ են ծախսվում, չեմո

Պարմեն: Բոլորն իրազեկ են, բոլորը՝ զգուշացված: Էդ մասին հե՛չ չմտածես:

-Հիմա մեր կողմից ի՞նչ է պետք, - մտահոգված հարցրեց նախագահը:

- Կակո Ռատիանին քու ցա՛վը տանի,- հյուրը նախագահի դեմքից եզրակացրեց, որ սա կարող է իր ազգանունը մոռանալ ու հիշեցրեց, ապա շարունակեց,- սկզբում նախապատրաստական աշխատանքներ պետք է անցկացնեմ՝ մինչեւ որ հարմարանքներն ու մարդիկ գան, տեղ հասնեն: Ճանապարհն էլ ախր բանի պետք չի: Մի որոշ ժամանակով քո Վիլիսն ես տրամադրելու, մեկ էլ մի աշխատասենյակ, մեկ-մեկ էլ՝ օգնականներ:

Պարմեն Կակաբաձեն կտրականապես մերժեց:

-Չէ՛, բատոնո, համոզված եղեք, որ բոլորիդ պատիվ կտամ, բոլորիդ սիրում եմ, բայց մենք էդ հնարավորությունը չունենք: Օգնականնե՞ր: Աշխատուժի պակասությունը առանց էն էլ նեղում է մեզ, ես անձամբ բանվորներ եմ ման գալիս: Մի բոպե անգամ չեմ կարող նրանց գործից կտրել:

-Ի՞նչ նկատի ունեք «գործից կտրել»ասելով, բատոնո Պարմե՛ն,- հարցրեց Կակոն,- եթե մարդ ազատ ժամանակ մի երկու կոպեկ աշխատի, քեզ կխանգարի՞:

- Ծրագիր է, բատո՛նո, ծրա՛գիր:

-Հետո՞ինչ: Քո գործը անելուց հետո, տուն գնալուց որ մի երկու ժամ էլ ուրիշ գործ անի, քեզ ճսաս կտա՞: Մենք ոչ ոքի չենք ստիպի, լավ էլ կվարձատրենք:

-Չգիտեմ... ոչինչ չգիտեմ: Ասում ես՝ էլ ի՞նչ է պետք,

ԳՐԱԴԱՐԱՆ ՇՈՒՇԱՐՈՒՄՅԱՆ

մեքենա՞, ախր ունեմ-չունեմ էս ջարդուփշու Վիլիսն ունեմ, դրանով եմ օրուգիշեր վերուվար անում:

Ու Երկրաբանական կուսակցության ղեկավարը ժպտաց իր կախարդիչ ժպիտով:

-Բայց մեկ-մեկ էլ հանգստացի, տնաշենի՛ մարդ... Մարդս մարդով է կանգուն, մեջքիդ կկանգնեն, կօգնեն.. ընչի՞ ես քեզ էդպես կոտորում, պղտոր ջրերն ընկնում.. Ա՛յ, հրե՛ս, որտեղ որ է, ամենաուշը մի երկու շաբաթից երեք թամ-թազա Վիլիս եմ ստանալու... Որ էստեղ կբերեն-կհասցնեն, կտեսնե՛ս ... Ազնի՛վ խոսք... Հենց դրանցից մեկն էլ՝ մի լավ, տառտոդ Վիլիս կվերցնեմ ու հենց մեր վարչության անունից ձեր կոլտնտեսությանը կնվիրեմ: Տու՛ր ձեռքդ.. ... Լա՛վ իմանաս, կյանքիս մեջ սուտ խոսացած չկամ: Էլ ուրիշ ի՞նչ ուզեցի որ.. Մնաց մի աշխատասենյա՞կ... Լա՛վ, լա՛վ...չես կարող, պետք չի, նեղություն չեմ տա....

Էլ շատ չերկարացնեմ. համաձայնության եկան: Լրիվ նոր Վիլիսը իրենն արեց: Նախագահն ամեն սառումով օժանդակեց՝ մեքենա էլ տվեց, կոլտնտեսության գրասենյակի պատշգամբում աշխատասենյակ էլ հատկացրեց, Վիկտոր Մահսուրաձեի նոր օդայում ժամանակավոր (ինչպես ասաց Կակո Ռատիանին՝ մինչեւ վրանների ու ֆիննական տների ստանալը) կացարան էլ տրամադրեց՝: Հյուրը շատ էր ոգևորել Վիկտորին, ուստի չափից ավելի ուրախացավ, որ իրեն վստահեցին երկրաբանական կուսակցության ղեկավարի

կենվորությունը: Այդ գիշեր, Պարմենի օջախում, հյուր ու հյուրընկալ շախով-շուխով քեֆ արեցին, ուրախացան: Պարմեն Կակաբաձեն սիրտը մաքուր, դյուրահավատ մարդ էր: Նրան այնպես գրավեցին Ռատիանու խոսքերն ու նուրբ հումորը, որ հրաժեշտի ժամանակ հինգ հոգով հազիվ կարողացան շնչակտուր հյուրին դուրս բերել նախագահի հուժկու բազուկներից:

* * *

Հաջորդ օրը, վաղ առավոտյան, Կակո Ռատիանին՝ իր անբաժան պայուսակը ձեռքին, գործարար մարդու կեցվածքով, քայլում էր գյուղի գլխավոր մագիստրալով: Ճանապարհին նա մերթ ընդ մերթ կանգ էր առնում էլեկտրասյուների առաջ եւ բարձր ծիծաղում. իր համարակալումները ջնջել էին, փոխարենը թանաքով, տուշով, կավիճով (ոմանք նույնիսկ դանակով էին փորագրել) հայտնվել էին ահա այսպիսի գրություններ՝ «Այս սյունը պատկանում է Միքելթաձե Մուրմանին», «Ամբերկի Թաղումաձեի», «Սեւաստի (տղան)», «Մարթա Քեբուլաձե-Կվեկվեսկիրիի», «Նատաշա», «Կորնելի Շվաքիրիձեի» և այլն, և այլն:

Գրասենյակի մոտ կանգնած էր նիհար, վիզը բարակ մի մարդ: Նկատելով Երկրաբանական կուսակցության ղեկավարին, նա անմիջապես առաջ եկավ՝ աջ ձեռքը գլխին պահած, որ հանկարծ քամին չթռցնի ճակատի վրա իջնող իր սպիտակ, իմերելական գլխարկը:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ռատիանին հիանալի գլխի ընկավ, որ բարակավիզ այս մարդը իր հետ գործ ունի, բայց մեջք արեց նրան ու արագ-արագ քայլերով բարձրացավ աստիճաններով: Մարդը հետեւեց նրան:

- Ի՞նչ կա,- քայլերը չդանդաղեցնելով ետ նայեց Կակոն, զգացնել տալով, որ հազարումի գործ ունի, ու եթե նա այդքան հասկանում է, ուրեմն թող առավոտ վաղ իրեն չզբաղեցնի:

-Ես Սաշա Վաշաղմաձեն եմ, բատոնո՛: Երեկ էստեղ չէի, Ցոլոուրի էի գնացել...ոչ էի գնացել... ի՞նչ իմանայի, որ տունս կարող էր քանդվել...

- Հիմա հո ամեն ինչ լա՞վ է- Ռատիանին հոնքերը վեր արեց:

-Երեկ սյուներ եք բաժանել, հա՞, բա՛տոնո... Բախտիս տերը մեռնի, հա՛... հենց էդ ժամանա՞կ պիտի գյուղից գնայի..... Ու .. խնդրեմ ահա...սյու՛ն չունեմ...

- Ընդամենը էդքա՞ն....Ա՛յ մարդ, Ես էլ ասեցի ի՛նչ փորձանք է էկել գլխիդ, ա՛յ մարդ,- հանգստացած շունչ քաշեց երկրաբանների պարագլուխը:

-Ուրիշ էլ ի՞նչ պիտի լիներ, բատո՛նո... Թե ինչ-որ մեկին իսկապես անհրաժեշտ է էս սյունը, ուրեմն էդ մեկը հենց ես եմ, որ կամ: Էկող գարուն էս տունս քանդելու եմ, նորը կառուցեմ.... բա պետք չի գա՞... Իսկ ուրիշները պիտի ջարդեն, էս ոսկի շինանյութը վառելիք դարձնեն...

-Ի՞նչ անեմ, ա՛յ ախպեր...Մեր էղածն էլ էս է, աչքիդ առաջ, տեսնում ես: Ես ոչ էլ խառնվել եմ էս գործին,

նախագահին եմ հանձնարարել.... Ասի՝ թող իրենք իրենց բաժանեն: Էլ ուրիշ բան ասել չեմ կարող,- ասաց Կակո Ռատիանին, մատները տարավ դեպի դռնախորշը, հանեց բանալին, դուռը բացեց եւ իր նոր առանձնասենյակ այնպես խոժոռադեմ մտավ, ասես ամբողջ կյանքն այս առանձնասենյակում էր անցկացրել ու արդեն ձանձրացել: Սաշա Վաշաղմաձեն կրնկկոխ հետեւեց նրան:

- Չէ, բա՛տոնս, օգնեք պիտի ինձ:

-Ի՞նչով, ա՛յ ընկեր:

- Գոնե մի սյուն պիտի դասավորեք...

- Բայց ո՞նց: Ունեմ ու չե՞մ տալիս:

-Մի կերպ...

-Ուրիշից խլեմ՝ քե՞զ տամ: Քեզ թույլ կտա՞ս ուրիշի ապրանք վերցնել: Բա է՛ն մարդը, ով իր անունն ու ազգանունն է գրել սյան վրա, ի՞նչ կասի, ի՞նչ կմտածի... Չէ, ախպեր, չեղա՛վ... Անունս պիտի ընկնի, հեղինակությունս կորցնեմ, էդ մարդու աչքին զրո դառնամ, հե՛չ բան...

- Բայց ես հո հենց էնպես չե՞մ ուզում...- ասաց Վաշաղմաձեն՝ արդեն գրեթե շշուկով:

- Չե՞ս ամաչում, ա՛յ տղա: Ջահել մարդ ես, ո՞նց ես քեզ թույլ տալիս էդպիսի բան: Սյունը ծախեմ, քեզնից փո՞ղ վերցնեմ: Իմ տեսքից երեւու՞մ է, որ նման բան կարող եմ թույլ տալ ինձ: Լավ իմանաս, իմ անունը ինձ համար մի ամբողջ աշխարհ արժի: Մյուս անգամ չհամարձակվես ինձ էդպիսի բան ասել: Ես մինչեւ էսօր ազնիվ, հալալ կյանքով եմ ապրել... Չէ՛, դու դեռ լա՛վ չես ճանաչում ինձ,

աշխարհը հըլը հո լրիվ շուռ չի՞ եկել:

-Մի՛ նեղացեք, բատոնո՛, բայց ախր ի՞նչ անեմ, գլխիս տեր չունեմ.... Է՝հ, ի՞նչ արած, դուք ողջ լինեք, սաղ-սալամաթ, չկա՝ չկա...- տխուր-տխուր ասաց Սաշան, մի անգամ էլ նայեց երկրաբանին, ու արդեն պատրաստվում էր գնալ, երբ Ռատիանին կանգնեցրեց նրան.

-Իսկ դու որտե՞ղ ես աշխատում:

-Մեխանիզատոր եմ:

-Բարձրագույն կրթություն ունե՞ս:

-Չէ,- անհարմար զգալով՝ ասաց Վաշաղմաձեն:

-Շատ լավ: Եթե քեզ աշխատակազմի ղեկավար նշանակեմ, կաշխատե՞ս....

-Բայց ՄՏՍ[1]-ից ո՞վ ինձ կթողնի....

-Էնտեղ էլ աշխատի, երկու աշխատանք կունենաս: Էստեղ շատ գործ չի լինի: Գործունյա մարդիկ պետք է հավաքես, աշխատավոր: Էս մի շաբաթվա մեջ Միխարուլիձեների դարպասի առաջ նոր փայտամած ենք տեղադրելու: Խոշոր հարմարանքներ եմ ստանալու, հին քանդուքարափի վրա իջեցնել չի լինի: Դե՛, հիմա դու գիտես, ում ճանաչում ես, դիմի՛ր բոլորին: Նախագահը տեղյակ է, ինքն էլ է էնտեղ լինելու: Օրվա մեջ, երկու-երեք ժամ, իրիկունները, կաշխատենք: Ու ամեն մեկը էս երկու շաբաթում օրական քսան-քսան մանեթ կստանա: Թափով աշխատողին քսանհինգ էլ դուրս կգրեմ: Վա՞տ է:

1 ՄՏՍ-մեքենա-տրակտորային կայան

Ոչ ոքի մի՛ ասա, բայց դու օրական իրե՛ք թումփանոց ես..... Եղա՞վ... Լսու՞մ ես...

- Հրամանքդ, բատոնո՛: Բանվորներին ե՞րբ բերեմ,- Վաշաղմաձեին երկար-բարակ մտածել պետք չէր:

-Հենց էսօր, է՛ս իրիկուն: Նախ ճանապարհն ենք մաքրելու, կեղտի մեջ կորած է: Հիմա շուտ, վազիր, գնա: Ժամը հինգին փայտամածի մոտ կսպասենք ձեզ, ամեն մեկը թող իր բահ ու քլունգով գա:

Կադրերի նորընծա ղեկավարը գլխով արեց:

-Սպասի՛ր,- Ռատիանին մի անգամ էլ հետ պահեց նրան,- գեղի ծերին, էնտեղ, որտեղից սկսվում է մեր ճանապարհը...դրանից մի սյուն էն կողմ... գլխավոր ճանապարհի վրա... Բայց... ջհանդամը լինի.., Վերջիվերջո ես ինքս պետից մի երկաթե սյուն կխնդրեմ: Անուն-ազգանունդ կգրես վրան... քե՛զ լինի: Բայց ոչ ոքի չասես.... լսո՞ւմ ես, թե չէ բոլորը գլխիս կհավաքվեն: Դե՛, վազի՛ր, շուտ:

Սաշա Վաշաղմաձեն գխապտույտ ուրախությամբ սլանում էր աստիճաններով:

* * *

Դիդմիծցիներից շատերն էին ցանկանում երկու ժամում քսան ռուբլի վաստակել: Սաշա Վաշաղմաձեն շուրջ քառասուն կամավոր հավաքագրեց: Այդ օրը հանեցին փտած լաստակներն ու մաքրեցին ճանապարհը: Երկրորդ օրը Կակոն կոլտնտեսության նախագահից

պահանջեց փայտամածի համար հատկացնել շրջանային պահեստում բացառիկ դեպքերի համար ամբարած փայտը: Կակո Ռատիանին աշխատանքային օրվա վերջում կոլտնտեսականների ազգանունների դիմաց տետրում գրում էր «25 ռուբ.» ու բոլորին ստորագրել տալիս:

Անցավ տասնհինգ օր: Երկրաբանական կուսակցության ղեկավարը գյուղում հայտնի մարդ դարձավ: Բոլորը ակնածանքով էին նայում նրան ու պատրաստ էին միշտ օգնել: Շատ խաթրաշահ էին նրա հանդեպ: Երկրաբանական կուսակցության բրիգադն այնպես հավեսով ու միահամուռ ուժերով էր գործ անում, որ Կակոն երբեմն նույնիսկ տուն էր ուղարկում նրանցից ոմանց:

-Գերածախս կունենամ, էսքան բանվոր պետք չի,- ասում էր նա:

Ռատիանին սուս-փուս պաշտոններ էր բաժանում, և կոլտնտեսականների մեջ գոռոզ-գոռոզ ման էին գալիս երկրաբանական կուսակցության ղեկավարի երե՛ք տեղակալ, չո՛րս գործավար, երե՛ք հաշվող-չափող, վե՛ց խորհրդական-օգնական եւ չո՛րս հավաքարար-հաշվետար: Կակո Ռատիանին, յուրաքանչյուրի՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխան, բարձր աշխատավարձ էլ նշանակեց:

Երկրաբանական կուսակցության առաջնորդի հեղինակությունը իր եզրագծին հասավ այն ժամանակ,

երբ նրա գլխավորած բրիգադը ավարտեց ճանապարհի վերանորոգումն ու գյուղի կենտրոնում սկսեց բաղնիքի շինարարությունը:

Ծառայողների էնտուզիազմին չափ ու սահման չկար: Այդ քսան օրվա ընթացքում որոշ ժրաջան կոլտնտեսականներ գրանցեցին շուրջ հինգ հարյուր ռուբլու վաստակ: Իսկ երբ խոսք էր բացվում փողի մասին, Կակոն սիրալիր բացատրում էր, որ կես ամսից կժամանի հաշվապահն ու կբաժանի աշխատավարձերը:

Անցավ քսան օր: Աշխատավարձը չէր երևում: Երկրաբանական կուսակցության հաստիքավոր և արտահաստիքային անդամները տրտնջում էին, ու այստեղ-այնտեղ փնթփնթալով՝ ասեկոսներ տարածում:

Մի օր էլ Դիդմիծա գյուղի հրապարակում վիթխարի խողովակներով բեռնված երկու «տրայլերներ»երևացին: Վարորդներն ուզում էին տեսնել երկրաբանական կուսակցության ղեկավարին՝ Ռատիանուն: Կակոն ուշ դուրս եկավ աշխատասենյակից ու հենց պատշգամբից ու սոսկալի լուտանք թափեց անմեղ վարորդների գլխին.

-Էս ի՞նչ եք բերել, ես քսան դյույմանոց խողովակներ եմ պահանջել, դուք քառասունանոցներ ե՞ք բերել: Դուք էլ, ձեր ղեկավարներն էլ տխմար, հաստագլուխներ եք: Ես էստեղ արդեն քսան օր եղավ մեն-մենակ տանջվում եմ, ժողովրդին կոտորեցի աշխատեցնելով, իսկ վարչությունը նույնիսկ հաշվապահ ու փող չի ուղարկում ժամանակին: Անմիջապես վերադարձե՛ք ու շտապ կարգով տեղ

հասցրեք թե՛ մարդկանց, թե՛ շինանյութը: Առաջին հերթին էլ թող հաշվապահ ուղարկեն ու իմ երեք Վիլիսները:

-Հասկանալի է, բատոնո՛, ինչպես Դուք կհրամայեք, պե՛տ,- վարորդները գլխով արեցին, ու հսկայական մեքենաները դղրդալով հեռացան:

Այժմ այլեւս ոչ ոք չէր կասկածում, որ Կակո Ռատիանին Երկրաբանական կուսակցության առաջնորդն էր:

* * *

Գալուց ուղիղ մեկ ամիս անց Ռատիանին անհետացավ: Վիկտոր Մահուրաձեն նրա գրասեղանի վրա գտավ հետեւյալ նամակը. «Շատ շնորհակալ եմ ամեն ինչի համար, թանկագի՛ն դիդմիծցիներ: Աստված վկա՝ ես սիրում եմ բոլորիդ, բայց լքում եմ ձեզ, քանի որ աշխատավարձերի վճարման օրը մոտենում է: Ո՞վ է ինձ էդքան փող վստահել: Ես մի խեղճուկրակ մարդ եմ: Կյանքում ոչ մի հաջողության չեմ հասել: Ուզում էի մեկ ամիս ձեզ հետ անցկացնել ու անցկացրեցի: Հիմա նորից կբռնեմ իմ ճանապարհը: Չհայհոյե՛ք ինձ, դուք էնքան հալալ ու դյուրահավատ, վստահող ժողովուրդ եք, որ գթացի ձեզ ու չկործանեցի, չդավաճանեցի: Ես ձեզնից ոչինչ չեմ գողացել, չեմ խլել: Ձեր՝ Կակո Ռատիանի»:

Մի քանի օր անց, ոստիկանության ստորաբաժանմունքների գրատախտակներին հայտնվեց Կակո Ռատիանու լուսանկարը՝ հետեւյալ գրությամբ. «Ներքին գործոց մարմինները փնտրում են մի խաբեբա,

սրիկա, խարդախ մարդու, որը պաշտոնյաների ու սովորական մարդկանց հետ ծանոթություն է հաստատում Կակո Ռատիանի անուն-ազգանունով, իրեն ներկայացնում որպես Երկրաբանական կուսակցության ղեկավար, շահում է դյուրահավատ մարդկանց վստահությունն ու նրանց շահագործում որպես ավճար աշխատուժ՝ ամենատարբեր, ոչ պետական գործերի համար»:

Այս հայտարարությունից հետո Դիդմիծայի հրապարակում նորից հայտնվեցին խողովակներով բեռնավորված տրայլերները:

-Մենք,- ասացին վարորդները,- երրորդ ՕՏԿ[1]-ից ենք: ՀԷԿ-ի շինարարության համար խողովակներ ենք փոխադրում: Մի անգամ մի մարդ կտրեց մեր ճանապարհն ու խնդրեց, որ շրջեինք մեր մեքենաները եւ ուղղվեինք այստեղ: « Ես այնտեղ կդիմավորեմ ձեզ, կանպատվեմ, կասեմ, իբր՝ ես ի՞նչ պահանջեցի, իսկ դուք ի՞նչ եք բերել: Դուք կլսեք ինձ, գլխով կանեք ու կշարունակեք ձեր ճանապարհը: Խնդրում եմ, տղանե՛ր, գրազ եմ եկել, չքցեք ինձ, հանկարծ չպարտվեմ»: Լուրջ մարդ էր երեւում, գլխին լայնեզր գլխարկ էր, ի՞նչ իմանայինք, թե ստահակի մեկն է:

Երբ կատաղած գյուղացիները այս ու այն կողմ ցրվեցին, կոլտնտեսության գրասենյակի առաջ երկու

1 Տեխնիկական վերահսկողության բաժին

ԵՐԻՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

հոգի մնացին: Նրանք նստել էին քարի վրա ու ծխում էին:

Խաղաղ երեկո էր: Հեռվից լսվում էր գրամոֆոնի ձայնը:

-Բայց մի բան պիտի ասեմ,-- սկսեց Վիկտոր Մաիսուրաձեն:

-Ի՞նչ,-հարցրեց Սաշա Վաշաղմաձեն՝ Երկրաբանական կուսակցության աշխատակազմի նախկին ղեկավարը:

-Էս մարդիկ, որ էսպես կանգնել՝ գոռում են, թե կերա՜վ մեր փողերը, հանկարծ ռաստ գա մի տեղ՝ քարկոծենք պտի, գլուխը ջարդենք, իրավացի՞ են, ասա՛...:

-Իսկ ի՞նչ, մեր փողերը չկերա՞վ, մեզ էլ էշի պես չաշխատեցրե՞ց...մենք էլ ագահությունից իրար էինք անցել...

-Ի՞նչ ես ասում, Սաշա՛, աշխատում էինք, հա, բայց չէ՞ որ մեր, մե՛ր փայտամածի, մե՛ր կամրջի, մե՛ր ճանապարհի, մե՛ր բաղնիքի համար... Ի՞նչ շահ ուներ մարդը, ի՞նչ տարավ էստեղից:

-Ոչինչ.... Բայց դու ի՞նչ ես կարծում՝ ի՞նչ էր ուզում մեզնից, դու հավատո՞ւմ ես, որ մեր էս հեռու-հեռավոր վայրերը նրան մեր փայտամածի, ճանապարհի ու բաղնիքի հոգսը բերեց:

-Ինքն էլ չգիտեր՝ ի՞նչ էր ուզում, բայց մենք չպիտի հայհոյենք նրան:

-Բա ի՞նչ անենք, կենա՞ցը խմենք:

- Դե՛, ուրեմն նախ մեր սրտերի ձայնը լսենք ու հետո միայն դատենք: Ա՛յ քեզ բարի մարդ, բայց ի՞նչ ենք պահանջում Ռատիանուց, հենց միայն այն, որ մեր

ճանապարհը նորոգեց և այլևս ցեխի մեջ չենք կորչում, քի՞չ է:

-Չգիտեմ, ոչի՛նչ չգիտեմ, բա՛ն չեմ հասկանում: Կբոնեն երեւի, ու էդ ժամանակ էլ ինքը մեզ կասի ճշմարտությունը՝ ի՞նչ էր ուզում, ինչո՞ւ էր էդպես կպել մեզ, ընդհանրապես ինչո՞ւ եկավ, ինչո՞ւ հենց մե՛ր գյուղը ընտրեց,- շշմած-շլմորած խոսում էր Սաշան:

-Գուցեն Աստված էր, Աստվա՛ծ, բայց մենք չճանաչեցինք նրան, ասինք մեզ նման մահկանացու դառնա, մեզ հավասար...չէ՞ որ էդպիսի սովորություն ունենք մենք,- քթի տակ ծիծաղեց Վաշաղմաձեն:

- Աստվա՛ծ, չէ՛ մի...

Սաշա Վաշաղմաձեն կանգնեց, ուղղեց թիկնոցը ու առաջ գնաց մթության միջով: Նա հիմա իր տան ուղղությամբ չէր թեքվելու: Հասնելու էր գյուղի ծայրին, որպեսզի այնտեղ՝ կեռմանի մոտ, էլեկտրասյան վրա սպիտակ ներկով գրված «Սաշա Վաշաղմաձե» գրությունը ջնջեր:

ԼՈՒԻԶԸ

Երիտասարդ գինեկոլոգ Բախվա Կանթելաձեն գնում էր աշխատանքի: Հերթափոխն սկսվում էր ժամը չորսին: Երևի մի ժամում հասցնեմ բենզին լցնել՝ մտածեց նա եւ մեքենան թեքեց Էլբաքիձեի զառիվերի ուղղությամբ: Ճանապարհին, «Իվերիա» հյուրանոցի մոտ, գրեթե վազեվազ, ձեռքը թափահարելով՝ նրան ընդառաջ էր գալիս մի աղջիկ: Բժշկին թվաց, թե աղջկան ճանաչում է: Նախ դիմացի հայելուն նայեց, հետո մեքենան հետ քշեց եւ աղջկա հենց քթի տակ արգելակեց: Առանձնապես չուրախացավ, որ ծանոթ պիտի տեսնի. նախ՝ բենզին լցնել չի հասցնի, հետո էլ՝ ո՞վ իմանա՝ որտեղ է ապրում: Երբ աղջիկը բացեց մեքենայի հետևի դռնակն ու նստեց, Բախվան համոզվեց, որ առաջին անգամ էր տեսնում նրան և զղջաց, որ կանգ առավ:

-Բարեւ ձե՞զ....., - միացնելով իրար հարց ու ողջույն, ասաց Բախվան:

Աղջիկը լավ հարմարվեց մեքենայում, եւ Բախվային թվաց, թե անկոչ հյուրը հայելուն նայելով՝ լեզու հանեց: Սիրունիկ աղջիկ էր՝ կլորիկ, կորավուն ծնկներ, երկնագույն աչքեր՝ դարձյալ երկնագույնով ներկած, ուռուցիկ կոպեր, ուղիղ քիթ, շրթնաներկոտ, գրգռիչ

շուրթեր, այտոսկրերին իջնող երկար, ուղիղ, մոխրագույն մազեր: Հագել էր էժանագին բուկլեի նախշուն վերարկու եւ բալի գույնի ճտքակոշիկներ:

-Կներե՛ք, ձեր դեմքն ինձ ծանոթ է, բայց չեմ կարողանում տեղը բերել,- սովորաբար անծանոթ աղջիկների հետ զրույցը հենց այդպես էլ սկսում են:

-Ոչինչ էլ չէ.. ես ձեզ առաջին անգամ եմ տեսնում,- աղջիկը պատասխանեց շինծու սեթևեթանքով ու ծիծաղեց:

-Այդ դեպքում ծանոթանանք, Բախվա՛,- և Բախվան, աջ ձեռքը հետ մեկնելով, դրեց աղջկա ծնկներին:

-Լուիզա,- իր ձեռքում զգալով կնոջ սառը, փափուկ մատները, Բախվան ամուր սեղմեց դրանք:

Այնուհետև «Արագվի» ռեստորանի մոտով նա վերեւ բարձրացավ եւ Հերոսների հրապարակում մի պտույտ կատարեց:

-Ո՞ւր գնանք, Լուիզա:

-Ժամանակ ունե՞ք,- Լուիզան առաջ ձգվեց:

-Հիմա ժամը քանի՞սն է:

-Ես ժամացույց չունեմ:

Բախվան գրպանից հանեց ժամացույցն ու մեկնեց նրան:

-Նայի՛ր: Կոճակը սեղմես՝ կբացվի:

-Երեքն անց տասնհինգ րոպե:

-Չորսին պետք է լինեմ աշխատանքի տեղում, Լուիզա, այնպես որ, մեր զբոսանքից ավելի հաճելի բան ոչինչ չի կարող լինել :

Լուիզան տխրեց:

-Ա՛յ մարդ, եթե հաշված բոպեներ ունեիր, էլ ինչո՞ւ կանգ առար:

-Սկզբում ծանոթ թվացիր:

-Ծանոթից էլ լավ կլինեինք, եթե ժամանակ ունենայիր:

Բախվային սկզբում տհաճ թվաց Լուիզայի սանձարձակ շիտակությունը: Հետո, ճիշտն ասած, կնոջ անկեղծ համարձակությունը մինչև անգամ դուր եկավ նրան: «Պարզ ասում է ինչն ինչոց է, չի թաքցնում: Անպայման նախ լուսնի՞ց պիտի խոսի, հըլը ջղերդ քայքայի, հետո էլ սիրահարված կնոջ կոկորդիլոսի արցունքնե՞ր թափի»,- մտածեց նա:

- Մի ուրիշ անգամ քեզ ո՞րտեղ կարելի է տեսնել, Լուիզա՛:

- Քեզ ի՞նչ պետք են ուրիշ անգամնե՞ր, հո չե՞ս պատրաստվում ինձ սիրահարվել:

-Չէ՛... հենց էնպես... այսինքն՝ հեռախոս ունե՞ս:

-Հեռախո՞ս... ա՛յ տղա, ես իսկի գիշերելու տե՛ղ էլ չունեմ, մեկ մի ընկերուհուս տանն եմ մնում, մեկ՝ մյուսի:

Ու թեև Լուիզան պատասխանում էր այսպես անմիջական ու անհոգ, բայց Բախվան նրա հայացքում եւ խոսելու երանգի մեջ թաքուն, խորունկ վիշտ նշմարեց:

-Եթե չես նեղվի, «Իվերիա»-ի մոտ վերադարձիր, հա՞, այնտեղ կիջնեմ ու կգնամ իմ ճամփով,- վերջին բառերը Լուիզան համարյա լացակումած արտաբերեց:

Բախվան խղճաց նրան եւ միտքը փոխեց՝ արի կլինի

Սոսո Կվախաձեի մոտ տանեմ»:

-Իսկ....եթե ընկերոջս տուն տանեմ քեզ, Լուիզա՛:

- Համակրելի՞ է,- հարցրեց Լուիզան օտարոտի ձայնով:

-Ի՞նչ նշանակություն ...կարևորն այն է, որ լավ տղա է, լավ կիյուրընկալի քեզ:

-Հյուրընկալությունը մի կողմ, բայց տղամարդուն հավանել է պետք, չէ՞, որ կարողանաս նրա հետ...ես այլ կերպ չեմ կարող...

-Կհավանե՛ս, կհավանե՛ս...

Անցան Չելյուսկիինների կամրջով, ապա Ծերեթելու պողոտայով թեքվեցին դեպի ձախ՝ Վորոնինի նրբանցք: Բախվան մեքենան կանգնեցրեց փողոցին հարող միահարկ տան առաջ, իջավ ու թակեց պատուհանը:

Նույն պահին, ասես հենց թակոցի լինեին սպասելիս, երեւաց թխադեմ, ճերմակին տվող մազերով, երկար քթով, մոտ երեսնամյա մի տղամարդու գլուխ: Սոսոն ամուրի էր և ապրում էր վարձով:

-Ի՞նչ է եղել, - անմիջապես հարցրեց Սոսոն:

-Մեքենայիս մեջ աղջիկ կա, էնքան լավիկն է, որ անպայման կհավանես:

- Վա՛յ, բայց ախր ի՞նչ անեմ, աշակերտներ ունեմ, երկու աշակերտ հազիվ եմ ճարել: Առանց էն էլ անցյալ շաբաթ բացակայեցին: Մի ժամ հետո արի, դուրս կգամ,- տխուր-տխուր ասաց Սոսոն:

-Ինձ համար չեմ ուզում, է՛, քե՛զ համար եմ բերել, ես հիմա գործի եմ շտապում:

Սոսոն ծիծաղեց եւ աչքով արեց:

- Վա՛հ, էդ ո՞ր օրվանից ես սկսել էդպես հոգալ իմ մասին ... չէ՛, դու հաստատ ինչ-որ բան ես թաքցնում:

- Էրեխիս արեւ, ճիշտ եմ ասում:

Սոսոն լրջացավ:

-Իսկ եթե մի ժամ հետո բերե՞ս:

-Բաբոյի՛դ արեւ... մի ժամ զբաղեցնեմ ես,, հետո էլ սինու վրա պատուհանից քե՞զ մատուցեմ... էդ ե՞ս ուզում: Ավելի լավ չի՞ տանդ մի տեղ նստեցնես, մինչն աշակերտներդ գնան:

- Գժվել ե՞ս, ա՛յ տղա, ա՛յ տղա, անմիջապես գլխի կընկնեն: Ուզում ես խայտառակ լինե՞մ:

-Դե, ուրեմն գնացի, ես էդքան ժամանակ չունեմ:

-Մի ժամ հետո՛, էլ ի՞նչ կուզեիր...- Սոսոն պանրավաճառի պես ծամածռեց դեմքը:

-Կորի՛ գնա,- Բախվան միացրեց մեքենայի շարժիչը և ուղղություն վերցրեց դեպի Կարմիր պարտիզանների փողոց: Նա հիշեց, որ Գիվի Բաչաձեն կնոջն ու երեխաներին ուղարկել է Փասանաուրի: «Եթե տանն է, կուրախացնեմ»:

Աստիճաններով ուղղակի սուրաց վերեւ ու շնչակտուր սեղմեց զանգի կոճակը:

Գիվին երկար խալաթ էր հագել, իսկ գլխին գդակ՝ չաչի դրել:

-Վա՛հ, Բախվա՞...ներս արի:

-Ժամանակ չունեմ: Էսօր տա՞նն ես:

-Բա ո՞ւր պիտի գնամ, շաբաթ է:

-Երջանիկ ժողովուրդ եք: Ինձ համար շաբաթ չէ, կիրակի էլ գոյություն չունի: Կիրակի օրով էլ են աշխատեցնում: Գիվի՛, աղջիկ եմ բերել քեզ, ա՛յ էսպիսի,- բութ մատը վեր տնկեց Բախվան:

-Սո՛ւս, մի՛ գոռա,- Գիվին հետ նայեց,- ի՞նչ աղջիկ:

-Սովորական ...

-Դրանից լավ բա՞ն, բայց...- Գիվին իրար շփեց ափերը,- բայց զոքանչս տանն է, լավ, մի բան կմոգոնեմ եւ որեւէ տեղ կուղարկեմ: Մի ժամ հետո չես բերի՞: Արա էլի էդ լավությունը:

- Մի ժամ որ ունենայի, էլ ինչու՞ էի քեզ մոտ բերում, էդքան էլ հո այլասերված չե՞մ: Չորսին հիվանդանոցում պետք է լինեմ: Շու՛տ հազնվիր, դուրս արի ու գործի անցիր:

- Չի ստացվի: Ես դրա բնավորությունը գիտեմ ոչ մի տեղ չի գնա:

-Դե, լավ: Ուրեմն ես գնացի,-ասաց Բախվան ու արագ-արագ, գրեթե վազեվազ իջավ աստիճաններից:

-Բախվա՛,- Գիվին հենվեց բազրիքին:

-Հը՞....

-Ճիշտն ասած... ինձ արդեն չի կարելի նման բաներ,- աչքերը տրորեց Գիվին:

- Օյիններ մի սարքի՛,- Բախվան նախատեց ընկերոջը:

Մի ամիս առաջ Գիվիին աշխատանքի տեղափոխեցին շրջգործկոմ՝ որպես հրահանգիչ, իհարկե պիտի հետևի իր վարք ու բարքին, ո՛նց չմտածեցի էդ մասին, է՛...- ինքն

ՅԱՄՈՅԵՑԵԼՈ ՆԱՏԵՍԱՍՈՒՄՈՎ

իր վրա բարկացավ Բախվան :

-Ի՞նչ ասաց,- տխուր հարցրեց Լուիզան:

- Էս անտերի էլ զոքանչն է տանը:

-Իվերիայի մոտ տար ինձ՝ իջնեմ, շատ անհանգստացրի քեզ,- ասաց աղջիկը՝ գլուխը հակելով կրծքին:

-Սպասի՛ր, սպասիր...մեկին էլ հիշեցի, նրա մոտ տանեմ քեզ...հըլը մի տես քանի՞սն է,- ժամացույցը մեկնելով ասաց Բախվան:

-Չորսից տասնհինգ է պակաս:

-Ոչինչ, թող մի քիչ էլ ուշանամ:

Կախա Մեձվելիան ապրում է Կամոյի փողոցում: Անուղղելի ամուրի է, քառասունը վաղուց բոլորած: Երբ հարցնում են՝ ինչո՞ւ ես անզավակ ծերանում, հան պատրաստից պատասխանում է՝ որին հավանել եմ,՝ ամուսնացած է եղել, իսկ իմ տարիքի չամուսնացած կինն էլ ո՞ւմ է պետք...

Կախան «Պլազմաներ»-ում է աշխատում: Թեկնածուականը պաշտպանել է անցյալ տարվա հոկտեմբերին:

Նախ սկսեց կանչել պատուհանի մոտից՝ Կախան առաջին հարկում է ապրում, բայց տեսնելով, որ ձայնը տեղ չի հասնում, մտավ շքամուտք եւ սկսեց թակել դուռը:

- Ո՞վ է,- հարցրեց Կախան:

-Ես եմ, Բախվան, քնա՞ծ էիր:

Շեմին երևաց Կախան՝ կիսավարտիքով ու շապկանց:

-Օրը ցերեկո՞վ էլ մարդ քնի... դրա համա՞ր է գործդ

էդպես առաջ գնում...

- Չէ՛, ուղղակի պառկել էի: Զայնդ ոնց որ թե ջոկեցի.. Բայց պատուհանից որ նայեցի, չերևացիր, մեքենադ էլ աչքովս չընկավ:

-Երկար-բարակ մասլահաթի ժամանակ չունեմ,- Բախվան տեղում ասես դոփում էր,- աղջիկ եմ բերել քեզ համար, աղջի՛կ...

-Վա՛խտ գտար. դու էլ.....էսպես անթրաշ, փշոտ-փշոտ հո չե՞մ ընդունի, հագնվեմ, սափրվեմ ու հետո գնանք՝ ուր որ կասես:

-Լսի՛ր, հո չափուձնի համար չեմ բերել, է՛...

-Բա ինչի՞ համար ես բերել...:

-Էնպիսի աղջի՛կ է որ... Քիչ առաջ եմ փողոցում բռնացրել: Վատը չի երեւում, լավիկն է, շատ սիրուն աչքեր ունի, լավ էլ զրուցակից է, ասող-խոսող:

-Է՛հ, ի՞նչ ասեմ քեզ, ես էլ ուրիշ բան կարծեցի, թե չէ... դրա նման մեկն էլ հրես գողնքումս է պառկած....Էս էլ մի բան չի... Ձանձրացել եմ արդեն: Ամուսնանամ պիտի:

- Լա՛վ, լա՛վ, հերի՛ք փիլիսոփայես, դաղար տուր..... Միշտ էդպես ես ասում, բայց դու ամուսնացող պտուղ չես: Բայց ախր հիմա ի՞նչ անեմ էս աղջկան:

Կախան քորեց ծոծրակը:

-Ի՞նչ ասեմ, ա՛յ տղա, սա էլ հենց նոր եկավ: Դուրս անեմ՝ կգնա ու ընդհանրապես կկորչի: Էս անտերները էսպես են՝ մեկ տեսար, երբ քեզ դեղի նման պետք են լինում, ոտով գլխով կորչում են, չես կարողանում գտնել,

մեկ էլ տեսար՝ միանգամից գլխիդ են թափվում: Իսկ եթե մի ժամ հետո բերե՞ս...

- Ես գնացի, աշխատանքից եմ ուշանում,- ու Բախվան շտապեց դեպի դուռը:

-Ներող եղիր, Բախվա՛... չնեղանաս էլի՛,- բացականչեց Կախան նրա հետեւից ու բանալին երկու անգամ պտտեցրեց կողպեքի անցքում՝ հանկարծ էլի ինչ-որ մեկը չանհանգստացնի:

«Բախտ չունեմ, չէ՛...», մտածեց Բախվան,- հենց հիմա պիտի խելքի գայի՞ն էս իմ ախպեր տղերքը: Անձրեւը ոսկուց էլ լինի, գլխիս, մեկ է, երկաթ կթափվի: Ով՝ ով, ես հո ինձ լավ գիտեմ... Հիմի էս աղջիկն ի՞նչ կմտածի, չի՞ ասի, թե էս ո՞ւր է ինձ տանում- բերում, էսքան ժամանակ դռնեդուռ քարշ տալիս... Էն է մի տեղ կանգնեցնի, իջնեմ, պրծնեմ...»:

«Իվերիա» հասնելուց քիչ առաջ, Բախվան մտաբերել էր էլի մեկին՝ Մուրման Նացվլիշվիլուն: Կաղ տղա է, խմբագրություններից մեկում ռետուշյոր է: Սոսոն էր մի անգամ ծանոթացրել խինկալանոցում: Անցյալ տարի իր երեխայի համար պատի թերթ էր ձնավորել: Պիտի որ էս կողմերում լինի ապրելիս, Նաղվարևի նրբանցքում:

Դարպասի մոտ չափազանց գեր մի կին գորգ էր թափ տալիս:

-Քալբատոնո՛, էս կողմերում Մուրման անունով մարդ ապրու՞մ է ...

-Մուրմա՞ն,- կինը ճիպոտն իջեցրեց ու այնպես նայեց

դեպի վեր, ասես օդն էր հոտոտում:

-Հա, մի քիչ էլ կաղում է:

- Դե, էդպես ասա, պրծի էլի՛, ա՛յ մարդ: Մուրման է անունը, հա՞...Ա՛յ, էսպես գնացեք, բակի վերջում, ուղիղ դիմացի դուռն է:

- Գուցե գիտե՞ք , տա՞նն է, թե՞ ոչ..

-Չեմ կարող ասել, բայց էսօր ոնց որ թե աչքովս չի ընկել...

-Շնորհակալություն,- Բախվան անցավ սանդղամուտքով ու վազեց սալահատակ բակով:

Մուրմանը տանն էր: Դեմքից երեւաց, որ Բախվայի գալով ուրախացավ: Հյուրը, նրան շունչ քաշելու հնարավորություն չտալով, վրա տվեց.

-Ի՜նչ լավ է, որ տանն ես, մեքենայիս մեջ աղջիկ կա, հենց հիմա կբերեմ, ես պիտի վազեմ աշխատանքի, ուշացա արդեն, գործից կհանեն,- և, պատասխանի չսպասելով, շրջվեց:

-Սպասի՛ր, ա՛յ մարդ, մի հատ նորմալ բացատրի՝ ո՞վ, ի՞նչ... – վրա-վրա հարցերի տարափ էր տեղում Մուրմանը:

-Աղջիկ է, էլի՜.. ես էլ կարգին չեմ ճանաչում, «Իվերիա»-ի մոտ նստեց:

-Պարզ է... Իսկ ինձ հետ կհամաձայնի՞... է՜ն բանում, էլի՜...ինձ հետ կուզի՞, ի՞նչ ես կարծում,- Մուրմանը ձգտում էր հասնել նրան:

-Մի՛ անհանգստացիր, քմահաճ աղջիկ չի երեւում:

- Ախպոր պես, ինձ անհարմար դրության մեջ չզցես, ես դրա իմացածներից չեմ, ավելի լավ է ուրիշի մոտ տանես:

-Ա՛յ մարդ, ես քեզ ասում եմ՝ նաղդ գործ է, նախօրոք խոսել եմ հետը, քեզ էլ ճանաչում է,- ստեց Բախվան:

-Եվ ի՞նչ...

-Ասաց՝ հա՛, համաձայն եմ, դու հիմա տուն մտիր ու սենյակում սպասիր մեզ:

Մուրմանը, բակով մեկ ցատկոտելով, տուն մտավ:

Իրենք էլ ներս մտան: Աղջիկը մատներն ագուցած կրծքին, կանգնեց դռան մոտ: Բախվան սկսեց խոսել.

-Ծանոթացի՛ր, Մուրման... Լուիզան է: Մեր երազած աղջիկներից է,- հետո դարձավ Լուիզային,- Մուրմանի մասին արդեն բավականին պատմել եմ քեզ: Մե՛ծ նկարիչ է:

-Ռետուշյոր,- ուղղեց Մուրմանը:

-Ի-ի՞նչ,- հարցրեց աղջիկը:

-Նկարները ռետուշ եմ անում: Դուք երեւի չգիտեք, թե դա ինչ բան է: Ա՛յ, օրինակ, եթե բաց գույնի գիծ է լինում, աղոտ, ես մգացնում եմ, որպեսզի լավ տպագրվի, պարզ երևա թերթում:

- Քյասա՛ր ...լա՛վ կացեք: Իրար չնեղացնե՛ք,- վերջին բառերը Բախվան արտաբերեց արդեն դռան շեմից եւ, առանց հետ նայելու, վազեվազ գնաց:

-Վերարկուդ հանիր:

Մուրմանը կնոջ ձեռքից վերցրեց վերարկուն եւ կախեց մեխից:

-Նստի՛ր,- նա մատնացույց արեց աթոռը,- մոտեցիր

վառարանին:

-Շնորհակալ եմ, չեմ մրսում,- աղջիկը ձեռքերը դրել էր գոգին եւ հայացքը հառել հատակին:

-Հիմա չես մրսում, որովհետև նոր ես մտել: Քիչ հետո կսառչես,- ձեռքը դրեց թիթեղյա վառարանին,- էս անիծվածն էլ արդեն հանգել է:

Դրսից փայտ բերեց: Պպզեց վառարանի առաջ ու մեջը փայտ դարսեց:

- Տեսնես հիմա դրսում քանի՞ աստիճան կլինի:

-Զրոյից բարձր չի լինի:

-Ավելի պիտի ցրտի...ոսկորներս սառել են:

- Որովհետև էստեղի օդը խոնավ է,- բացատրեց աղջիկը,- իսկ մեզ մոտ մինչեւ 10 աստիճան սառնամանիքի դեպքում էլ էսպիսի ցուրտ չի լինում:

-Որտե՞ղ՝ ձեզ մոտ:

-Խաշուրիից վերև մի գյուղ կա, Բրե:

Մուրմանը թեև զգաց, որ զրույցը լրիվ ուրիշ ընթացք էր ստանում, բայց բոլորովին չզարմացավ: «Ուրիշների մոտ ի՜նչ հեշտ է ստացվում ամեն ինչ: Տեսնես նրանք ինչպե՞ս են սկսում: Աղջկա հետ կարգին խոսել էլ չեմ կարողանում: Հիմա կասի՝դեսուդեն է ընկնում»,- մտածում էր նա:

- Թբիլիսիո՞ւմ ես սովորում, Լուիզա:

-Սովորո՞ւմ,- Լուիզան ծիծաղեց,- բարձրագույնի դռները հենց էն է դեմս բացված, մտում է՝ գնամ, սովորեմ:

-Ինչո՞ւ.... միջնակարգը հո ավարտե՞լ ես,- Մուրմանը շրթունքը կծեց՝. բա դա հարցնելու բա՞ն է...:

-Ավարտել, չէ մի՛... Էլ ի՞նչ կուզեիր... Աշխատում էի Վաշլիջվարիի տնտեսությունում, Դիղոմիում սենյակ էի վարձել: Գյուղում հորս վիճակը բարդացավ՝ թոքերի բորբոքում ուներ.. Գնացի էնտեղ ու ուշացումով վերադարձա: Աշխատանքից ազատելու հրաման էին տվել... Տանտերս էլ մի կողմից... բնակարանից դուրս գրել, եղած-չեղած իրերս էր դուրս թափել աստիճանների վրա. Ա՛յ, էդպես էլ մնացի նաեւ առանց բնակարանի:

-Հիմա իրերդ որտե՞ղ են:

- Նախանցյալ օրը ընկերուհուս տուն տարա: Մեզ նման աղջիկ է: Նա էլ է վարձով ապրում, Խիլիանի փողոցում:

Կրակը ճարճատում էր: Լուիզայի այտերը շառագունել էին: Ձեռքերը վերջապես հեռացրեց իրարից եւ մոտեցրեց վառարանին: Նստած էր վառարանի մոտ՝ Աստվածամոր պես գեղեցիկ եւ անօգնական: Մուրմանը, ձեռքերը ծնկին դրած, անընդհատ նայում էր աղջկան: Լուիզան զգում էր նրա հայացքը եւ մեկ դեպի առաստաղ էր փախցնում աչքերը, մեկ էլ ուղիղ Մուրմանին էր նայում, ապա նորից գլուխն իջեցնում ու հայացքը հառում հատակին:

-Վառարանի ուժն ուրիշ է, էլի՛... Ռադիատորի մոտ էսպես չես տաքանում,- խուլ շշնջաց երիտասարդ կինը:

-Ճիշտ ես, բայց այս սենյակում ջերմություն չի մնում: Ձեռքիս անընդհատ բամբակ ու դանակ է, կարծես թե ամեն ծակուծուկ փակել եմ, բայց հենց կրակը մարում է, ոտքերս սառչում են, մանավանդ քնած ժամանակ:

- Պատերը կապիտալ չեն սարքված, հա՞...:

-Չէ, հա՛... աղյուսի միաշար պատ է: Սկզբում որպես խորդանոց են կառուցել, հետո էլ որոշել են վարձով տալ:

-Դրա համար էլ ցուրտ է: Անցքեր ունեցող պատը տաքություն չի պահում:

«Հիմա ես պիտի ասեմ՝ հա՛, Լուիզա, հա՛, ծակուծուկով պատը տաքություն չի պահում, հետո էլ խորհրդավոր հառաչեմ: Աղջկա հետ զրույցի հիանալի՛ թեմա .... Չէ՛, ինձ նման անշնորհք դանդալոշը աշխարհ չպիտի գար, չէ՛: Հիմա էս աղջիկը վեր կկենա, վերարկուն կհագնի, կասի՝ շատ շնորհակալ եմ, որ թույլ տվեցիր տաքանամ վառարանիդ մոտ, ու կգնա: Հա՛, հա՛, հենց էդպես էլ կանի»:

Սակայն Լուիզան գնալու միտք չուներ. ինքն իր մատներին էր նայում, և Մուրմանին մի պահ թվաց, թե նա ննջում է:

-Ուրի՞շ.... Քույր-եղբայր ունե՞ս, Լուիզա:

-Ունեմ, էդ կողմից հարուստ եմ. երեք եղբայր, չորս քույր:

-Ընդամենը յո՞թն եք:

-Ութը:

«Գրողը տանի,...մինչեւ ութ հաշվելն էլ մոռացա»:

-Դո՞ւ...

- Ես ամենավերջինն եմ, տաշտաքերը..

-Քույրերդ մեծ կլինեն:

-Չորսն էլ ամուսնացած են:

«Հանկարծ հիմի էլ չհարցնեմ, թե բախտավո՞ր են.... լեզվիս վրա չիր չի թրջվում, էլի՛...»-աշխատում էր իրեն զսպել Մուրմանը:

Երկար ժամանակ լուռ էին:

-Լուիզա՛,- Մուրմանը կանգնեց,- մտքովս չանցավ... սոված կլինես: Գնամ ներքև՝ հաց ու երշիկ բերեմ գոնե:

Կինը չպատասխանեց:

Մուրմանը ուղղակի թռավ մթերային խանութ: Կարծես ոտքերը քամին լիներ տանելիս. մի ակնթարթում բարձրացավ վերելքը:

Լուիզան մաքրել էր թավան եւ դրել վառարանին:

-Ի՞նչ միս, ո՞ւր է միս: Էնպիսի հերթ է որ...Ծայրը չի երևում... Կբերեն թե չեն բերի, էդ էլ Աստված գիտի: Պահարանում պիտի որ ձու լինի: Դու մի քիչ համբերիր, ես հենց էս բոպեին կտապակեմ: Ձու ու երշիկ իրար հետ համով է ստացվում: Միրում ես, թե չես սիրում, կապ չունի: Էս է մեր ուտելիքը, սա պիտի ուտենք... Աղքատի կերակուրն էլ էս է:

Ձվերը կոտրեց ափսեի մեջ, իսկ երբ Լուիզան ոտքի ելավ, սիրտն ահ առավ՝ մի՞թե գնում է:

-Որտե՞ղ ես լվացվում....

Մուրմանը պահարանից մաքուր սրբիչ հանեց ու կախեց ուսից:

-Ուղիղ, հետո առաջ:

- Հենց հիմա կգամ,- Լուիզան ժպտաց,- ու ինքս կպատրաստեմ, դու թող, միայն աղ տուր ինձ:

Երբ Մուրմանն աղջկա ուսը համբուրեց, Լուիզան մի պահ ընդհատեց ձու հարելն ու խոժոռվեց: Մուրմանը նստել էր վառարանի մոտ ու նայում էր սեղանի մոտ

կանգնած աղջկա ուղիղ ոտքերին ու նազուկ, ճկուն մեջքին: Բառերով անբացատրելի ինչ-որ հրաշալի, ինչ-որ ջերմ ու արտասովոր բան կար այդ պահին նրա մեջ, եւ Մուրմանը ցանկանում էր, որ այս րոպեները երկարեին: Մենությունից հոգնած-բեզարած տղամարդը վերջապես կարող է ահա ասել-խոսել մեկի հետ, դատարկվել, թող որ թեկուզն հազարումի հիմարություն դուրս տար, բայց մեծահոգաբար ներված լիներ.... Իսկ հետո կանգնեին սեղանի մոտ ու միասին ձվածեղ պատրաստեին: Նման բան իր հետ երբեք չէր եղել, ու նա հիմա, քիչ էր մնում արտասվեր ուրախությունից. տանը կի՛ն կար:

Լուռ ճաշեցին:

Տղամարդը մտածում էր, թե ինչ էր ասելու ճաշից հետո: Կինը ևս նույնն էր մտածում: Վերջինս նաև վախենում էր, որ հանկարծ չխախտվի այս իդիլիան, որն այնպես ջերմացրել էր հոգին եւ ինչ-որ տեղ տեսած կամ կարդացած ընտանեկան կյանքի մի սովորական դրվագ էր հիշեցնում:

Կինն իր կյանքը կտար, միայն թե ամեն ինչ չավարտվեր այնպես, ինչպես սովորաբար էր ավարտվում: Ճաշից հետո նա ափսեները լվաց, սենյակը կարգի բերեց ու նորից նստեց վառարանի մոտ: Մուրմանը ժպտաց:

-Ինչո՞ւ ես ժպտում,- Լուիզան շրջվեց Մուրմանի կողմ:

-Մնաց ասեղնագործես.... Կարծես մեր ամբողջ կյանքը միասին լինենք անցկացրած:

Կինն, ըստ երեւույթին, ուրիշ պատասխան էր

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ակնկալում, ուստի անմիջապես հանդարտվեց:

Վառարանում ճարճատում էր կրակվող փայտը: Նեղ պատուհանից թափանցող արևի շողերն աստճանաբար կորցնում էին իրենց ուժը:

-Ամուսնուցդ ինչո՞ւ ես բաժանվել, Լուիզա՛:

- Իսկ ո՞վ ասաց, թե ես ամուսին եմ ունեցել:

-Բոլորն էլ էդպես են ասում:

-Ո՞վ՝ բոլորը,- կնոջ ձայնի մեջ շփոթմունք զգացվեց:

-Եսի՛մ,- Մուրմանը հապաղեց,- սովորաբար աղջիկները սիրում են ասել, թե վերջերս ամուսնուցս բաժանվեցի, ինձ փախցրել էր, իսկ ես չսիրեցի նրան... Առաջին տղամարդը, որի հետ ծանոթանում եմ բաժանվելուցս հետո, դուք եք... Սովորաբար էս կարգի բաներ են ասում:

Մուրմանը զգաց, որ հիմարություն դուրս տվեց, բայց արդեն ուշ էր:

-Չէ՛, Մուրման, ես ամուսին երբեք չեմ ունեցել, ոչ էլ մտադիր եմ ասել այն, ինչ սովորաբար ասում են աղջիկները:

Լուիզան վեր կացավ եւ մոտեցավ պատուհանին: Ուսերը ցնցվում էին, թաշկինակը հանեց եւ ծածկեց աչքերը:

-Դե լավ, հա՛, մի բան էր՝ ասեցի, հանաք չե՞ս հասկանում...

Մուրմանը վճռեց, որ այլեւս ձեն-ծպտուն չի հանի, միեւնույն է իրենից բան դուրս չի գա, հարցրեց՝ կպատասխանի, չհարցրեց՝ կլռի...

... Գիշերն արդեն կիսվել էր: Լուռ նստել էին վառարանի

ԾԱՌԱՅԵՑԱՆ
ՆՈՒՆԱՐՈՒՄՈՅՍ

մոտ: Հետո Լուիզան վեր կացավ:

-Ինչքա՛ն ժամանակ է անցել,- վերջապես սկսեց նա խզված ձայնով,- տեսնո՞ւմ ես, չէ՞, ինչ անամոթ աղջիկ եմ, լավ, ինքս չեմ ֆայմում՝ գնամ, դու ինչո՞ւ չես ասում... Վռնդի՛ր ինձ, խնդրում եմ, ասա՝ գնա՛, աղաչում եմ՝ դու՛ր ա՛ր ինձ...Շուտ պիտի ասեիր...Տեսնո՞ւմ ես, չէ՞, հիմար աղջիկ եմ,- Լուիզան կամաց-կամաց բարձրացնում էր ձայնը, իսկ վերջին բառերն արտասանեց անտիկ ողբերգության հերոսուհու մենախոսության պես՝ բարձրաձայն ու վճռական:

Հետո միանգամից նստեց, դեմքն առավ ափերի մեջ ու նորից սկսեց լալ: Մուրմանը ձեռքերը չհեռացրեց ծնկներից: Սպասեց մինչև աղջիկը հանգստանա, հետո միայն ասաց.

-Մնա՛... Ո՞ւր պիտի գնաս: Ուշ է արդեն, ընկերուհիդ երեւի քնած կլինի:

Վեր կացավ: Պահարանի հետեւից դուրս քաշեց ծալովի մահճակալը, հին, մահուդե մաշված բազմոցից սավան ու վերմակ հանեց, հետո զգույշ, որպեսզի մատները չփսաստեն, բացեց բազմոցը:

-Ես մահճակալին կքնեմ, դու՝ բազմոցին: Մի կերպ կտեղավորվենք:

...Մուգ կապույտ մշուշի շղարշով էր պատվել պատուհանը, երբ հերարձակ, լույսի պես ճերմակափայլ, գիշերազգեստով կինը կանգնեց Մուրմանի գլխավերեւում եւ մերկ ծնկով մեղմ ու քնքուշ հպվեց նրա թեւին:

ՅԱՐՈՅՆԵՅԱՆ ՑՈՒՆԱՀՈՒՄՈՅՍ

-Քնա՞ծ ես: Քեզ մոտ պառկեմ, հա՞: Մրսեցի:

Մուրմանն, իհարկե, քնած չէր:

* * *

Նախաճաշից հետո Մուրմանը՝ ձեռքին կանաչ կազմով թղթապանակը, կանգնեց պատից կախված կլոր հայելու առաջ ու սկսեց իրեն կարգի բերել:

-Լուիզա՛... Ես աշխատանքի եմ գնում: Մեկ-երկու ժամ կուշանամ: Եթե դու որեւէ տեղ գնաս, բանալին կդնես դռան փալասի տակ: Կաշխատեմ ավելի շուտ վերադառնալ: Գուցեն իսկի էլ գործ չունենամ:

Մուրմանը խոսում էր՝ առանց հայելու մեջ իրեն նայելու, ոչ էլ կարողանում էր ուղիղ նայել Լուիզայի աչքերի մեջ:

Ոչ միայն Լուիզան, այլեւ ամենամիամիտ երեխան անգամ կհասկանար, որ Մուրմանը խենթանալու չափ ուզում էր, որ երբ աշխատանքից վերադառնար, Լուիզային տեսներ վառարանի մոտ նստած՝ լուռ, սպասումից հոգնած ու դադրած:

ՃԱՊՈՆԱՑԻՆ

Ճապոնացուց շատ ի՞նչ եմ տեսել, բայց այս մեկը՝ Կոմիաման շատ զարմանալի ճապոնացի էր ու մյուս տեսածներից լրիվ տարբերվում էր: Հենց իմացավ, որ ես պիտի լինեմ իր գիդը՝էքսկուրսավարը, միանգամից ձեռքս առավ ափերի մեջ, համարյա զոռով ինձ տարավ հյուրանոցի իր համարը ու իրար անցած սկսեց քրքրել-դատարկել ճամպրուկը: Ի վերջո թղթի մի փոքրիկ, ճմռթած կտոր գտավ ու մեկնեց ինձ: Անգլերեն տառերով գրված էր «Օկրիբա:» Ուրիշ ոչինչ:

-Այո՛, -ասացի,- Էդպիսի գյուղ կա :

-Հա՛ի,- ուրախացավ նա:

-Իմերեթիում է... ա՛յ, էնտեղ ,- ձեռքով ցույց տվեցի պատուհանի ուղղությամբ:

-Հաի՛, հաի՛,- ժպտում էր ճապոնացին ու տմբտմբացնում գլուխը:

Անգլերենի իմ իմացությունը համապատասխանում է միջին պատրաստվածության գիդի մակարդակի: Այնպիսի էքսկուրսավարի, որը մասնագիտացված է ռուսալեզու պատվիրակների հետ աշխատելու մեջ:

Էքսկուրսավարության դասընթացների ժամանակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

մեզ անգլերեն սովորեցնում էին ընդամենը վեց ամսվա ընթացքում՝ ծայրահեղ դեպքերի համար. գուցե ինչ-որ տեղ պետք գա:

Փորձեցի զրույցը շարունակել անգլերենով, բայց պարզվեց, որ Կոմիաման, ի զարմանս, անգլերենին տիրապետում էր ավելի վատ, քան ես:

Այլընտրանք չկար, մտում էր նորից վերադառնալ ռուսերենին:

- Ի՞նչ կապ ունեք Օկրիբայի հետ, որևէ գո՞րծ ունեք, Կոմիամա-սան:

-Հա՛հ,- հյուրը ժպտալով թափահարեց գլուխը:

-Օկրիբան Թբիլիսիից բավականին հեռու է:

-Հա՛հ, հա՛հ, Օկրի՛բա,- Կոմիաման ձեռքս ամուր սեղմեց, երևի դա նշանակում էր՝ կեցցե՛ս, գիտե՛ս, ամեն ինչ հիանալի՛ գիտես: «Օկ-րի՛-բա՛» այնպես քնքշորեն ու սիրալիր արտասանեց այդ անունը, որ սիրտս ուղղակի կտոր-կտոր եղավ.....Շաա՛ատ հուզվեցի:

Հետո վերադարձանք սպասասրահ ու գտանք ճապոնացի էքսկուրսավարին: Իմ ճապոնացի գործընկերը ,հիանալի ճապոներենից բացի փայլուն տիրապետում էր նաեւ անգլերենին, բայց ամենակարեւորն այն էր, որ նա ռուսերեն ևս գրեթե անսխալ էր խոսում:

-Պարոն Կոմիաման հարցնում է Օկրիբայի մասին, գուցե աշխարհագրական այս տեղանվան հետ կապված ինչ-որ խնդի՞ր ունի,- հարցրեցի ես էքսկուրսավարին, ու մինչ կավարտեի հարցս, ժպտերես Կոմիաման ձեռքերն

ՅԱՐՈՅՆԵՑԱՆ ՇՈՒՆԵՂՈՒՄՈՅՆ

իջեցրած նայում էր բերանիս:

-Ձան ծան դուա չունալու օկրիբա մոսի ջունածուն հաի դովազե լածունա՞,- ծվծվոցի նմանվող ձայնով հարցրեց էքսկուրսավարը:

-Հաի՛, հաի՛, ջեն ղվաի ջզբրիա վա տեն դան թու կաի դո չիքչի քծրումա,- պատասխանեց Կոմիաման եւ ամոթխած հավելեց,- ջան չակո լունա հիու լակվազենա՞:

-Մոսի՞,- երեւի ինչ-որ բան էր ուզում ճշտել էքսկուրսավարը:

Կոմիաման նախ երկու ձեռքի մատները ցույց տվեց, հետո ձախ ձեռքը պահեց հետեւում եւ բացեց միայն աջ ձեռքի մատները:

-Պարոն Կոմիաման ասում է, որ ինքը տասնհինգ տարի առաջ եղել է Վրաստանում եւ այցելել է Օկրիբա գյուղը: Այնտեղ մի գյուղացի իր տուն է հրավիրել նրան: Գինու կարասից գինի է հյուրասիրել: Եթե հնարավոր է, ինձ տարեք Օկրիբա, ասում է, ուզում եմ նորից այցելել հյուրընկալներիս, հետաքրքիր է, թե ինչպե՞ս են նրանք,- բացատրեց էքսկուրսավարը, ու ես անմիջապես պատկերացրի մեր ղեկավարի խոժոռ դեմքը. նա չի սիրում, երբ զբոսաշրջիկները ընտրում են առանձին երթուղի:

-Փոխանցեք պարոն Կոմիամային, որ ես սիրով կկատարեի նրա խնդրանքը, եթե դա կախված լիներ ինձնից, հենց այսօր, մեր օֆիսում կպարզեմ այդ հարցը, իսկ վաղը՝ ճաշին, կտեղեկացնեմ որոշման մասին:

ԵՐԻՎԱՆՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Կոմիաման կարծես թե հասկացավ ասածս, ափերն իրար շփելով շնորհակալություն հայտնեց, իսկ հետո, երբ գիդը թարգմանեց խոսքերս, ավելի ուրախացավ. չո՛ր անգամ խոնարհվեց... Ես նկարագրել անգամ չեմ կարող, թե ինչ հոյակապ արտիստիզմով կատարեց նա ճապոնական իր այդ ռեվերանսը:

Երրորդ օրը ես ու Կոմիաման «Ինտուրիստ»-ի՝ համարը փոխած մեքենայով (?!) սլանում էինք դեպի Օկրիբա:

Ճապոնացի հյուրը ճանապարհին երեք անգամ գոնե քնեց-զարթնեց, քանի որ մեր ջրիկ զրույցի հեռանկարը լեզվական արգելքի պատճառով լրիվ սահմանափակված էր:

Միմյանց հասկանալու մեր միակ աղքատիկ միջոցը անգլերենն էր, դա էլ պահում էինք Օկրիբայի համար:

Ուզում եմ ձեզ պետական գաղտնիք հայտնել. էքսկուրսավարներին սովորաբար զգուշացնում են, որ չի կարելի ավելորդ հարցերով ձանձրացնել հյուրերին: Օտարերկրացիները հետաքրքրասեր գիդեր չեն սիրում: Քաղաքակիրթ աշխարհում շատ հարցեր տալը լավ երանգ չի համարվում: Հարցազրույցի համար գործարար մարդիկ լրացուցիչ վարձատրվում են:

Ելնելով ահա այս երկու պարագաներից, ճանապարհին լուռ, լուռ էի՝ ո՛չ ձեն, ո՛չ ծպտուն, գլուխս կախ նստած՝ ձևացնում էի, թե ննջում եմ, բայց իրականում, ընթերցողից ի՞նչ թաքցնեմ, արթուն էի:

Սեպտեմբեր ամիսն արդեն մոտենում էր իր ավարտին:

Միայն Վրաստանում են այսպես գեղեցիկ միահյուսվում, իրար միաձուլվում ոսկեգույնը, կանաչն ու նարնջագույնը:

Արևն արդեն մայրամուտվում էր, երբ հասանք Օկրիբա:

- Օկրի՛բան .....- զգույշ հպվեցի հյուրի ուսին:

-Հա՛, հա՛,- ճապոնացին ժպտալով թեթեւակի թափահարեց իր ալեհեր գլուխը:

Նա հայացքը սեւեռեց պատուհանին և ամեն ցանկապատ տեսնելիս՝ երջանկությամբ լեփ-լեցուն երեխայի պես ինչ-որ բան էր թոթովում իր մայրենի լեզվով: Ժամանակ առ ժամանակ ժպտալով նայում էր ինձ, լուրջ տոնով ասում՝ Օկրիբա՛, Օկրիբա՛ եւ լիաթոք ծիծաղում:

Հասնելով Օկրիբա, անմիջապես գտանք կոլտնտեսության նախագահին:

Երիտասարդ, երկնագույն աչքերով տղան այդ պահին ժողով էր հրավիրել, բայց, երբ նրան հայտնեցին հյուրերի այցի մասին, անմիջապես ժողովը ցրեց եւ ընդառաջ եկավ՝ մեզ դիմավորելու:

-Ճոլա՛, բատո՛նո, Բուրկաձե,- ձեռքը նախ հյուրին մեկնեց, հետո շրջվեց դեպի ինձ եւ ողջունեց վաղեմի բարեկամի նման:

-Ճանապարհը հո շատ չտանջե՞ց ձեզ, մեր հյուրն էս խորդուբորդ ճանապարհներից հո չհոգնե՞ց:

Շնորհակալություն հայտնեցի ու անցա բուն գործին:

-Պարոն Կոմիաման ճապոնացի գործարար է: Վրաստան է եկել որպես զբոսաշրջիկ, իսկ տասնհինգ տարի առաջ եղել է այստեղ՝ Օկրիբայում: Մի ընտանիք նրան կարասից գինի է հյուրասիրել: Մարդը չի մոռացել լավությունը, սիրտը էստեղ էր քաշում՝ ուզում եմ անպայման Օկրիբա գալ,ասում էր՝ ուզում եմ անպայման տեսնել էն գեղջուկին, որ ինձ հյուրասիրեց, քեֆ ու հալ հարցնել...կարոտս առնել.. Շատ հետաքրքիր է ո՞նց է, լա՞վ է, ողջ-առողջ է՞....

-Շատ բարի, բատոնո՛, - Ճոլայի դեմքը շողաց,- փոխանցեք նրան, որ շատ շնորհակալ ենք Օկրիբան չմոռանալու համար:

-Հի սեի....սենք յու, վերի մաչ,- «թարգմանեցի» ես:

-Արիգատո զաիմեշտա,- Կոմիաման, ձեռնափերն իրար մոտեցրած, երեք անգամ խոնարհվեց:

-Ի միջի այլոց հյուրընկալի ազգանունը չի հիշում,-շատ ցածրաձայն, որ հյուրը չլսի, ասացի ես,- թեև, եթե անգամ լսեր, միևնույն է, չէր հասկանա, որովհետև ժպտերես հյուրը վրացերեն միայն մեկ բառ գիտեր՝ Օկրիբա:

Ճոլան մեզ հրավիրեց աշխատասենյակ: Ձեռքերը բռունցք արեց, դնչով հենվեց բռունցքին և հայացքը հառեց մեզ.

- Գոնե մոտավորապես է՞լ չի հիշում տունը:

-Ար իու նիու վեար լիվ իթ ջենտլմե՞ն,- ասացի՝ շրջվելով դեպի Կոմիաման:

Կոմիաման ուսից կախ պայուսակը դրեց հատակին,

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

վազեց պատշգամբ, զննեց շրջակայքը եւ երկար մտածելուց հետո, հայտարարեց.

-Նո՛ու:

-Չի հիշում: Երեւի էն ժամանակ հարբեցրել են: Գյուղում որ շրջենք, երևի հիշի,- ասացի ես:

Երբ վերադարձանք աշխատասենյակ, Ճոլան կանչեց բակում իր համար ինչ-որ գործով բզբզացող, իմերլական գլխարկը գլխին ծերունուն:

-Բիկենտի քեռի՛, եթե չեք նեղվի, մի րոպեով բարձրացեք, հա՞:

Բիկենտին ճիպոտը մի կողմ շպրտեց, գլխարկը հանեց, մի որոշ ժամանակ բեղերը ոլորեց, հետո նախքան Ճոլայի աշխատասենյակ մտնելը՝ կոշիկները դռան մոտի թաց փալասի վրա երկար, երկար քսմսեց-մաքրեց՝ էնպես հպարտ-հպարտ, գլուխը բարձր պահած, ձեռքերն էս ու էն կողմ թափահարելով, որ ասես պարային շարժում լիներ սովորելիս:

-Բատոնո՛ Բիկենտի, Ճապոնիայից հյուր ունենք, ծանոթացի՛ր,- Ճոլան հազիվ էր հասցրել խոսքն ավարտել, երբ Բիկենտին մի քանի ոստյունից հետո հայտնվեց Կոմիամայի առաջ: Ձեռքերը շալվարի գրպաններին ջանադրաբար քսմսել-մաքրելուց հետո, նա արդեն բռի մեջ հյուրի աջն էր չափում ու անսահման ակնածանքով նայում նրա աչքերին:

-Լա՞վ եք, չէ՞, բատոնո չեմո, ողջ-առո՞ղջ եք, չէ՞, գործերդ հո լա՞վ են:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

-Հա՛, հա՛, արիգե՛տո,- գլուխը թափահարեց Կոմիաման:

-Բատոնո՛ Բիկենտի, տասնհինգ տարի առաջ էս պատվարժան մարդը մեր հյուրն է եղել, - հետո դարձավ ինձ,- էն ժամանակ ես ընդամենը տաս տարեկան էի, մի մատ երեխա, խելքումիտքս՝ թիթեռնիկերի հետ, ո՞վ էր ինձ թողնողը, որ մեծերի գործերին խառնվեմ...

Բիկենտին ուշադիր նայեց, Ճոլան էլ շարունակեց.

-Մեր գյուղում ինչ-որ մեկը հյուրընկալել է նրան, կարասից գինի հյուրասիրել... Էդպիսի դեպք չե՞ս հիշում, գուցե դու ինքդ էլ ներկա՞ ես եղել կամ թեկուզ լսե՞լ ես մեկից:

-Ասում է՝ որտեղացի՞ է, - Բիկենտին սեղանից վերցրեց իմերլական գլխարկը, երեք անգամ ծալծլեց ու դրեց ծոցագրպանի մեջ:

-Ճապոնացի է:

-Ճապոնա՛ցի... Ճապոնա՛ցի,- ծերունին ցուցամատը դրեց շրթներին եւ երկու անգամ դանդաղորեն շրջվեց:

-Էն վախտերը նախագահը պիտի որ Պիմենին լիներ: Ողորմածիկը ողջ լիներ, ամեն ինչ կասեր: Իսկ գյուղսովետում ո՞վ էր:

-Երեւի Անդրո Ջղամաձեն.... Բաբուցան ընդամենը յոթ տարի է, ինչ ղեկավարում է գյուղսովետը:

- Չէ՛, Բաբուցան նոր է, չի իմանա: Ա՛յ, Անդրոն կարող է հիշել, հաստատ կհիշի: Բայց բախտներս չբերեց, տնաշենը հենց հիմա՞ պիտի Թբիլիսի գնար:

-Ե՞րբ է գնացել:

-Երկու շաբաթից ավել կլինի: Թոռն է ինչ-որ պառկած, Վախտանգի աղջիկը, ոնց որ թե..

- Վա՛հ, Վախտանգի աղջիկն արդեն ամուսնացե՞լ է, ի՞նչ ես ասում... էդ ե՞րբ էդպես մեծացավ...

-Հա՛, դրա նման մի բան...Իսկի կարգին ամուսնացած էլ չի դեռ: Դպրոցից ինչ-որ մեկի հետ փախել է: Երեխի հաշիվը հո իմացած կլինես:

-Ի՞նչ երեխա.... արդեն երեխա էլ ունի՞:

-Էդպես է....էլի՛...՛է՛հ.... Բա լավ, ուրիշ ո՞վ կիմանա... Հա՛, հիշեցի....Պորֆիլե՛ն...Արի կլինի նրա մոտ գնացեք, դժվար թե էսպիսի հյուրը ձեռքից պրծած լիներ: Եթե մինչև անգամ Պորֆիլեն տանն էլ չի եղել, ապա գոնե կիմանա, թե ո՞ւմ հյուրն է եղել....նրա մոտ գնացեք, նրա՛:

Տասնհինգ րոպեից արդեն գտնվում էինք Պորֆիլե Ջինճարաձեենց մոտ և դարպասի առաջ՝ վիթխարի ընկուզենու շվաքի տակ կանգնած, նայում էինք նրան՝ հսկայամարմին, մկանուտ, լայնաթիկունք, շիկավուն, խնդումերես տղամարդուն:

-Համեցե՛ք, բատոնո, համեցե՛ք - ներս էր հրավիրում մեզ նա:

-Բատոնո՛ Պորֆիլե, էս ճապոնացին տասնհինգ տարի առաջ ձեր հյուրը եղե՞լ է,- լուրջ-լուրջ հարցրեց Ճոլան:

-Համեցե՛ք, համեցե՛ք, բատոնո՛, իհարկե, իմ հյուրն է եղել, իհարկե, բա էլ ուրիշ ու՞մը պիտի լիներ... Հա՛, հա՛.... Հենց ինքն է, որ կա.., Ասում եք, ճապոնացի, չէ՞,.....Ի՛նքն

էր...Հաստա՛տ...Դե, ներս մտեք, ինչու՞ եք դրսում կանգնել, բակ մտեք, հյուրի մոտ ինձ խայտառակ մի՛ արեք ախր, է՛...- մոտեցավ հյուրին եւ պինդ սեղմեց նրա փոքր ձեռքը,- զամարջորա՛[1], ո՞նց ես,- հետո դարձավ մեզ,- տեսնո՞ւմ եք՝ ճանաչեց ինձ, իհարկե, մեր հյուրն էր, հա՛, հա՛...

Այնուհետեւ Պորֆիլեն մեզ պատշգամբ ուղեկցեց ու ձեռքով նշան տվեց խոհանոցի մոտ կանգնած հետաքրքրասեր կնոջն ու հարսին:

-Դե՛, շու՛տ, շու՛տ, գործի անցեք:

Հետո շտապով սենյակ վազեց, նարդի եւ աթոռներ դուրս բերեց, դրեց մեր առաջ:

-Որ չձանձրանաք, հրես որտեղ որ է, ամեն ինչ պատրաստ կլինի,- ասաց նա եւ ուղղվեց դեպի բանջարանոց:

Կոմիաման հետաքրքրությամբ և ակնդետ հետեւում էր ձգափոկի պես պտտվող հյուրընկալին: Հետո անգլերենով ինչ-որ բան սկսեց բացատրել ինձ, բայց ես ոչինչ էլ չհասկացա: Հետո պայուսակն ուսից կախ՝ աստիճաններով ներքև վազեց, մի քիչ բակում շրջեց, նորից եկավ պատշգամբ եւ ինչ-որ բան ասաց ինձ, միաժամանակ մատնացույց անելով խոհանոցը:

-Երեւի մառանն է փնտրում,- ասաց Ճոլան:

-Այո՛,- համաձայնվեցի նախագահի հետ ու դիմեցի Պորֆիլեին,- բատոնո՛ Պորֆիլե, կարելի՞ է, որ հյուրը

1 բարև

մառանը տեսնի...

-Էս րոպեիս, բատոնո՛, ես ու իմ Աստված, իհարկե կարելի է, իհա՛րկե... - Պորֆիլեն դատարկեց բանջարանոցից քաղած ու զոգի մեջ հավաքած վարունգ-պոմիդորը ծղոտահյուս զամբյուղի՝ կալանչխայի մեջ, վերցրեց կուժն ու մեզ ուղեկցեց դեպի մառան:

Մառանի դուռը լրիվ չէր բացվել, երբ արդեն ըմբոշխնեցինք գինու անուշ բույրն ու զովաշունչ օդը: Կոմիաման աշխուժացավ, նախ «հաի-հաի» ասելով անցավ սրած բերաններով կարասների կողքով, հետո դուրս վազեց, մառանը երկու անգամ շրջանցեց, ապա մի տեսակ շփոթված, տխուր-տխուր շրջվեց դեպի ինձ:

-Նոո՛ւ,- ասաց՝ նայելով ինձ թախծոտ հայացքով:

- Ասում է՝ չէ, ես էստեղ չեմ եղել,- հայտնեցի հայացքներն ինձ հառած հյուրընկալներին:

- Ո՛նց թե.....Ախր եղել է, ո՞նց չի եղել.. Ուղղակի երևի չի հիշում ...ահագին ժամանակ է անցել ախր... Ես էլ չեմ հիշում, թե որտեղ եմ առաջ հյուր եղել: Նրան ասա՝ մի քիչ համբերի, հենց հիմա ամեն ինչ կհիշեցնեմ,- անմիջապես իրար խառնվեց Պորֆիլեն: Ձեռքն առավ գինու մեծ շերեփը, դրեց կարասի պռունկի մոտ, հետո վերցրեց փայտե կուժը, սակայն ճապոնացին նորից հառաչեց.

-Նոու՛....

-Մի՛ սնահանգստացեք, բատոնո՛ Պորֆիլե: Հիմա մեր գործը նրա հյուրընկալին գտնելն է: Ուրիշ առիթով ձեզ հյուր կգանք: Շնորհակալ ենք ամեն ինչի համար: Չէ,

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ասում է՝ էստեղ չեմ եղել: Կարասը հանկարծ չբացեք, խնդրում եմ:

Բայց ի՞նչը կարող էր կանգնեցնել Պորֆիլեին, միեւնույն է կարասը բացեց: Հետո մեզ բաժանեց կավե պնակներն ու դրանք լցրեց զով, հեքիաթային բուրմունքով, շիթեր ցայտող գինով եւ ճապոնացուն նայեց այնպես, ինչպես դատապարտվածը՝ իր վերջին հույսին:

Կոմիաման գինին խմեց, հյուրընկալին շնորհակալություն հայտնեց ու պայուսակը գցեց ուսին: Հետո մեզ նստեցրեց մեծ կարասի մոտ, փոքրիկ աթոռակի վրա, վզից կախած լուսանկարչական ապարատը տեղադրեց պատուհանի գոգին, վազեց ու պպզեց մեր միջեւ: Երբ ճապոնական խելացի գործիքը կայծկլտոց-չիկոցով անմահացրեց մեզ, Կոմիաման հյուրընկալին հրաժեշտ տվեց՝ արիգատո՛, սե՛նք յու ու գնաց դեպի դուռը:

Էստեղ է եղել, բատոնո՛, էստեղ, ճապոնացիներից շատ ուրիշ ո՞վ է մեր տանը եղել: Չնայած ո՝վ չի եղել մեր տանը, որ... Էնքա՛ն մարդ... Պարզապես հիմա շփոթում է: Մի՛ գնացեք, խնդրում եմ, կամաց-կամաց տեղը կբերի...,- էսպես խոսելով՝ Պորֆիլեն մեզ ուղեկցեց մինչեւ դարպաս, ու, երբ մեքենան շարժվեց, աջ ձեռքը դրեց ճակատին՝ ստվեր արեց դեմքին ու, սիրտը կախ, դեռ երկար ժամանակ նայում էր մեր հետեւից:

Շարունակեցինք մեր ընթացքը և դարձյալ մեքենայով գյուղի մի ծայրից մյուսն անցանք, գուցե ճապոնացին կա՛մ

դարպասը կա՛մ տունը տեսնելով հիշի: Անկեղծ ասած ինքը՝ Կոմիաման էլ սրտանց օգնում էր տասնհինգ տարի առաջ իրեն հյուրընկալողին գտնելու գործում: Հայացքը հառել էր մեքենայի պատուհանին: Ինչ-որ բան էր քթի տակ մեկուսի մրմնջում, հավանաբար հիշողությունն էր լարում, ամեն կերպ ջանում հիշել, տեղը բերել, մեկ -մեկ էլ անհանգիստ -նեղված մեզ էր նայում, ասես ներողություն լիներ հայցելիս, որ անհանգստացրեց մեզ ու էս կրակի մեջ գցեց: Մեկ էլ հանկարծ մի դարպասի մոտ վիզն ընձուղտի պես երկարացրեց.. Վե՛րջ՝ մտածեցինք. փրկվեցինք, վերջապես գտավ իր հյուրընկալին: Ու անմիջապես արգելակեցինք մեքենան:

Շունը հաչելով վազեց ցանկապատի կողմը: Ճլորած խոտերի վրայով մեզ ընդառաջ էր վազում մոտ հիսուն տարեկան, սպիտակ վերնաշապիկով, գալիֆե անդրավարտիքով մի մարդ, այնպես, որ ասես սպասելիս լիներ մեզ:

Ճապոնացին մեզնից շուտ հասավ դարպասին: Նույնիսկ շունը նրան չվախեցրեց: Դիմավորող հյուրընկալի ձեռքը սեղմեց, ու, քանի որ հյուրընկալը ձեռքը բաց չթողեց, Կոմիաման մտածեց, թե երեւի գրկախառնվել է ուզում, պայուսակը գցեց խոտերի վրա ու գրկեց նրան:

Մենք՝ նրա ուղեկիցներս, այս հուզիչ տեսարանի ականատեսներս, քիչ էր մնում հոնգուր-հոնգուր լաց լինեինք:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Երբ անցան հանդիպման առաջին՝ հանդիսավոր վայրկյանները, հյուրը վերցրեց պայուսակն ու նորից կախեց ուսից: Հայացքով տնտղեց բակը, հետո վազեց լորենու կողքին խոյացած կղմինդրե կտուրով շենքի կողմը: Եթե նկատել եք, ճապոնացիները մի տեսակ օրորվելով-ճոճվելով են վազում: Ու այդ սովորական ճապոնական վազքին այն էլ ավելացրեք, որ Կոմիաման աջ ձեռքով ազդրի վրա էր պահում նաև ճոճվող պայուսակը:

-Մառանն է փնտրում, մառա՛նը,-Ճոլան, առանց Կոմիամայից աչքը մի վայրկյան կտրելու, սեղմեց հյուրընկալի ձեռքը:

-Մեր մառանը վերեւում է, խաղողի այգու վերջում: Դու ուղեկցիր նրան, Թոմիա՛, մենք էլ հրես կգանք,- ասաց հյուրընկալը հյուրի հետեւից ընկած տասնվեցամյա տղային, որն այդ շոգին-կրակին, կանաչ բուկլեի՝ հովարը կտրած գլխարկ էր դրել, երեւի կամակոր մազերը հարթելու նպատակով: Այդ ընթացքում Կոմիաման մոտեցել էր խորդանոցին (պարզ երևում էր, որ կարծում էր, թե դա է մառանը), աչքերին մոտեցրել իր փոքրիկ, թմբլիկ ձեռքերն ու զննում էր պատուհանը:

- Հը՞, Կիկիա՛, ճանաչեցի՞ր հյուրիդ,- հարցրեց Ճոլան:

-Իհա՛րկե, բատոնո՛, իհա՛րկե...-Կիկոլան, երջանիկ ժպիտը դեմքին, արագ քայլերով ուղեկցում էր մեզ:

- Ի վերջո, ինքը քեզ գտավ... Դարպասդ տեսավ թե չէ, քիչ էր մնում՝ մեքենայից դուրս թռչեր: Ե՞րբ էր, հիշո՞ւմ ես,

քանի՞ տարի է անցել:

- Ստույգ չեմ հիշում... վերջերս էր..... կարծեմ.. մի երեք տարի առաջ...

-Կորա՛նք...-- Ճոլան ինձ նայեց,- բայց էս ճապոնացին ասում է, թե տասնհինգ տարի առաջ է եղել ու Կիկիան կարաս է բացել իր համար:

-Բացել եմ, բա ի՞նչ եմ արել: Դրանք շատ ուշադիր մարդիկ են... լավ քեֆ արեցինք էն գիշեր... Կարծում եք հիմա պակաս գինի՞ ունեմ... Որն ուզի, էն կարասն էլ կբացեմ, տեսնես առաջվա պե՞ս է խմում, առաջվա պես առո՞ղջ է,- Կիկոլան խոսում էր մի քիչ շփոթված, բառերը հատ- հատ արտաբերելով, հետն էլ ձեռքով հետ էր տանում արահետի վրա կռացած դեղձենու ճյուղերը:

Մեզնից առաջ գնացածները մառանի դռան մոտ մեզ էին սպասում: Բնազդով կռահեցի, որ Կոմիաման մառանն արդեն մի երկու անգամ շրջանցել էր ու արդեն մառանի ծածկի մոտից նայում էր հսկայական հնձանին:

Ներս մտանք: Կոմիաման նախ լուսանկարեց մառանի պատով մեկ տարածված արջի մորթին, հետո կարասի պոնկին կանգնած հյուրընկալի ձեռքից գրեթե զոռով խլեց մորթին, կախեց իր տեղից, պայուսակը վերցրեց ու ավելի վճռական ասաց.

-Նոո՛ւ, ահի վոզ նոթ հիա....

Կիկոլան հասկացավ ամեն ինչ ու այնպես նայեց ինձ, որ սիրտս ուղղակի մղկտաց:

-Ի՞նչ է ասում, բատոնո՛:

- Ասում է՝ էստեղ չի եղել:

- Իա՛, ոնց թե՛...բա որտե՞ղ է եղել... Մոռացել է երեւի... Էն ժամանակ էս մորթին կախված չէր էստեղ: Էս խաղողի այգին էլ չկար... Համեստ մարդ է երեւում: Երեւի չի ուզում անհանգստացնել, բայց ե՛ս, ե՛ս հո հիշու՞մ եմ, որ եղել է էստեղ, բա էդ ո՞նց եղավ, որ ինքը՝ ճապոնացին պիտի չհիշի: Ես նրան ասել եմ արդեն, որ, քանի որ ոտքդ արդեն օջախից ներս ես դրել, պիտի խմես՝ .. հըլը մի իրեն հարցրու, ախր ո՞նց կարող է չհիշել...հրե՛ն, ա՛յ, էն լորենու ստվերի տակ նստած, կենացներ էինք ասում, էն ժամանակ էլ ահագին նկարեց:

Կիկոլան հուզված էր խոսում: Նա դեռ լա՛վ մաքրեց կարասը, ձեռքն առավ դդմի չորացրած կեղևից սարքած մեծ սափորը, ապա արջի մորթուց սարքած տիկից գինի լցրեց դրա մեջ ու լիաժպիտ՝ մեկնեց հյուրին

Կոմիաման ծիծաղեց՝ մանկան պես անմեղ ու վարակիչ: Սափորը հազիվ էր պահել ձեռքում: Դնչի տակ վերուվարվող աղամախնձորից հասկացա, որ մի բաժակից ավել խմած չի լինի: Հետո նա սափորը վերադարձրեց հյուրընկալին, ասաց «արիգատո-զամեշտա» եւ, առանց շրջվելու, շտապեց դեպի մեքենան:

-Չնեղանաս, բատոնո՛ Կիկոլա,- հանգստացնում եմ քար կտրած հյուրընկալին,- տարօրինակ մարդ է երևում էս ճապոնացին: Ուզում է անպայման հենց էն հյուրընկալին տեսնել: Չենք գտնում, ի՞նչ անենք: Ում տեսնում է՝ ասում է՝ էդ չի: Բայց մի կերպ պիտի օգնենք ու

գտնենք: Տեսնես էդ հեր օրհնածը տեսնես ի՛նչ պատիվ է տվել, որ մինչև էսօր չի մոռանում:

- Բա լավ, հիմա ես ի՞նչ անեմ... հետ չե՞ք գա, ախր մի-մի կտոր բան դնենք բերաններս,- Կիկոլան խեղճ-խեղճ նայեց Ճոլային:

- Չէ՛, սիրելիդ իմ Կիկոլա, էսօր արդեն չենք հասցնի, մի ուրիշ անգամ մնա... ի միջի այլոց, խաղողի նոր այգիդ շատ է լավացել: Երևում է՝ լավ բերք պիտի տա,- Ճոլան սիրտ տվեց նրան:

- Չորս տարեկան դարձավ: Անցյալ տարի էլ երևաց, որ լավն է: Բայց ախր, գուցե համոզե՞ք ճապոնացուն: Ախր էսպես ո՞նց կլինի, խայտառակվեցի օտարական մարդու մոտ,-տրտնջում էր Կիկոլան, սակայն Կոմիաման այնպես լավ էր հարմարվել մեքենայի հետնասրահում, որ այլևս ավելորդ էր նրան համոզելը:

Գյուղամիջում թեքվեցինք դեպի աջ: Օրջոնիկիձեի նախկին արձանի պատվանդանը մնաց ետեւում: Ճամփեզրի գերանին կանգնած մոխրագույն բլուզով ու անդրավարտիքով, մի անթրաշ ծերունի, որ ձեռնափայտը պահել էր մեջքին, համարձակ կտրեց մեր ճանապարհը:

Վարորդն արգելակեց: Ծերունին, ձեռքերը ազատելով, հենվեց ձեռնափայտին ու գլուխը խոթեց մեքենայի մեջ:

-Ճոլա՞ն ես, հա՞, արտում գործ էի անում, իմացա՝ հյուր ունես, վազելով եկա: Էս ճապոնացին իմ հյուրն է եղել: Տասնհինգ տարի է անցել էդ օրվանից:

Ճոլան երկմտեց:

ԳԱՌՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- Չե՞ս հավատում, Ճոլա քեռի,- ծերունին գլխարկը հանեց,-ա՛յ, հյուրը թող գլուխս տեսնի, անմիջապես կճանաչի, սուտ հո չե՞մ խոսում:

Ծերունին , պարանոցն առաջ ձգած, նորից առաջ բերեց կիսաճաղատ, ալեհեր գլուխը:

Կոմիաման մի պահ հետաքրքրությամբ ու ժպտադեմ զննում էր տարօրինակ ծերունու գլուխը, հետո զարմացած նայեց մեզ՝ չէր հասկանում իր անելիքը: Ինչո՞ւ էին իրեն առաջարկում այս ծերունու գլուխը:

-Դե՛ լավ, լավ, Գրիգոլ բիձա, կիջնենք: Էս մարդն իր առաջվա հյուրընկալին է փնտրում, հանկարծ անհարմար դրության մեջ չգցես մեզ, լա՞վ,- ասաց Ճոլան ու բացեց մեքենայի դուռը:

Ծերունին մեզ լռելյայն առաջնորդեց իր բակը ու սուփրա բացեց: Տեղավորվեցինք բազրիքավոր օդայի պատշգամբում բացած սեղանի շուրջ: Բոլոր դեպքերում պարոն Գրիգոլը դարպասը փակեց կողպեքով ու ձեռքով արեց աստիճանների ուղղությամբ:

Կոմիաման երկմտանքով նայում էր մառանի ուղղությամբ:

-Ձեր մառանը որտե՞ղ է, Գրիգոլ քեռի, հյուրին մառանն է հետաքրքրում,- զգույշ հարցրեց Ճոլան:

- Ա՛յ, հրե՛ն, բատոնո, էնտեղ է , էնպես անենք, ինչպես հյուրն է ուզում: Բայց ինքը լավ գիտի մառանի ճանապարհը:

Վայրի սալորի ծեր ծառից քիչ այն կողմ ունաբի

նորատունկ ծառուղին էր երեւում, որի ծայրին, հին վրացական ծեսով, մի անկյունում կպցրած տախտակներից կառուցված հնամենի մառանն էր:

Էլ չհոգնեցնեմ ընթերցողին:

Գրիգոլի մառանն էն մառաններից չէր, որտեղ մեր խեղճ ճապոնացին տասնհինգ տարի առաջ հաց ու գինի վայելեր, և որը տիրաբար մնար նրա հիշողության մեջ:

Գրիգոլի պատշգամբում հոտնկայս մի-մի բաժակ կոնծեցինք, փափուկ խաճապուրի համտեսեցինք, որի մեջ էնքան շատ պանիր էր, որ հազիվ էր տեղավորվում, լուսանկարվեցինք ու հրաժեշտ տվեցինք հյուրընկալին:

Սուտ որ չասեմ, էդ օրը էլի մի չորս մառան հասցրինք մտնել: Սակայն, ավա՜ղ, տասնհինգ տարի առաջ ճապոնացուն չէին հյուրընկալել ո՛չ Խարիտոն Չխեիձեն, ո՛չ Կոստա Կվիծինիան, ոչ՛ Լավրենտի Միրոտաձեն եւ ոչ էլ մանավանդ, կաղ ուսուցիչ Քիոնիա Մսխալաձեն, չնայած բոլորն էլ միաբերան ու ջերմեռանդորեն հաստատում էին, որ Կոմիաման իրենց հյուրն է եղել՝ ա՛յ, ասում էին, տասնհինգ տարի առաջ էստեղ էր նստած, հենց էս տեղում, էս սեղանի մոտ, ու ասում-խոսում-ծիծաղում, հանաք էր անում:

Այդ գիշեր մնացինք Ճոլայի տանը: Քեֆ-ուրախություն էր: Սակայն էդքան սեղաններից հետո էլ ո՛չ սով էինք զգում, ո՛չ ծարավ... Եվ այսուհանդերձ, վրացական շախով-շուխով գյուղի համն ու հոտը ուրիշ է.. Լավ քեֆ արեցինք, ու, երբ պառկեցինք քնելու, կեսգիշերից բավականին

անցել էր արդեն: Կոմիաման՝ ժպիտը դեմքին, մեզ հա մի գլուխ նկարում ու նկարում էր, անտարբեր չգտնվեց նաև սեղանի ուտեստների հանդեպ, իր մի բռաչափ լուսանկարչական ապարատով ամեն մեկին մի կայծեղեն չրխկոց պարգեւեց: Կեսգշերին բակ դուրս եկավ, օդան էլ դրսից նկարեց, բակն էլ ու, եթե չեմ սխալվում, մի քանի անգամ էլ վրացական աստղազարդ երկինքը:

Հաջորդ օրը, կեսօրին, մենք արդեն բռնեցինք Թբիլիսիի ճանապարհը:

Մեր հյուրը ննջում էր:

Ես շատ էի անհանգստանում, որ ճանապարհին նա հանկարծ արեւահար չլինի կամ վիզը անհարմար դիրքում չհայտնվի, ուստի իմ սրամտության շրջանակներում, հենց նկատում էի՝ քնով է ընկնել, արթնացնում էի նրան, և իբրև թե կատակով, բարձրաձայն կանչում՝ Օկրիբա՛:

Կոմիաման գլուխը բարձրացնում էր, դուրս նայում պատուհանից, լիաթոք ծիծաղում ու վանկ առ վանկ էնպե՛ս գեղեցիկ ասում՝ Օ՛- կրի՛- բա՛, ինչպես կարող է ասել Վրաստանին սիրահարված, բայց վրաց լեզուն չիմացող ճապոնացին:

ԿԻՆՈ

Այ՛ մա՛րդ, անընդհատ ասում ենք, թե առաջ ուրիշ կյանք էր, բայց, ախր, մենակ հո կյանքը չէր ուրիշ, է՛... Էդ մե՛նք, մե՛նք էլ էինք ուրիշ... Հա՛, հա՛... ուրիշ էինք, իսկա՛պես ուրիշ: Ա՛յ, մեկը հենց ես, իմ մասին ասեմ, խալխի հետ ի՞նչ գործ ունեմ: Կյանքս կինոյի մեջ էր անցնում՝ մի կինոյից՝ մյուսը... Էն էլ ո՛նց... Կինոն հենց դուրս էր գալի՛ս... Մի անգամ նայելն ի՛նչ էր որ...Մի ամիս անընդհատ նայում էինք ու նայում, մեկ-մեկ էլ՝ մի ամբողջ տարի, հըլը էդ կինոյից երգեր էլ էինք երգում: Կինոն նաև հագուստի, սանրվածքի մոդա էր բերում...Երևի հիշում եք, որ սրանից մի երեսուն տարի առաջ բոլորս Բաշի -Աչուկիի նման սանրվածք ունեինք, մազերն էնպես էինք կտրում, որ ծոծրակի մոտ գանգուրներ լինեին... Բաշի-Աչուկիի[1] նման...

Իսկ հիմա՞... Հիմա՝ ի՞նչ, ա՛յ ախպե՛ր, վրացական նոր ֆիլմ դուրս գա թե չէ, էնպես սուսուփուս կանցնի – կգնա, որ մարդ իսկի չի էլ իմանա: Հեռուստացույցով չեմ ասում, է՛... կենտրոնական կինոթատրոններում էլ ֆիլմեր ցույց չեն տալիս: Կտանեն, կշպրտեն ինչ-որ կորած-մոլորած ակումբ ու... Դե՛, գնա՛ ու նայի՛ր ... Անհարմար եմ զգում, բայց մի բան էլ պիտի ասեմ: Խոսքը՝ մեր մեջ, էս թազա

1 Ակակի Ծերեթելու համանուն վիպակի գլխավոր հերոսը

ֆիլմերից հե՛չ բան չեմ հասկանում... Ախպերս որ դու ես, մենակ կռիվ-դալմաղալ, ուշունց, անպատվություն... Ի՞նչ են խոսու՛մ, ինչի՞ են ջղայնանու՛մ...Բան չեմ հասկանում: Ու դա՝ անընդհատ, է՛, մինչև կինոյի էն ամենա՛, ամենավերջը... Վերջում էլ դուրս եմ գալիս ու, օձիքս վեր քշտած, գողի պես կուզեկուզ եմ տուն գնում՝ վախենալով, որ հանկարծ մարդ -մուրդ ռաստ չգա ու չհետաքրքրվի, թե ինչի՞ մասին էր ֆիլմը, ի՞նչ էին անում, չսկսի խնդրել, թե՝ ախպոր պես, պատմիր էլի՛, ի՞նչ կլինի... Է՝հ, երևի արդեն կյանքից հետ եմ ընկել...Չէ՛, էսպես չեղավ, ուղեղս լրիվ անջատվել է, ոչ բարով աշխարհ գայի, հա՛... Է՝հ, ի՞նչ ասեմ...Երանի չէ՞ր առաջվա վախտերը... Առաջվա ֆիլմերն էլ ի՛նչ լավ էի հասկանում: Համարյա բոլորն անգիր գիտեի... Բոլո՛րն անխտիր... Մե՛կ առ մե՛կ.. Մինչև էսօր էլ լավ հիշում եմ, ախպե՛ր, ո՞ր մեկն ասեմ... «Գիորգի Սաակա՛ձեն», «Արսե՝նը», «Կորուսյալ դրա՛խտը՛», «Զինվորի հա՛յրը», «Մագդանի կապո՛ւյտը»...

Տեսել եմ, ա՛յ մարդ, էս վերջին շրջանում էլ եմ տեսել նոր-նոր ֆիլմեր, բայց որ մորթես, մեկն էլ ա միտքս չի մնացել: Մի ֆիլմ, որ գոնե մինչև կինոսրահից դուրս գալը մտքիդ մեջ չմնա, քեզ մտովի չուղեկցի, էլ ի՞նչ ֆիլմ: Վերջերս ինձ հրավիրել էին կարճամետրաժ ֆիլմերի փառատոնի: Մոտավորապես հինգ կարճ-կարճ կինոնկար ցուցադրեցին: Լսե՞լ եք էսպիսի բան: Ոչ մեկը դուրը չեկավ, սրտիս չկպավ ու վե՛րջ: Ինձ թվում է՝ էս ռեժիսորները կամ ինչ-որ բանում խաբում են կամ ինչ-որ բան են իրենցից մոգոնում կամ էլ կինոապարատն են իզուր տեղը դես ու

դեն տանում – բերում ու դրա անունը դնում կարճամետրաժ ֆիլմ: Բայց.. ա՛յ մարդ, ախր, մեջը մի կարգին բան հո պիտի լինի՞: Հավատա՞մ, որ սցենար չունեն, թե՞... ի՞նչ են ասում դրան , է՛, էն էլի՛, որի հիման վրա ֆիլմ են հանում: Ուրիշի խերին-շառին խառնվող մարդ չեմ ես, ի՞նձ ինչ, թե ով ի՞նչ է անում ու ո՞նց, մեջ ընկնել չեմ սիրում, համ էլ ես ի՞նչ եմ հասկանում կինոյից, որ... Բայց ախր ամեն քայլափոխի կանգնեցնում են, թե՝ բատոնո՛, մի պատմություն ենք խնդրում, էլի՛, կյանքից վերցրած, կինոյին հարմար... Այնինչ իրականում դեսուդեն ընկնելու կարիք բոլորովին էլ չկա: Բավական է պատուհանիցդ մի քիչ դուրս նայես, մեկ – մեկ էլ՝ քուչա -քուչա պտտվես ու ...

Դե, հիմա ես ձեզ կպատմեմ հենց երեկ չէ առաջին օրը ինձ հետ պատահած մի դեպք, ու դուք ինքներդ ասեք՝ կինո՞ է դա, թե՞ կինո չի...

Գնացել էինք Վանի: Հարսանիքի: Գյուղի անունն եմ մոռացել, վա՛յ ինձ... Ինչ-որ մեգրելական անուն էր, որքան հիշում եմ՝ Դիխաշխո.. Դե, հիմա արդեն հարսանիքներին չեն լուսացնում, ու մենք էլ գիշերվա ժամը 12-ին պատրաստվեցինք քնելու: Ախպերս որ դու ես, հարսի կողմից Սաչխերեից ընդամենը չորս հոգի էինք, ու հարևանները գիշերակացի համար հենց տեղում իրար մեջ «բաժանեցին» հյուրերին:

Մենք պիտի լուսացնեինք Գոգորիշվիլիենց տանը: Էդտեղ տարան մեզ: Լավ, ամրապինդ իմերելական օդա ունի մարդը՝ երկու հարկանի հիանալի տուն: Անկողինը վերևի հարկում գցեցին, հենց հյուրասենյակում՝ զալում,

ՅԱՐՈՅՅԱՆ ՀՈՒՇԱՀԱՄԱՅՆ

ինչպես ժողովուրդն է ասում: Դե՛, ես է՛լ...Ասում եմ՝ գիտե՞ք, ես գիշերները վեր կենալու սովորություն ունեմ, մանավանդ, ոնց որ ասում են մեզ մոտ, պախմելիայից[1] հետո...Ու հյուրընկալին հարցնում եմ՝ ո՞րտեղ է ձեր ոտատեղը... Գործն ուզում եմ առաջ տարած լինեմ: Հրե՛ն, ա՛յ, – ասում է ու ...Ա՛յ մարդ, մատնացույց է անում խաղողի այգու ամենավերջը, տնից 50-60 մետր հեռավորության վրա...

Չորսին հեչ մի բան էլ պակաս չէր, որ... ներող եղեք, խնդրում եմ, էս անկարգ միզափամփուշտս քնահարամ արեց ինձ: Տեղիցս վեր կացա:: Բոբիկ – բոբիկ՝ կոշիկներս հագա ու հենց էդպես՝ տրուսիկ – մայկով դուրս եկա պատշգամբ: Նոր էի ոտքս դրել սանդուղքին, երբ ինչ-որ գոմռոց լսեցի: Դու մի ասա՝ էս տնաշենները շանն էին բաց թողել: Հաչում ու հաչում է, էն էլ ո՛նց, դադար չկա...Ինքը փարաքի, քերծե շուն, ձյութի պես սև՛,սև՛, մաջալ չտալով՝ հա մի գլուխ գոմռում ու հաչում է, մեջընդմեջ էլ ատամները ցույց տալիս՝ մի բոպե անգամ աչքը ինձնից չկտրելով: Իսկ էսպիսի շունն ավելի վտանգավոր է, քան էն, որ հաչում է սովորական, իր տիրոջը հասկանալի հաչոցով:

Ի՞նչ անեմ հիմա, մտածում եմ, ի՞նչ վայ տամ գլխիս.... պատշգամբից հո չե՞մ շռի, ղոնաղ մարդ եմ... Առաջին հարկում էլ հյուրընկալներն են քնած...Ուզած – չուզած՝ շան հետ եմ փորձում լեզու գտնել: Աչքով – ունքով, ձեռով –ոտով հասկացնում եմ՝ ախր ես վատ մարդ չեմ, խնդրո՛ւմ եմ քեզ, աղաչու՛մ եմ, պաղա՛տում եմ, թող ոտատեղ գնամ,

1 խումհար

հասկացի՛ր ինձ, ասում եմ, դրությանս մեջ մտի, քեզ հեչ չի՞ պատահել ըսենց բան... Էս արանքում էլ ցուրտը մտավ ջանս, սկսեցի սրթսրթալ: Նոյեմբերի սկզբներին մեզ մոտ էլ են ցրտերն արդեն ընկնում: Վերջում, լավ է, բախտս բերեց. դարպասի կողմից ինչ-որ ձայն լսվեց, ու շունը վռազ-վռազ էն կողմ վազեց: Ես էլ , ինչ խոսք, առիթը չկորցրի ու ինձ զցեցի ոտատեղ: Գործս պրծա, բացեցի ոտատեղի բարալիկ դուռն ու... Շունը հիմա էլ էստեղ չի՞... Հենց ոտքս առաջ էի բերում, որ դուրս գամ, ինքն էր ուզում ներս խցկվել... Ու էդպես զուգարանում կանգնել ու սրթսրթում եմ: Ոչ մի բան չի օգնում, ոչնչով չեմ կարողանում շանը գրավել: Թեև, ինչ մեղքս թաքցնեմ, ուշադիր լսում է ինձ: Ժամանակ առ ժամանակ էլ պոչ է խաղացնում, բայց, ինչպես երևում է՝ մինչև վերջ չի վստահում ինձ. հենց պատրաստվում եմ դուրս գալ, անմիջապես զգաստանում ու սկսում է գոռոալ: Եթե ոչ ավելի, ապա մի ամբողջ ժամ ու կես ոտատեղում փակված մնացի՝ էդպես ցցված – կանգնած ...Մինչև որ աքլորները սկսեցին կանչել, շունն էլ սկսեց ցանկապատի իր առաջին «ստուգայցը»: Ինձ էլ հենց էդ էր պետք. զգույշ, շա՛տ զգույշ, ոտնաթաթերի վրա հասա օդայի սանդուղքին և էն է հա մտածեցի՝ վե՛րջ՝ ազատությու՛ն, էս անգամ էլ շան գոռոցը լսեցի պատշգամբից: Ա՛յ մարդ, ասում եմ, էս ո՞նց հասավ էստեղ, ո՞ր ճամփով եկավ, երբ հասցրեց իմ հետևից պատշգամբ բարձրանալ: Հիմա ի՞նչ անեմ, ո՞ր քարովը տամ գլուխս, ո՞ր ջուրն ընկնեմ: Ճարահատյալ էլի իրեն եմ նայում՝ ախր ղոնախ մարդ եմ, ասում եմ, թե չես հավատում, ա՛յ, նայիր, տես՝ հյուրասենյակում

ეროვნული ბიბლიოთეკა

գողինքս բացած, ի՞նչ է՝ բա՞ն ես տեսել ձեռքիս մեջ , ախր էս կեսգիշերին ի՞նչ պիտի լինի, լավ էլի՛, հասկացնում եմ, գիշերհանա կյանքս կերար, չե՞ս տեսնում, ասում եմ, որ տրուսիկ –մայկով եմ, էսպես հագնված գող օրումդ տեսած կա՞ս... Բայց... քու մե՛րը չմեռնի... հա՛՝... իսկի բանի տեղ էլ չի դնում:

Ցուրտ է, սրթսրթում եմ, սեփական ատամներս եմ ճկռտացնում, չեմ կարողանում զսպել, ձայնն եմ լսում մինչև անգամ...Էսպես թե շարունակվի, ասում եմ ինձ ու ինձ, մինչև լուս չեմ դիմանա...Ու ստուգում եմ քունքս, երակս: Է լ չեմ համբերում: Ամոթը մի կողմ թողած՝ արդեն գոռում եմ ու, ինչքան կարող եմ, ուժգին դիկդիկացնում՝ ոնց պատահի, որտեղ պատահի, բայց է՛ն ուղղությամբ, որտեղ, պիտի որ պառկած լինեն իմ... մարդասեր հյուրընկալները:

Հո չե՞ս կարծում, թե առաջինը տան մեծը եկավ: Հըլը աղջիկը եկավ ու... Ինձ որ տեսավ էս ողորմելի վիճակում, միանգամից ծիծաղը բռնեց, սկսեց քրքջալ ու ներս փախավ: Հետո մայրն առաջ եկավ՝զգույշ, կամաց-կամաց՝ սմքած ծնկներով, կարկուտի տակ ընկած աքլորի նման կուչ եկած ու սկսեց մի լա՛վ տնտղել ինձ ...Եվ ամենավերջում, ոնց եղավ-չեղավ՝ ավագ Գոգորիշվիլին հրամանք արեց ներկայանալ...

Հիմա դու ինքդ ասա, սա կինոյի պատմություն չի՞, կինո չի՞...





Ռեվազ Միշվելաձեի «Ընտրանի» գրքի ընծայագիրը Անահիտ Բոստանջյանին՝ «Թանկագին Անահիդա Բոստանջյանին՝ փայլուն բանաստեղծին, թարգմանչին, վրաց-հայ բարեկամության մի հիմնաքարին՝ սիրով՝».»

ეროვნული ბიბლიოთეკა

Բովանդակություն
სარჩევი

ԵՐԲ ԱՐՑՈՒՆՔՆ ԷԼ ՑԱՄԱՔԵՑ..... 17
ცრემლიც რომ გათავდა
ԱՐՂԱՆՉԻՆ 22
მეარღნე
ԱՄԵՐԻԿԱՑԻ ՓԵՍԱՆ 38
ამერიკელი სიძე
ՄԱՐԴ ՄԱՐԴԻԿ... 50
კაცნი
ՍԻՐՈ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԸ 67
სიყვარულმისჯილნი
ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊ 83
ჩინური კედელი
Ո՞Վ Է ԻՆՁ ՓՆՏՐՈՒՄ.... 97
ვინ დამეძებს?
ԼՈՒԻԶԱ 120
ლუიზა
ՃԱՊՈՆԱՑԻՆ..... 139
იაპონელი
ԿԻՆՈ 159
კინო

ეროვნული ბიბლიოთეკა

Publicated with the initiative of literary-cultural social organization"**KAMURJ**" and sponsorship of **Ruzan Pogosyan**,
The native Gumri, inhabitant of Germany

Revaz Mishveladze

When the tears are over
(ten novells)

From Georgian translated by Anaida Bostanjyan

რევაზ მიშველაძე

ცრემლიც რომ გათავდა
(ათი ნოველა)

ქართულიდან თარგმნა ანაიდა ბოსტანჯიანმა

Ռեվազ Միշվելաձե

Երբ արցունքն էլ ցամաքեց
(տաս նովել)

Վրաց. թարգմ. Անահիտ Բոստանջյան

2012
ԹԲԻԼԻՍԻ • ТБИЛИСИ • TBILISI

Խմբագիր **Գայանե Բոստանջյան**
Մուտքագրումը՝ **Մարինա Թորոսյան**
Դիզայնը **Իրակլի Խուցիշվիլի**
Դավիթ Ցվարիանի
Սրբագրիչ **Անետա Սարիբեկյան**

რედაქტორი: **გაიანე ბოსტანჯიანი**
ტექსტის აწყობა: **მარინა თოროსიანი**
დიზაინი დაკაბადონება: **ირაკლი ხუციშვილი**
დავით ცვარიანი
კორექტორი: **ანა სარიბეკიანი**

Editor: **Gayane Bostanjyan**
Typing: **Marina Torosyan**
Layout and design: **Irakli Khutsishvili**
David Tsvariani
Corrector: **Anna Saribekyan**

2012
ԹԲԻԼԻՍԻ • ᲗᲑᲘᲚᲘᲡᲘ • TBILISI

ეროვნული
ბიბლიოთეკა

Գրքում և շապիկին օգտագործված են նմուշներ Նիկո Փիրոսմանու, Մայիս Մխիթարյանի, Արա Բաղդասարյանի աշխատանքներից, ինչպես նաև Ալեքսանդր Սահակովի, Վալերի Հունանյանցի, Յուրի Ակուլյանի և այլոց լուսանկարչական նյութեր

გარეკანზე და წიგნში გამოყენებულია ფრაგმენტები ნიკო ფიროსმანის, მაის მხითარიანის, არა ბაღდასარიანის ნამუშევრებიდან ასევე ალექსანდრე სააკოვის, ვალერი ჰუნანიანცის, იური აკულიანის და სხვათა ფოტომასალა

On the cover and in the book are used fragments of works by Niko Pirosmani, Mais Mkhitaryan, Ara Bagdasaryan, also different photos by Alexander Saakov, Valeri Hunanyants, Jury Akulyan and others

ეროვნული ბიბლიოთეკა
ი 7/464

2012
ТБИЛИСИ • თბილისი • TBILISI

Т. 14. 084
3

ՌԵՎԱԶ ՄԻՇՎԵԼԱՁԵ

Այս պիկոն, բառակապ գրքերում գրականությունը եղել և մնում է այն կայծիկն, որի առկայությամբ մեկ գրքեր շունչ ենք քաշում:

Ռևազ Միշվելաձե

Ծնվել է 1940-ին, Սուխումիի շրջանի Բաբուշերա գյուղում: Ավարտել է ԹՊՀ բանասիրական ֆակուլտետը: Թբիլիսիի պետական համալսարանի ժամանակակից վրաց գրականության պատմության ամբիոնի վարիչն է: 1999-2003թ.թ. եղել է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր: Հեղինակ է շուրջ 150 գրական, քննադատական մենագրությունների, բուհական դասագրքերի: Հիմնադիր խմբագիրն է «Մծերլիս գաղեթի»(«Գրողի թերթ»)թերթի, ինչպես նաև Վրաց նովելի թատրոնի: Ավելի քան 500 նովելի, պատմվածքների, պիեսների հեղինակ է: Թարգմանվել է աշխարհի 50-ից ավելի լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ճապոներեն, իսպաներեն. ռումիներեն, հունգարերեն, բուլղարերեն, հայերեն, չեխերեն, ուկրաիներեն, հունարեն, ֆրանսերեն, իտալերեն... Հեղինակային գրքերով հրատարակվել է ավելի քան 20 լեզուներով:

9 789941 037122 >